

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

N^o 28-29

2022

ԵՐԵՎԱՆ 2022

Գլխավոր խմբագիր՝ Արմեն ՓԱՇԱՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Համլետ ԴԱՎԹՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Արմեն ՓԱՇԱՅԱՆ - ԳԹԿ տնօրեն
Կարո ՆԱՍԻԲՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն
Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն
Ալեքսան ԵՍԱՅԱՆ - ԳԹԿ թեստաբանության բաժնի պետ
Էդվարդ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ - ԳԹԿ քննությունների կազմակերպման բաժնի
պետ
Արմեն ՂԱԶԱՆՉՅԱՆ – ԳԹԿ համակարգչային և վերլուծական
աշխատանքների բաժնի պետ
Լիլիթ ՍԱՖԱՐՅԱՆ - ԳԹԿ իրավաբանական բաժնի պետ
Համլետ ԴԱՎԹՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի պետ
Աշոտ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի գլխավոր
մասնագետ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Այգեստան 9/4
Հեռ. (+374 10) 55-32-65
E-mail: gtk2005@web.am
www.atc.am

ՎԵՐԼՈՒԾՈՒ - ԹՅՈՒՆ



Շուշանիկ ՆԻՎՈՂՈՍՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
գլխավոր մասնագետ

2021 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները

ՆԱԽԱԲԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնի իրականացրած սույն վերլուծությունը վերաբերում է 2021 թ. հունիս-հուլիս ամիսներին անցկացված միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքներին: Այն նախատեսված է հանրակրթության ոլորտի մասնագետների և կրթության խնդիրներով հետաքրքրվող անհատների լայն շրջանակի համար:

2021 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների ամփոփիչ վերլուծությունն¹ ամեն տարի իրականացվում է մի քանի ուղղություններով:

¹ Վերլուծության մեջ ներառված չեն զուտ ներքուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերին (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ և այլն) վերաբերող տեղեկությունները:

- Վերլուծվում են միասնական քննությունների ընդհանուր արդյունքները և համեմատվում նախորդ տարիների քննությունների արդյունքների հետ:
- Հետազոտվում են առարկայական թեստերը և թեստային առաջադրանքներն ըստ կառուցվածքի և որակական բնութագրիչների: Թեստերը բարելավելու նպատակով վերլուծության այդ մասը տրամադրվում է առարկայական մասնագետներին:
- Վերլուծության են ենթարկվում միասնական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի տիպերի (քաղաք, գյուղ), հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի և դիմորդների սեռերի:
- Անդրադարձ է կատարվում բուհերի ընդունելության մրցույթին, ներկայացվում են ամենապահանջված մասնագիտությունների վերաբերյալ տեղեկություններ:
- Առանձին անդրադարձ է կատարվում միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքներին՝ սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերի կտրվածքով:
- Երևանի քաղաքապետին և մարզպետներին են տրամադրվում վիճակագրական տվյալներ միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերաբերյալ՝ տվյալ վարչատարածքային միավորի կտրվածքով:

Վերլուծության առաջին մասը վերաբերում է միասնական քննություններին, երկրորդը՝ բուհերի ընդունելության մրցույթին:

I. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կարգի² համաձայն, 2021 թ. բուհերի ընդունելության քննությունների և մասնագիտության առցանց (dimord.am կայքում) հայտագրումն անցկացվել է երկու փուլով, առաջինը՝ ապրիլի 15-ից մինչև մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում երկրորդը՝ հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը:

2021 թ. միասնական քննություններ են հայտագրել Հայաստանի, Արցախի և արտերկրի 12043 դիմորդներ, որոնցից 11450-ը՝ հայտագրման առաջին փուլում, 593-ը՝ երկրորդ փուլում: Վերջիններից 439-ն առաջին անգամ հայտագրվել են երկրորդ փուլում, իսկ 154-ը հայտագրված են եղել նաև առաջին փուլում: 12043 դիմորդներից 11512-ը հայտագրվել են ՀՀ-ում, 531-ը՝ Արցախում: ՀՀ-ում հայտագրվածներից 11127-ը եղել են Հայաստանի, 190-ը՝ Ռուսաստանի, 105-ը՝ Արցախի, 75-ը՝ Վրաստանի, 15-ը՝ այլ երկրների քաղաքացիներ: Երկրորդ փուլում առաջին անգամ հայտագրված 439 դիմորդներից 343-ը եղել են Հայաստանից, 57-ը՝ Վրաստանից, 22-ը՝ Արցախից, 15-ը՝ Ռուսաստանից, 1-ը՝ Լեհաստանից և 1-ը՝ Սիրիայից:

Միասնական քննությունների հիմնական փուլն անցկացվել է 2021 թ. հունիսի 8-ից 25-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետության 36 և Արցախի Հանրապետության 5 քննական կենտրոններում: Լրացուցիչ փուլի քննություններն անցկացվել են հուլիսի 2-8-ը: Միասնական քննություններ են անցկաց-

² Տե՛ս «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրի) կարգ»: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151376>

վել «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Համաշխարհային պատմություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, պարսկերեն), «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Միասնական քննությունների ժամանակացույցը ներկայացված է սույն վերլուծության «Հավելվածներ» բաժնում:

2021 թվականի շրջանավարտ են եղել ՀՀ-ից, ՌԴ-ից, Վրաստանից, Արցախից միասնական քննություն հայտագրած դիմորդներից 11437-ը, իսկ այլ երկրներից՝ 14-ը: Նախորդ տարիների շրջանավարտներից 2021 թվականին միասնական քննություն է հայտագրել 405-ը (ՀՀ-ից՝ 379, Արցախից՝ 12, Վրաստանից՝ 9, ՌԴ-ից՝ 4, Բելառուսից՝ 1 դիմորդ), որոնցից 228-ը դաբոցն ավարտել է 2020 թվականին: Դիմորդներից ամենաավագը եղել է 1953 թվականի շրջանավարտ:

Բոլոր քննություններն անցկացվել են առարկայական թեստերի 4-ական տարբերակներով, հիմնական փուլում՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ, լրացուցիչ փուլում՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ: Թեստերի հեղինակներն օգտվել են առարկայական «Շտեմարանների» առաջադրանքներից և առաջադրանքներ են կազմել ներկայումս օգտագործվող դասագրքերի թեմաների շրջանակներում: Նրանց հնարավորություն է տրվել նաև «Շտեմարանների» որոշ առաջադրանքներում կատարելու բառերի կամ թվերի փոփոխություններ և դրանց հիման վրա կազմելու նոր առաջադրանքներ:

Օտար լեզվի քննության մասնակիցներն ընտրել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսաց լեզու, իսպաներեն կամ պարսկերեն լեզուներից որևէ մեկը:

Միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի ընթացքը պարբերաբար լուսաբանվել է լրատվամիջոցներով:

1.1 ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 2021 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2021 թ. միասնական քննություններին մասնակցելու հայտ ներկայացրած, քննության մասնակցած, բացակայած, քննության անցկացման կարգը խախտելու պատճառով քննությունից հեռացված և հիվանդության պատճառով քննությունն ընդհատած դիմորդների թվերը:

Աղյուսակ 1. Դիմորդների մասնակցությունը 2021 թ. միասնական քննություններին


Քննական առարկաները	Հայտագրվածների թիվը	Մասնակիցների թիվը	Բացակայների թիվը	Հեռացվածների թիվը	Հիվանդ. պատճ. ընդհատածների թիվը
Մաթեմատիկա	5375	5234	138	1	2
Անգլերեն	4447	4386	58	3	
Հայոց լեզու և հայ գրականություն	4175	4115	59	1	
Ֆիզիկա	1490	1381	109		
Հայոց պատմություն	1489	1457	32		
Կենսաբանություն	1464	1394	69	1	
Քիմիա	1203	1146	55	2	
Ռուսաց լեզու	296	277	19		
Աշխարհագրություն	189	189			
Գերմաներեն	86	85	1		
Տրանսերեն	74	74			
Համաշխարհային պատմություն	31	29	2		
Իսպաներեն	2	2			
Պարսկերեն	2	2			

Միասնական քննություններից բացակայածների թիվը կազմել է հայտագրվածների թվի 1.2-6.5%-ը: Աշխարհագրության, ֆրանսերենի, իսպաներենի և պարսկերենի քննություններին ներկայացել են բոլոր հայտագրված դիմորդները:

1.2 ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏԱԳՐԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

Դիագրամ 1-ում, որտեղ ներկայացված են 2008-2021 թվականներին միասնական քննություններին մասնակցության հայտ ներկայացրած դիմորդների թվերը, երևում է, որ 2021 թ. միասնական քննություն հայտագրածների թիվը 2020-ի համեմատությամբ նվազել է 764-ով:

Դիագրամ 1. Միասնական քննություններ հայտագրած դիմորդների թվերը ըստ տարիների



2011 թվականին դիմորդների ընդհանուր թիվը մոտ յոթ անգամ պակաս է եղել 2010 և 2012 թթ. դիմորդների թվից, քանի որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները, 12-ամյա հանրակրթական համակարգի անցմամբ պայմանավորված, 2010-2011 ուսումնական տարում շրջանավարտ չեն ունեցել:

Մինևոյն պատճառով 2017 և 2019 թվականների համեմատությամբ 2018-ին հայտագրվածների թիվը պակաս է եղել գրեթե կրկնակի:

2007-2021 թթ. միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները ներկայացված են հավելված 5-ում:

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2021 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Աղյուսակ 2-ում ներկայացված են 2021 թվականի միասնական քննությունների մասնակիցների թվերը³, միջին⁴ միավորները, ինչպես նաև դրական միավորի շեմը չհաղթահարած և 18-20 միավոր հավաքած դիմորդների թվերը և տոկոսները:

Աղյուսակ 2. 2021 թ. միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Քննական առարկաները	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների		18-20 միավոր հավաքած դիմորդների	
			թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Մաթեմատիկա	5234	10.4	1210	23.1	253	4.8
Անգլերեն	4386	14.5	374	8.5	1261	28.8
Հայոց լեզու և հայ գրականություն	4115	12.3	538	13.1	449	10.9
Հայոց պատմություն	1457	14.6	155	10.6	539	37.0
Կենսաբանություն	1394	12.5	315	22.6	317	22.7
Ֆիզիկա	1381	12.4	312	22.6	285	20.8
Քիմիա	1146	13.0	219	19.1	282	24.6
Ռուսաց լեզու	277	12.2	36	13.0	27	10.4
Աշխարհագրություն	189	14.0	19	10.1	43	22.8
Գերմաներեն	85	13.8	11	12.9	13	15.3
Ֆրանսերեն	74	14.7	6	8.1	23	31.1
Համաշխարհային պատմություն	29	13.2	7	24.1	7	24.1
Իսպաներեն	2	12.1				
Պարսկերեն	2	13.5				

³ Մասնակիցների թվից կախված է միջին միավորի հուսալիությունը. մասնակիցների թվի մեծ լինելը նպաստում է ստանդարտ շեղման նվազմանը, որի արդյունքում միջին միավորը դառնում է հուսալի:

⁴ Միջին միավորը բնութագրում է քննություն հանձնողների պատրաստվածության միջին մակարդակը:

**3. 2021 թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ,
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ ԵՎ ԸՍՏ
ԴԻՍՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԵՐԻ**

**3.1. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՅԼ
ԵՐԿՐՆԵՐԻՑ ՄԱՍՆԱԿՑԱԾՆԵՐԻ**

Աղյուսակ 3-ում ներկայացված են ՀՀ վարչատարածքային միավորներից, ինչպես նաև այլ երկրներից 2021 թ. միասնական քննություններին մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորները: Աղյուսակում մգացված են տվյալ առարկայի քննության ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշների վանդակները: Մգացված շրջանակներում ներկայացված են վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորները: Միջին միավորների բացարձակ առավելագույն ցուցանիշները ներկայացված են կլոր շրջանակներում:

Աղյուսակ 4-ում տեսնում ենք, որ բոլոր քննություններից վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներն ունեցել են Հայաստանի քաղաքացիություն ունեցող դիմորդները: Բացարձակ առավելագույն միջին միավորներ են ունեցել Հայաստանի (կենսաբանությունից, քիմիայից, աշխարհագրությունից, ռուսաց լեզվից, ֆրանսերենից), Ռուսաստանի (հայոց լեզվից և հայ գրականությունից, հայոց պատմությունից, ֆիզիկայից, գերմաներենից) և Միրիայի (մաթեմատիկայից, անգլերենից) քաղաքացիություն ունեցողները:

3.2. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 5-ում ներկայացված են 2021 թ. միասնական քննությունների միջին միավորներն ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի (քաղաքներ և գյուղեր), ինչպես նաև այդ քննությունների ընդհանուր միջին միավորները: Ուսումնասիրվել են ՀՀ քաղաքացի դիմորդների տվյալները:

Քաղաքային բնակավայրերն ըստ բնակչության թվի տարբերակվել են խոշոր, միջին և փոքր քաղաքների: Վերջին երկու ենթատիպերի դիմորդների թիվը և միջին միավորներն ուսումնասիրվել են միասին վերցրած: Աղյուսակի՝ խոշոր քաղաքներին վերաբերող մասը պարունակում է և՛ ՀՀ երեք խոշոր քաղաքների (Երևանի, Գյումրու և Վանաձորի) դիմորդների ընդհանուր թվերն ու միջին միավորները, և՛ միայն Երևանի դիմորդներինը:

Գյուղական բնակավայրերի ցուցանիշները ներկայացվել են ընդհանուր հաշվարկով, ինչպես նաև՝ սահմանամերձ⁵, բարձրլեռնային և բարձրլեռնային սահմանամերձ գյուղերի համար առանձին-առանձին:

Սյունակների մզացված վանդակներում ըստ քննական առարկաների ներկայացված են ընդհանուր միջին միավորը գերա-

⁵ **Սահմանամերձ բնակավայրերի** ցանկը 2017 թ. միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներում թարմացվել է համաձայն «ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 17.11.1998 թ. N 713 որոշման 31.07.03 N 940-Ն, 14.04.04 N 492-Ն, 01.09.05 N 1490-Ն, 21.06.07 N727-Ն լրացումների:

Աղյուսակ 5-ում երևում է, որ բարձր են եղել հատկապես միջին և փոքր քաղաքների դիմորդների հավաքած միջին միավորները: Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերի դիմորդների միջին միավորները մեծամասամբ բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին միավորից, սակայն հիմնականում եղել են վիճակագրորեն ոչ նշանակալի:

Ընդհանուր առմամբ, խոշոր քաղաքների դիմորդները վիճակագրորեն բարձր միջին միավորներ են արձանագրել գերմաներենից, միջին և փոքր քաղաքների դիմորդները՝ մաթեմատիկայից, անգլերենից, հայոց լեզվից և հայ գրականությունից, հայոց պատմությունից, կենսաբանությունից և քիմիայից, գյուղերի դիմորդները՝ ռուսաց լեզվից, ֆրանսերենից և համաշխարհային պատմությունից:

Առանձին հետազոտվել են սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերի դիմորդների արդյունքները, որոնք թեև մասնակիցների փոքր թվով պայմանավորված՝ հիմնականում եղել են վիճակագրորեն ոչ նշանակալի, այդուհանդերձ ուշադրության արժանի են հատկապես սահմանամերձ գյուղերի դիմորդների արդյունքները: Այսպես, ֆիզիկայից, գերմաներենից և համաշխարհային պատմությունից արձանագրված բացարձակ առավելագույն միջին միավորներ են ունեցել սահմանամերձ գյուղերի, իսկ աշխարհագրությունից՝ բարձրլեռնային գյուղերի դիմորդները:

Աղյուսակ 6-ում և աղյուսակ 7-ում ներկայացված են սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերից միասնական քննություններին 1-ից ավելի մասնակիցներ ունեցած և միջինում 18-20 միավորներ արձանագրած դպրոցների արդյունքները:

Աղյուսակ 6. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած սահմանամերձ գյուղերի դպրոցները

Վարչատարածքային միավորը	Ոսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Քննության մասնակիցների թիվը	Միջին միավորը
Անգլերեն				
Արմավիր	Ջանֆիդայի միջնակարգ դպրոց	23	2	18.0
Սյունիք	Ագարակի միջնակարգ դպրոց	39	4	19.1
Տավուշ	Բագրատաշենի թիվ 1 միջն. դպր.	24	2	19.5
	Բաղանիսի միջնակարգ դպրոց	4	3	19.5
Հայոց պատմություն				
Արարատ	Լուսառատի միջնակարգ դպրոց	20	2	19.4
Սյունիք	Ագարակի միջնակարգ դպրոց	39	3	18.5
Ֆրանսերեն				
Տավուշ	Աչաջրի միջնակարգ դպրոց	42	4	18.5

Աղյուսակում տեսնում ենք, որ սահմանամերձ գյուղերում արձանագրված ամենաբարձր միջին միավորը եղել է անգլերենից՝ 19.5 (Տավուշի մարզի Բագրատաշենի թիվ 1 և Բաղանիսի միջնակարգ դպրոցներ):

Աղյուսակ 7. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած բարձրլեռնային գյուղերի դպրոցները

Վարչատարածքային միավորը	Ոսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Քննության մասնակիցների թիվը	Միջին միավորը
Անգլերեն				
Գեղարքունիք	Սարուխանի թիվ 3 միջն. դպրոց	16	2	19.0
Հայոց պատմություն				
Գեղարքունիք	Վաղաշենի միջնակարգ դպրոց	40	3	18.1
Գերմաներեն				
Արագածոտն	Նորաշենի միջնակարգ դպրոց	11	2	18.6

Բարձրլեռնային գյուղերում ևս արձանագրված ամենաբարձր միջին միավորը եղել է անգլերենից՝ 19.0 (Գեղարքունիքի մարզի Սարուխանի թիվ 3 միջնակարգ դպրոց):

3.3. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 8-ում ներկայացված են միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի (ավագ և միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ և այլն): Դիտարկվել են 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների արդյունքները: Աղյուսակում «Այլ ուսումնական հաստատություններ» սյունը ներկայացնում է քոլեջներից և մասնագիտացված ուսումնական հաստատություններից միասնական քննություններ հանձնած դիմորդների արդյունքները: Մզացված վանդակներում ներկայացված են տվյալ առարկայի քննության ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշները, իսկ մզացված շրջանակում ներկայացած են վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորները: Միջին միավորների բացարձակ առավելագույն ցուցանիշները ներկայացված են կլոր շրջանակներում:

Աղյուսակ 8. Միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի*
(2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտներ)

Ֆնանսական առարկաները	Ավագ դպրոցներ		Միջնակարգ դպրոցներ		Վարժարաններ		Կրթահամալիրներ		Ոչ պետական ուս. հաստատ. (ՍՊՈՒ-ներ)		Այլ ուսումնական հաստատություններ		Ըմբռնվող ընդհանուր
	Միավ. վճարված	Միավ. գումար	Միավ. վճարված	Միավ. գումար	Միավ. վճարված	Միավ. գումար	Միավ. վճարված	Միավ. գումար	Միավ. վճարված	Միավ. գումար	Միավ. վճարված	Միավ. գումար	
Մաթեմատիկա	2235	10.4	1561	10.1	721	11.8	24	13.7	69	11.2	30	7.7	10.4
Անգլերեն	2389	14.6	1110	14.1	421	15.3	28	16.1	88	14.8	16	14.9	14.5
Հայոց և հայ գրականություն	1738	12.7	1530	12.5	252	12.8	17	15.2	41	12.7	6	9.0	12.3
Հայոց պատմություն	731	15.1	425	14.3	109	15.3	10	17.3	35	15.7	3	16.8	14.6
Կենսաբանություն	758	13.4	310	11.5	92	12.5	15	14.6	18	15.5			12.5
Ֆիզիկա	538	11.6	366	12.8	321	14.1	8	13.4	18	14.2	5	7.1	12.4
Ֆիլմա	662	13.4	209	12.8	88	12.5	14	15.3	15	16.9	1	6.5	13.0
Ռուսաց լեզու	121	12.1	57	13.2	33	14.4			1	14.25			12.2
Աշխարհագրություն	65	15.1	93	13.4	10	16.2			1	6.0			14.0
Գեղարվեստ	31	14.7	43	13.7	3	16.1			1	15.5			13.8
Ֆրանսերեն	42	14.6	18	15.6	3	13.1			5	17.0			14.7
Համաշխարհ. պատմություն	9	12.0	15	14.3	4	11.7							13.2
Իսպաներեն	1	9.75	1	14.5									12.1
Պարսկերեն			1	10.25									13.5

*- Եթե քննությունը մտանակցել է 1 դիմորդ, սպա կրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակ 8-ում տեսնում ենք, որ ընդհանուր միջին միավորներից ցածր ցուցանիշներով առանձնացել են հատկապես միջնակարգ դպրոցները, բարձրերով՝ կրթահամալիրները, վարժարանները և ավագ դպրոցները: Վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորների քանակով առաջատարը եղել են վարժարանները: Բացարձակ ամենաբարձր ցուցանիշներ են ունեցել կրթահամալիրները (մաթեմատիկայից, անգլերենից, հայոց լեզվից և հայ գրականությունից, հայոց պատմությունից), ոչ պետական ուսումնական հաստատությունները (կենսաբանությունից, ֆիզիկայից, քիմիայից, ֆրանսերենից) և վարժարանները (ռուսաց լեզվից, գերմաներենից, աշխարհագրությունից), սակայն դրանք եղել են ոչ նշանակալի, քանի որ քննությունների մասնակիցները եղել են փոքրաթիվ: Համաշխարհային պատմությունից ամենաբարձր միջին միավորն արձանագրել են միջնակարգ դպրոցների ղիմորդները:

Աղյուսակ 9-ում ներկայացված են միասնական քննությունների 1-ից ավելի մասնակից ունեցած և 18-ից բարձր միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները:

Աղյուսակ 9. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանակազմի միավորներ	Միավորների թիվը	Միավորների թիվը	Միջին միավոր	Հարց լեզու և հայ գրականություն					
						Երևան	Երևան	Մյուսնիք	Մյուսնիք	Մյուսնիք	Մյուսնիք
Հարց պատմություն											
Կոտայք	Չարնեցավանի ակադ դպրոց	173	20	18.1							
Երևան	«Ավառնիական» ակադ դպրոց	68	16	18.6							
Մյուսնիք	Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց	58	6	18.7							
Երևան	«Քվանտ» վարժարան	63	5	18.7							
Վարչո ձոր	Եղեգնաձորի ակադ դպրոց	86	5	18.3							
Մյուսնիք	Գարինի թիվ 1 ակադ դպրոց	58	4	18.5							
Կոտայք	Հրազդանի թիվ 1 ակադ դպրոց	60	4	18.9							
Շիրակ	Սիսուրյանի ակադ դպրոց	47	4	18.1							
Երևան	«Երևան» կրթահամալիր	80	3	19.5							
Մյուսնիք	Ազարանի միջնակարգ դպրոց	44	3	18.5							
Արմավիր	Քարավերտի թիվ 2 միջնակարգ դպրոց	40	3	19.9							
Տավուշ	Լոյսմերյանի ակադ դպրոց	48	3	18.2							
Վարչո ձոր	Վարդի ակադ դպրոց	24	3	18.4							
Կոտայք	Բջինի միջնակարգ դպրոց	13	3	18.3							
Կոտայք	Զարավանի միջնակարգ դպրոց	24	3	18.7							
Պեղարքունիք	Մարտունու ակադ դպրոց	39	3	19.5							
Պեղարքունիք	Վարաշենի միջնակարգ դպրոց	12	3	18.2							
Արմավիր	Մյասնիկյանի միջնակարգ դպրոց	45	2	19.6							
Արմավիր	Նորասպատի միջնակարգ դպրոց	23	2	19.1							
Կոտայք	Մուղանի միջնակարգ դպրոց	14	2	19.5							
Կոտայք	Քարսիի միջնակարգ դպրոց	20	2	18.7							
Շիրակ	Ազատանի միջնակարգ դպրոց	272	2	19.9							
Հարց լեզու և հայ գրականություն											
Երևան	«Շիրակացու ճեմարան» միջնակարգ գիտակրթական համալիր	100	2	19.4							
Շիրակ	Գեղանիստի միջնակարգ դպրոց	14	2	18.6							
Շիրակ	Սպանդարյանի միջնակարգ դպրոց	12	2	18.3							
Շիրակ	Հաջինի միջնակարգ դպրոց	8	2	19.0							
Սեզիոններ											
Արարատ	Հովտաշատի միջնակարգ դպրոց	39	5	18.2							
Արարատ	Գետազատի միջնակարգ դպրոց	18	4	18.5							
Արագածոտն	Թաթուլի միջնակարգ դպրոց	10	4	18.1							
Մյուսնիք	Ազարանի միջնակարգ դպրոց	39	4	19.1							
Կոտայք	Անուշի միջնակարգ դպրոց	23	4	18.2							
Երևան	«Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամ	11	3	18.0							
Երևան	«Վարդանանք» կրթահամալիր	6	3	19.2							
Արարատ	Արևշատի միջնակարգ դպրոց	18	3	18.2							
Տավուշ	Բաղանիսի միջնակարգ դպրոց	4	3	19.5							
Պեղարքունիք	Կարճաբլուրի միջնակարգ դպրոց	33	3	18.2							
Արարատ	Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց	27	3	18.9							
Լոռի	Քարինի միջնակարգ դպրոց	9	2	18.4							
Արմավիր	Հաջինի միջնակարգ դպրոց	20	2	18.0							
Շիրակ	«Հայրենասկ» համ. «Շիրակացի» մ. դ.	3	2	19.1							
Տավուշ	Բազատաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց	24	2	19.5							
Արմավիր	Անուշի միջնակարգ դպրոց	10	2	18.0							
Արմավիր	Լուկաշինի միջնակարգ դպրոց	17	2	18.9							

Արարատ	Լուսառատի միջնակարգ դպրոց	10	2	19.4	Արմավիր	Գեառուշենի միջնակարգ դպրոց	17	2	19.1
Գեղարքունիք	Գավարի թիվ 2 միջնակարգ դպրոց	183	2	19.8	Վայոց ձոր	Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոց	21	2	18.7
Գեղարքունիք	Դրվաշենի միջնակարգ դպրոց	41	2	18.3	Երևան	ՄՊՀ մասնաճյուղի Երիցյան վարժ.	52	2	18.4
Շիրակ	Արևշատի միջնակարգ դպրոց	14	2	19.1	Արմավիր	Լուրավանի միջնակարգ դպրոց	12	2	18.9
Շիրակ	Մուսալեյանի միջնակարգ դպրոց	13	2	19.7	Արմավիր	Ճանձիբալի միջնակարգ դպրոց	23	2	18.0
Շիրակ	Սառառաբարդի միջնակարգ դպրոց	23	2	18.1	Գեղարքունիք	Սարուխանի թիվ 3 միջն. դպրոց	16	2	19.0
Երևան	ԵՊԷՀ-ի «Հերացի» ավագ դպրոց	17	2	18.7	Վեներաբուհություն				
Երևան	ՀՄՊՀ Երևանի ավագ դպրոց	32	2	19.7	Գեղարքունիք	Սևանի ավագ դպրոց	60	7	18.0
Լոռի	Վանաձորի թիվ 24 միջն. դպրոց	8	2	19.5	Գեղարքունիք	Գավարի թիվ 2 միջնակարգ դպրոց	23	4	18.7
Քիմիա					Երևան	Թիվ 46 ավագ դպրոց	94	2	18.5
Երևան	«Քվևտո» վարժարան	86	9	19.2	Շիրակ	Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոց	14	2	18.5
Կոտայք	Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց	117	9	18.5	Սյունիք	Անգեղակոթի միջնակարգ դպրոց	18	2	19.7
Սյունիք	Գորիսի թիվ 1 ավագ դպրոց	60	8	18.4	Արմավիր	Գայի միջնակարգ դպրոց	24	2	19.0
Արմավիր	«Էօրենկեան» միջնակարգ դպրոց	36	5	19.0	Լոռի	Ստեփանավանի վարժարան	31	2	18.5
Գեղարքունիք	Գավարի թիվ 2 միջնակարգ դպրոց	23	4	18.3	Արարատ	Վերին Արտաշատի միջն. դպրոց	27	2	18.7
Սյունիք	Անգեղակոթի միջնակարգ դպրոց	18	2	19.5	Շիրակ	Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց	19	2	18.0
Շիրակ	Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոց	14	2	18.2	Ֆրանսերեն				
Արարատ	Մխչյանի միջնակարգ դպրոց	39	2	18.0	Կոտայք	Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց	105	3	18.7
Ֆիզիկա					Տավուշ	Աչաջրի միջնակարգ դպրոց	42	4	18.5
Լոռի	Վանաձորի մարթեմ. և բնագ. ստարիկ խոր. ուսուց. հ. դպրոց	26	8	18.2	Մաթեմատիկա				
Տավուշ	Բջնանի ավագ դպրոց	107	7	18.4	Արմավիր	Զրառատի միջնակարգ դպրոց	20	2	18.1
Լոռի	Մախտակի ավագ դպրոց	72	4	18.0	Աշխարհագրություն				
Արարատ	Մլղավետի միջնակարգ դպրոց	20	2	18.5	Սյունիք	Գորիսի թիվ 4 ավագ դպրոց	131	2	18.1
Վայոց ձոր	Ազարակաձորի միջնակարգ դպրոց	8	2	19.7	Գերմաներեն				
Արագածոտն	Ակուկի միջնակարգ դպրոց	5	2	19.0	Արագածոտն	Լուրաշենի միջնակարգ դպրոց	11	2	18.6
Արարատ	Արևշատի միջնակարգ դպրոց	18	2	19.2	<i>18-20 միջնակարգում միջին միավորներ չեն ստանալուցրվել, առևտայ էզվից:</i>				
Երևան	Թիվ 99 միջնակարգ դպրոց	19	2	18.2					

3.4. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ

2021 թվականին միասնական մեկ կամ երկու քննություն է հանձնել իգական սեռի 6773 (57.7%) և արական սեռի 4971 (42.3%) դիմորդ: Նրանցից 2021 թվականի շրջանավարտ են եղել 6627 աղջիկ (աղջիկների 97.8%-ը) և 4822 տղա (տղաների 97%-ը):

Աղյուսակ 10-ում ըստ դիմորդների սեռերի ներկայացված են միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Մգացված են յուրաքանչյուր քննության ընդհանուր միջին միավորը գերազանցող ցուցանիշների վանդակները, իսկ հաստացված շրջանակով ներկայացված են ամենաբարձր միջին միավորներն ըստ առարկաների:

Աղյուսակ 10. 2021 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ դիմորդների սեռերի*

Քննական առարկաները	Իգական սեռ		Արական սեռ		Ընդհանուր միջին միավորը
	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	
Մաթեմատիկա	1873	11.4	3356	9.9	10.4
Անգլերեն	3033	15.0	1353	13.4	14.5
Հայոց լեզու և հայ գրականություն	3249	12.8	866	10.6	12.3
Հայոց պատմություն	854	15.3	603	13.5	14.6
Կենսաբանություն	851	13.1	543	11.6	12.5
Քիմիա	703	13.3	443	12.5	13.0
Աշխարհագրություն	109	14.9	80	12.8	14.0
Ֆիզիկա	302	13.8	1067	12.0	12.4
Ռուսաց լեզու	181	13.2	93	10.4	12.2
Գերմաներեն	65	14.1	20	13.0	13.8
Ֆրանսերեն	67	14.7	7	14.2	14.7
Համաշխարհային պատմություն	19	13.7	10	12.1	13.2
Իսպաներեն	2	12.1			12.1
Պարսկերեն	1	16.75	1	10.25	13.5

*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Ինչպես երևում է աղյուսակ 10-ում, աղջիկների հավաքած միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին և տղաների հավաքած միջին միավորներից: Իգական և արական սեռերի դիմորդների վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներն արձանագրվել են հայոց պատմությունից (համապատասխանաբար՝ 15.3 և 13.5), ամենացածրը՝ մաթեմատիկայից (համապատասխանաբար՝ 11.4 և 9.9): Իսպաներենի քննությանը մասնակցել են միայն աղջիկներ:

4. ԹԵՍՏԵՐ ԵՎ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

2021 թ. միասնական քննությունների թեստերը կազմվել են առարկայական «Շտեմարաններում» առկա առաջադրանքներից, «Շտեմարանների» առաջադրանքների և դասագրքերում զետեղված թեմաների հիման վրա կազմված նոր առաջադրանքներից:

Հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, մաթեմատիկայի և բնագիտական առարկաների թեստերը կազմված են եղել ընտրովի, կարճ պատասխանով առաջադրանքներից և պնդումների փնջերից, օտար լեզուներինը՝ ընտրովի և կարճ, համաշխարհային պատմությանը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներից: Թեստերի կառուցվածքի և գնահատման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են հավելված 4-ում:

Աղյուսակ 11-ում ներկայացված են միասնական քննությունների հիմնական փուլի թեստերի միջին միավորները, բարդության և հուսալիության գործակիցները:

Աղյուսակ 11. 2021 թ. միասնական քննությունների հիմնական փուլի թեստերի միջին միավորը, բարդությունը⁶ և հուսալիությունը⁷

Քննական առարկան	Թեստի համարը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը
Հայոց լեզու և հայ գրականություն	1	1013	12.4	0.63	0.935
	2	996	12.7	0.66	0.939
	3	1005	12.2	0.62	0.939
	4	991	12.5	0.65	0.939
Հայոց պատմություն	1	356	14.7	0.76	0.960
	2	353	14.5	0.75	0.967
	3	353	14.7	0.76	0.960
	4	341	14.7	0.76	0.966
Անգլերեն	1	1080	14.2	0.71	0.962
	2	1060	14.9	0.74	0.965
	3	1078	14.4	0.72	0.964
	4	1053	14.6	0.73	0.967
Ռուսաց լեզու	1	66	13.0	0.65	0.949
	2	64	12.4	0.62	0.950
	3	59	13.4	0.67	0.946
	4	57	12.2	0.61	0.956
Ֆրանսերեն	1	20	14.9	0.74	0.959
	2	16	15.1	0.76	0.974
	3	21	15.1	0.75	0.951
	4	17	13.6	0.68	0.984
Գերմաներեն	1	20	15.0	0.75	0.964
	2	25	12.8	0.64	0.973
	3	22	13.2	0.66	0.967
	4	18	13.7	0.68	0.970
Մաթեմատիկա	1	1280	10.6	0.58	0.922
	2	1248	10.5	0.58	0.927
	3	1255	10.5	0.58	0.918
	4	1245	10.3	0.57	0.928
Կենսաբանություն	1	323	12.7	0.66	0.975
	2	325	12.8	0.66	0.975
	3	326	12.5	0.65	0.975
	4	318	13.1	0.65	0.974
Քիմիա	1	258	12.8	0.66	0.971
	2	262	13.7	0.70	0.972
	3	261	13.0	0.67	0.972
	4	261	13.9	0.71	0.974
Ֆիզիկա	1	329	12.5	0.65	0.964
	2	329	13.1	0.68	0.967
	3	326	12.4	0.65	0.963
	4	327	12.4	0.66	0.964
Աշխարհագրություն	1	46	14.1	0.72	0.952
	2	47	14.1	0.73	0.961
	3	50	14.0	0.72	0.949
	4	44	13.8	0.71	0.960
Համաշխարհային պատմություն	1	7	14.8	0.74	0.977
	2	6	13.2	0.66	0.942
	3	11	12.1	0.61	0.966
	4	5	13.2	0.66	0.987

⁶ **Բարդություն:** Թեստը համարվում է շատ հեշտ, եթե բարդության գործակիցը (P) գտնվում է 0.9-1.0 սահմաններում: $0.75 \leq P \leq 0.89$ սահմաններում թեստը հեշտ է, $0.30 \leq P \leq 0.74$ սահմաններում՝ միջին բարդության, $0.20 \leq P \leq 0.29$ սահմաններում՝ բարդ, $P \leq 0.19$ դեպքում՝ շատ բարդ:

⁷ **Հուսալիություն:** Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

II. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021/2022 ուսումնական տարվա համար կառավարության N 465-Ն որոշմամբ⁸ ՀՀ բուհերին բակալավրի կրթական ծրագրով ընդունելության⁹ նպատակով տրամադրվել է 1838 անվճար և 22300 վճարովի տեղ:

Միասնական և կենտրոնացված քննություններով մասնագիտություն է հայտագրել 11042 դիմորդ: Ներբուհական քննությունները ներառյալ՝ դիմորդների ընդհանուր թիվը կազմել է 13128: Նրանցից ընդունվել է 9700-ը (73.9%):

Երկու քննություն հայտագրել է 10799 դիմորդ, որոնցից 8388-ը դիմում-հայտում առաջին քննությունը նշել է «Միասնական»: Վերջիններից 7882-ը երկրորդ քննությունը նշել է «Միասնական», 498-ը՝ «Կենտրոնացված», 8-ը՝ «Ներբուհական»: Միայն մեկ քննություն է հայտագրել 2328 դիմորդ, որոնցից 2284-ը (98.1%) դիմում-հայտում նշել է «Միասնական», 44-ը (1.9%)՝ «Ներբուհական»:

Բուհերի ընդունելության մրցույթը կազմակերպվել է երկու փուլով: Միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններ հայտագրած 13128 դիմորդներից ընդունվել է 9700-ը (73.9%), որոնցից 8776-ը (ընդունվածների 90.5%-ը)՝ մրցույթի առաջին փուլում, 924-ը (ընդունվածների 9.5%-ը)՝ երկրորդ փուլում: Միայն միասնական և կենտրոնացված քննություններ է հայտագրել 11042 դիմորդ (հայտագրվածների 84.1%-ը): Նրանցից ընդունվել է 9029-ը

⁸ - 2021/2022 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և վճարովի, առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը: <https://www.arlis.am>

⁹ - Բուհերի ընդունելության մրցույթն անցկացվում է ԳԹԿ-ում՝ համակարգչային ծրագրերի միջոցով: 2020 թվականից սկսած՝ ԳԹԿ-ի տվյալների բազաներում առցանց ամրագրվում են նաև գուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերի դիմորդները, որոնցից ընդունվածների թիվը տվյալների բազաներում ամբողջական չէ, քանի որ մրցույթն անցկացնում են բուհերը և ոչ բոլորն են տրամադրել համապատասխան արդյունքները: շեռագայում այդ խնդիրը կլուծվի:

(ընդունվածների 93.1%-ը), որից մրցույթի առաջին փուլում՝ 8112-ը (բոլոր ընդունվածների 89.8%-ը), երկրորդ փուլում՝ 917-ը (10.2%):

Միասնական և կենտրոնացված քննությունների արդյունքներով բուհ ընդունված 9029 դիմորդներից ուսուցման անվճար հիմունքներով ընդունվել է 1435 դիմորդ (1395-ը՝ առաջին փուլում, 40-ը՝ երկրորդում), վճարովի հիմունքներով՝ 7502-ը (6629-ը՝ առաջին փուլում, 873-ը՝ երկրորդում): Արտոնություններով ընդունվել է 92 դիմորդ, որից 75-ը՝ առաջին փուլում, 17-ը՝ երկրորդում:

Միասնական քննություններ հայտագրած դիմորդների թիվը (12043) միասնական քննություն պահանջող մասնագիտություն հայտագրածների թվից (11042) մեծ է, որովհետև նրանց մի մասը դիմել է բուհերի ընդունելության մրցույթի ցանկում չընդգրկված այլ բուհեր կամ նպատակ է ունեցել միասնական քննության արդյունքով որևէ բուհի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու:

Բուհերում հայտագրված 13128 դիմորդներից 12655-ը (96.4%) առաջին հայտով դիմել են ՀՀ պետական, 473-ը (3.6%)՝ ոչ պետական բուհեր: Բուհ ընդունվածներից 9369-ն (96.6%) ընդունվել են պետական բուհեր, 331-ը (3.4%)՝ ոչ պետական:

5.1 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԸՍՏ ԲՈՒՀՆԵՐԻ ԵՎ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ (ՆԱԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ)

Աղյուսակ 12-ում, որտեղ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և ՀՀ-ում միասնական քննություններին մասնակից դիմորդներ ունեցած երկրների ներկայացված են բուհ ընդունվածների տոկոսները, երևում է, որ բուհ ընդունվածների 97%-ը եղել են ՀՀ քաղաքացիներ: Բուհ ընդունված երևանաբնակ դիմորդները կազմել են բոլոր դիմորդների 32.5%-ը:

Աղյուսակ 12. Բուհ ընդունվածների թվերը և տոկոսները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և բուհերում այլ երկրներից հայտագրվածների

Ընդամենը՝ բոլոր երկրներից		13128	100	9700	100	73.9
Ընդամենը		471	3.6	288	3.0	61.1
Այլ երկրներ		18	0.1	13	0.1	72.2
Ռուսաստան		195	1.5	126	1.3	64.6
Վրաստան		83	0.6	33	0.3	39.8
Արցախ		177*	1.3	116*	1.2	65.5
ՀՀ (վարչատարածքային միավորները)						
Ընդամենը՝ ՀՀ-ից		12655	96.4	9412	97.0	74.4
Տավուշ		614	4.7	471	4.9	76.7
Վայոց ձոր		234	1.8	167	1.7	71.4
Սյունիք		722	5.5	601	6.2	83.2
Շիրակ		1159	8.8	832	8.6	71.8
Կոտայք		1267	9.7	1007	10.4	79.5
Լոռի		1047	8.0	790	8.1	75.5
Գեղարքունիք		782	6.0	599	6.2	76.6
Արմավիր		909	6.9	658	6.8	72.4
Արարատ		954	7.3	743	7.7	77.9
Արագածոտն		564	4.3	393	4.1	69.7
Երևան		4403	33.5	3151	32.5	71.6
<p>թիվը հիմնական վայրի 1ին հայտագրվածների թվերը</p> <p>սովորական հայտագրվածների ընդամենը թվից</p>		4403	33.5	3151	32.5	71.6
<p>Հայտագրվածների</p> <p>Ընդունվածների</p>		4403	33.5	3151	32.5	71.6

* ՀՀ բարձրագույնից երկրորդ հայտագրվել և ընդունվել են Արցախում:

Աղյուսակում երևում է, որ ՀՀ-ից հայտագրվել է 12655 դիմորդ, որոնցից ընդունվել է 9412-ը (74.4%): ՀՀ մարզերից բուհ ընդունվածների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Կոտայքում:

բուհերում հայտագրված 13128 դիմորդների 9.7%-ը կազմած 1267 դիմորդներից ընդունվել է 1007-ը (բուրք ընդունվածների 10.4%-ը): Վարչատարածքային տվյալ միավորից բուհերում հայտագրվածներից ընդունվածների տոկոսով առաջատարը եղել է Սյունիքի մարզը (83.2%):

Աղյուսակ 13. 2021 թ. բուհերի ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլով ընդունվածների թիվը և տոկոսը *

Բուհը	Ընդունվածների		Բուհը	Ընդունվածների	
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը
ԵՊՀ	290	31.6	Գավառի պետական համալսարան	7	0.8
ՀԱՊՀ (Երևան)	94	10.3	Երևանի «Հայրուսուպ» համալսարան	7	0.8
ՀՊՄՀ	92	10.0	ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ	6	0.7
ՃԵՀԱՀ	83	9.1	ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղ	5	0.5
Հայ-Ռուսական (Սյամբնական) համալսարան	76	8.3	ՀԱՊՀ-ի Վանաձորի մասնաճյուղ	4	0.4
ԵՊՀ	73	8.0	Գորիսի պետական համալսարան	3	0.3
ՀՊՏՀ	57	6.2	Եվրասիա միջազգային համալսարան	3	0.3
Հայկական բժշկական ինստիտուտ	26	2.8	ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղ	2	0.2
ԵՊԲՀ	23	2.5	Երևանի «Հրուսիսային» համալսարան	1	0.1
ՀԱԱՀ	18	2.0	Ավանդական բժշկության համալսարան	1	0.1
Շիրակի պետական համալսարան	17	1.9	ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղ	1	0.1
Եվրոպական համալսարան	14	1.5	Եվրոպական համալսարանի Վանաձորի մասն.	1	0.1
Վանաձորի պետական համալսարան	13	1.4	Ընդամենը	917	100

* Աղյուսակում ընդգրկված չեն միայն մերթառանգական քննություններով ընդունվող բուհերի փուլերը:

Աղյուսակ 13-ից երևում է, որ 2021 թ. բուհերի ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլով ընդունված դիմորդների ամենաբարձր՝ 31.6%-ն ընդունվել է ԵՊՀ: Երկրորդ տեղում է ՀԱՊՀ-ն (10.3%), երրորդ տեղում՝ ՀՊՄՀ-ն (10%):

Աղյուսակ 14-ում ներկայացված են ՀՀ բուհեր ընդունված դիմորդների տոկոսները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և բուհերում այլ երկրներից հայտագրվածների: Տվյալ վարչատարածքային միավորից կամ երկրից ըստ բուհերի ընդունվածների տոկոսները հաշվարկված են ՀՀ բուհերում այդ վարչատարածքային միավորից կամ երկրից ընդունվածների ընդհանուր թվից: Աղյուսակում մզացված է վարչատարածքային յուրաքանչյուր միավորի ամենաբարձր ցուցանիշի վանդակը:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ վարչատարածքային միավորների մեծ մասից հայտագրվածների և ընդունվածների թվերով առաջատար բուհը եղել է ԵՊՀ-ն: Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում գործող որոշ բուհերի և խոշոր բուհերի մասնաճյուղերի առկայությամբ պայմանավորված՝ այդ բուհեր դիմած և ընդունված դիմորդների տոկոսը եղել է բարձր: Դա առավել ընդգծված է հատկապես Շիրակի մարզում (52.8%): Նշված մարզերից հայտագրվածների և ընդունվածների թվով ԵՊՀ-ն եղել է 2-րդ տեղում: Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում գործող բուհերում ու խոշոր բուհերի մասնաճյուղերում հայտագրվածների և ընդունվածների վիճակագրական պատկերը ներկայացված է աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15-ում երևում է, որ դիտարկված բուհերում հայտագրված տեղացի դիմորդների տոկոսը բարձր է եղել հատկապես Վանաձորի և Շիրակի պետական համալսարաններում ու ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում (համապատասխանաբար՝ 37.6%, 31.6%, 36.2%՝ հաշված տվյալ մարզից ՀՀ բուհերում հայտագրվածների ընդհանուր թվից): Այդ բուհեր ընդունվածների տոկոսները եղել են, համապատասխանաբար, 35.8%, 31.6%, 39.9%: Աղյուսակ 15-ի տվյալների հիման վրա աղյուսակ 16-ում ներկայացվել են նշված վեց մարզերի բուհերում հայտագրված և ընդունված տեղացի դիմորդների գումարային թվերը և տոկոսները:

Աղյուսակ 16. ՀՀ մարզերում գործող բուհերում 2021 թ. հայտագրված և ընդունված տվյալ մարզի դիմորդների թվերը
(մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերը միասին)

Մարզը	Հայտագրվածներ					Ընդունվածներ				
	Տվյալ մարզից ՀՀ բուհեր ներկայացված հայտերի ընդհանուր թիվը	Հայտերի ընդհանուր թիվը մարզի բուհերում	Տվյալ մարզից նույն մարզի բուհեր ներկայացված հայտերի թիվը	Տոկոսը մարզի բուհերում հայտագրվածների ընդհանուր թվից	Տոկոսը տվյալ մարզից ՀՀ բուհերում հայտագրվածների ընդհանուր թվից	Տվյալ մարզից ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թիվը	Մարզի բուհեր ընդունվածների ընդհանուր թիվը	Տվյալ մարզից նույն մարզի բուհեր ընդունվածների թիվը	Տոկոսը մարզի բուհեր ընդունվածների ընդհանուր թվից	Տոկոսը տվյալ մարզից ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թվից
Լոռի	1112	529	516	97.5	46.4	790	348	340	97.7	43.0
Շիրակ	1241	624	601	96.3	48.4	832	430	417	97.0	50.1
Գեղարքունիք	858	73	69	94.5	8.0	599	52	47	90.4	7.8
Սյունիք	763	160	157	98.1	20.6	601	108	107	99.1	17.8
Տավուշ	650	245	235	95.9	36.2	471	198	188	94.9	39.9
Վայոց ձոր	244	28	25	89.3	10.2	167	15	13	86.7	7.8
Ընդամենը	4868	1659	1603	96.6	32.9	3460	1151	1112	96.6	32.1

Դիտարկված բուհերում 1-ին հայտով հայտագրվել է ընդհանուր հաշվով 1659 դիմորդ, որոնցից 1603-ը եղել են տեղացիներ: Տարբեր հայտերով ընդունվել է 1151 դիմորդ (1112-ը՝ տեղացիներ):

Նշված բուհերում հայտագրված տեղացի դիմորդների ընդհանուր թիվը (1603) կազմել է 2021 թվականին ՀՀ բուհերում հայտագրվածների (13128) 12.2%-ը: Այդ բուհեր ընդունված 1112 տեղացիները կազմել են բոլոր ընդունվածների (9700) 11.5%-ը:

5.2 ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ ԸՍՏ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Աղյուսակ 17-ում ներկայացված են հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող հիմնական առարկաները ներկայացնող մասնագիտություններն ընտրած դիմորդների թվերը:

Աղյուսակ 17. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաներից բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու գծով 2021 թ. հայտագրված և ընդունված դիմորդների թվերը
(մրցույթի հիմնական փուլ)

Մասնագիտությունը	Հայտագրվածների թիվը	Ընդունվածների			
		ընդհանուր թիվը	տոկոսը	թիվը 1-ին հայտով	տոկոսը
Հայոց լեզու և գրականություն	176	153	86.9	31	20.3
Անգլերեն լեզու և գրականություն	159	130	81.8	19	14.6
Պատմություն	163	127	77.9	23	18.1
Կենսաբանություն	73	46	63.0	19	41.3
Մաթեմատիկա	80	71	88.8	22	31.0
Որոսաց լեզու և գրականություն	55	53	96.4	15	28.3
Աշխարհագրություն	42	38	90.5	11	28.9
Ֆիզիկա	25	23	92.0	22	95.7
Քիմիա	12	11	91.7	11	100
Ֆրանսերեն լեզու և գրականություն	6	6	100	3	50.0
Գերմաներեն լեզու և գրականություն	8	6	75.0	1	16.7
Ընդամենը	799	644	83.1	177	26.7

Աղյուսակ 17-ի տվյալները վերաբերում են 2021 թվականի ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված բոլոր բուհերին: Մանկավարժի որակավորում շնորհող բուհերի (ՀՊՄՀ, ԵՊԼՀ, ՇՊՀ, ՎՊՀ և այլն) նույն մասնագիտություններն ընտրած դիմորդների թվերը ներկայացված են աղյուսակ 18-ում, որտեղ տեսնում ենք, որ այդ մասնագիտությունները մրցույթի առաջին փուլում հայտագրել է 447 դիմորդ (առաջին փուլում հայտագրվածների 3.4 տոկոսը): Հայտագրվածների թվով առաջին տեղերում եղել են «Անգլերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն» և «Պատմություն» մասնագիտությունները:

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների մասնագիտությունների գծով մանկավարժի որակավորում շնորհող բուհերում վերջին 5 տարիներին 1-ին հայտով մրցույթի հիմնական փուլում միջինում հայտագրվել է տվյալ տարվա դիմորդների 4.2 տոկոսը:


Աղյուսակ 18. Հայտագրված և ընդունված դիմորդների թվերը մանկավարժի որակավորում շնորհող բուհերում

Մասնագիտությունը	Հայտագրվածների թիվ	Ընդունվածների թիվ	Ընդունվածների տոկոսը
Անգլերեն լ. և գրականություն	126	99	78.6
Հայոց լեզու և գրականություն	96	83	86.5
Պատմություն	89	69	77.5
Կենսաբանություն	41	19	46.3
Ռուսաց լեզու և գրականություն	33	31	93.9
Մաթեմատիկա	28	24	85.7
Աշխարհագրություն	19	15	78.9
Գերմաներեն լեզու և գրականություն	8	6	75.0
Ֆիզիկա	4	4	100
Քիմիա	3	2	66.7
Ընդամենը	447	352	78.7

Աղյուսակ 19. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող քննական առարկաներից բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու գծով 2017-2021 թթ. 1-ին հայտով հայտագրված դիմորդների թվերը

Տարեթիվը	2017	2018	2019	2020	2021	
Հայտերի ընդհանուր թիվը	9030	5270	10100	11967	13128	
Նշված մասնագիտությունների հայտերի	թիվը 1-ին հայտով	535	216	315	533	453
	տոկոսը	5.9	4.1	3.1	4.5	3.5

Դիագրամ 2. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող քննական առարկաներից բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու գծով 2017-2021 թթ. 1-ին հայտով հայտագրված դիմորդների թվերը



2021 թ. բուհերի ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլում վերը նշված մասնագիտությունների թափուր մնացած տեղերի համար 1-ին հայտով հայտագրվել է 51 դիմորդ (պատմություն՝ 32, անգլերեն լեզու և գրականություն՝ 10, քիմիա՝ 6, ֆիզիկա՝ 2, մաթեմատիկա՝ 1), որը կազմել է այդ փուլում հայտագրված 521 դիմորդների 9.8 տոկոսը:

5.3 ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Աղյուսակ 20-ում ներկայացված է 2020-2021 ուսումնական տարում տասը և ավելի շրջանավարտ ունեցած հաստատություններից բուհ ընդունվածների ամենաբարձր տոկոս ունեցած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը, որտեղ դպրոցները դասավորված են տոկոսների նվազման կարգով:

Աղյուսակ 20. Բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը

Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Վարչատարածքային միավորը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների	
			թիվը	տոկոսը
Արտաշատի ավագ դպրոց	Արարատ	83	81	97.6
Վանաձորի մաթեմ. և բնագիտ. առարկ. խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց	Լոռի	26	24	92.3
Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց	Լոռի	84	77	91.7
Գյումրու թիվ 2 ավագ դպրոց	Շիրակ	81	73	90.1
Զրափիի միջնակարգ դպրոց	Շիրակ	10	9	90.0
Երևանի թիվ 62 ավագ դպրոց	Երևան	110	97	88.2
Երևանի թիվ 65 ավագ դպրոց	Երևան	147	122	83.0
Երևանի թիվ 190 ավագ դպրոց	Երևան	257	212	82.5
Երևանի թիվ 118 ավագ դպրոց	Երևան	112	92	82.1
ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց	Երևան	272	223	82.0

Աղյուսակում երևում է, որ բուհ ընդունված շրջանավարտների տոկոսով առաջատար հանրակրթական ուսումնական հաստատությունը եղել է Արտաշատի ավագ դպրոցը, որի 83 շրջանավարտներից 81-ն (97.6%) ընդունվել են ՀՀ բուհեր: Վերը նշված տասը դպրոցներից բուհեր ընդունված ամենամեծաթիվ շրջանավարտներ է ունեցել ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը (223 (82%)):

Աղյուսակ 21-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները, որոնք դասավորված են բուհ ընդունվածների տոկոսի նվազման կարգով: Այստեղ ևս դիտարկվել են 2021 թվականին տասը և ավելի շրջանավարտ ունեցած հաստատությունները:

Աղյուսակ 21. Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատություն	Շրջանավարտների թիվը			Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատություն	Շրջանավարտների թիվը		
		Բուհ ընդունվածների	Բուհ ընդունվածների	Բուհ ընդունվածների տոկոսը			Բուհ ընդունվածների	Բուհ ընդունվածների	Բուհ ընդունվածների տոկոսը
Երևան	Թիվ 62 ավագ դպրոց	110	97	88.2	Կոտայք	Նոր Հաճնի ավագ դպրոց	75	59	78.7
	Թիվ 65 ավագ դպրոց	147	122	83.0		Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց	105	80	76.2
	Թիվ 190 ավագ դպրոց	257	212	82.5		Քասախի թիվ 1 միջնակարգ դպրոց	27	18	66.7
	Թիվ 118 ավագ դպրոց	112	92	82.1		Չարենցավանի ավագ դպրոց	173	114	65.9
	ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց	272	223	82.0		Եղվարդի թիվ 1 ավագ դպրոց	113	73	64.6
Արագածոտն	Վարդենուտի միջնակարգ դպրոց	10	7	70.0	Շիրակ	Գյումրու թիվ 2 ավագ դպրոց	81	73	90.1
	Թաթուլի միջնակարգ դպրոց	10	7	70.0		Ջրափի միջնակարգ դպրոց	10	9	90.0
	Աշտարակի ավագ դպրոց	117	76	65.0		«Ֆոտոն» վարժարան	106	79	74.5
	Թալինի ավագ դպրոց	42	26	61.9		Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց	26	18	69.2
	Ագարակի միջնակարգ դպրոց	12	7	58.3		Գյումրու «Ակադեմիական» վարժարան	116	80	69.0
Արարատ	Արտաշատի ավագ դպրոց	83	81	97.6	Սյունիք	Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց	58	45	77.6
	Աբարատի ավագ դպրոց	70	56	80.0		Կապանի թիվ 2 ավագ դպրոց	98	76	77.6
	Մրգավանի միջնակարգ դպրոց	14	10	71.4		Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց	31	24	77.4
	Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց	27	17	63.0		Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց	10	7	70.0
	Վարդաշենի միջնակարգ դպրոց	18	11	61.1		Միսիանի ավագ դպրոց	164	109	66.5
Արմավիր	Մրգաշատի թիվ 2 միջնակարգ դպրոց	14	10	71.4	Վայոց ձոր	Վայքի ավագ դպրոց	48	33	68.8
	Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց	83	59	71.1		Էղեգնաձորի ավագ դպրոց	63	40	63.5
	Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց	102	66	64.7		Գետափի միջնակարգ դպրոց	13	8	61.5
	Սմբերդի միջնակարգ դպրոց	16	9	56.3		Արտաբույնի միջնակարգ դպրոց	12	7	58.3
	«Բոլորնեկեան» միջնակարգ դպրոց	36	20	55.6		Ջերմուկի կրթահամալիր	27	14	51.9
Գեղարքունիք	Մարտունու ավագ դպրոց	80	57	71.3	Տավուշ	Իջևանի ավագ դպրոց	107	72	67.3
	Սևանի և Մեղվյանի անվան ավագ դպրոց	60	41	68.3		Դիլիջանի թիվ 5 միջնակարգ դպրոց	12	8	66.7
	Գավառի ավագ դպրոց	57	36	63.2		Կալանավանի միջնակարգ դպրոց	16	10	62.5
	Նորատուսի թիվ 2 միջնակարգ դպրոց	16	10	62.5		Դիլիջանի ավագ դպրոց	69	43	62.3
	Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոց	23	13	56.5		Աջաջրի միջնակարգ դպրոց	42	26	61.9
Լոռի	Վանաձորի մաթ. և բնագիտ. առարկաների խորացվ. ուսուց. հաստիկ դպրոց	26	24	92.3					
	Վանաձորի թիվ 5 միջնակարգ դպրոց	84	77	91.7					
	ՎՊՀ-ի հեռակետային վարժարան	147	108	73.5					
	Վանաձորի թիվ 11 ավագ դպրոց	145	101	69.7					
	Ստեփանավանի վարժարան	31	20	64.5					

Բարձր պատրաստվածություն ունեցած շրջանավարտների մի մասը, որոնք բուհերի ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված որևէ բուհ չեն ընդունվել, հնարավոր է, որ ընդունվել են այդ ցանկում չընդգրկված այլ բուհեր:

5.4 ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՎ ԲԱՐՁՐԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԵՐԻՑ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից 2021 թ. ՀՀ բուհերում հայտագրվել է 804 դիմորդ, որոնցից ընդունվել է 613-ը (76.2%): Աղյուսակ 22-ում և աղյուսակ 23-ում ներկայացված են սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր ունեցող վարչատարածքային միավորների՝ 2021 թ. բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած դպրոցները: Ուսումնասիրվել են 5 և ավելի շրջանավարտ ունեցած և ընդունվածների մեծ թիվ ապահոված դպրոցները:

Աղյուսակ 22. 2021 թ. սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերից բուհերում հայտագրված և բուհ ընդունված դիմորդների թվերը

Գյուղական բնակավայրի տիպը	Հայտագրվածների թիվը	Ընդունվածների	
		թիվը	տոկոսը
Սահմանամերձ	470	360	76.6
Բարձրլեռնային	328	251	76.5
Բարձրլեռնային սահմանամերձ	6	2	33.3
Ընդամենը	804	613	76.2

Աղյուսակ 22. 2021 թ. սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերից բուհերում հայտագրված և բուհ ընդունված դիմորդների թվերը (հիմնական փուլ)

Գյուղական բնակավայրի տիպը	Հայտագրվածների թիվը	Ընդունվածների	
		թիվը	տոկոսը
Սահմանամերձ	470	360	76.6
Բարձրլեռնային	328	251	76.5
Բարձրլեռնային սահմանամերձ	6	2	33.3
Ընդամենը	804	613	76.2

Աղյուսակ 23. 2021 թ. սահմանամերձ գյուղերի 5 և ավելի շրջանավարտ ունեցած և բուհ ընդունվածների 50-ից բարձր տոկոսով առանձնացած դպրոցները

Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների			
			թիվը	տոկոսը	այդ թվում՝ 1-ին հայտով անվճար ընդունվածների	
					թիվը	տոկոսը՝ ընդունվածների թվից
Շիրակ	Ջրափիի միջնակարգ դպրոց	10	9	90.0	3	33.3
	Բայանդուրի միջնակարգ դպրոց	6	5	83.3	1	20.0
	Երազգավորսի միջնակարգ դպրոց	9	6	66.7	1	16.7
	Անիպենգայի միջնակարգ դպրոց	5	3	60.0		
	Իսահակյանի միջնակարգ դպրոց	8	4	50.0		
Տավուշ	Այգեձորի միջնակարգ դպրոց	9	6	66.7	2	33.3
	Կայանավանի միջնակարգ դպրոց	16	10	62.5	2	20.0
	Աչաջրի միջնակարգ դպրոց	42	26	61.9	9	34.6
	Ջուջենանի միջնակարգ դպրոց	7	4	57.1	2	50.0
	Ազատամուտի միջնակարգ դպրոց	29	15	51.7	2	13.3
	Բերդավանի միջնակարգ դպրոց	20	10	50.0	1	10.0
	Ներքին Կարմիրաղբյուրի միջն. դպրոց	8	4	50.0		
Սյունիք	Սյունիքի միջնակարգ դպրոց	9	6	66.7	1	16.7
	Գեղանուշի միջնակարգ դպրոց	14	8	57.1	1	12.5
	Շաղաթի միջնակարգ դպրոց	12	6	50.0		
Արարատ	Լուսառատի միջնակարգ դպրոց	20	10	50.0		

Աղյուսակ 23-ում ներկայացված դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Շիրակի մարզի Ջրափիի միջնակարգ դպրոցում (90%՝ 10 շրջանավարտներից ընդունվել են 9-ը), իսկ ընդունվածների ամենամեծ թիվը՝ Տավուշի մարզի Աչաջրի միջնակարգ դպրոցում (42 շրջանավարտից՝ 26-ը (61.9%))։ Առաջին հայտով անվճար ընդունվածների ամենամեծ թիվը ևս ապահովել է Աչաջրի միջնակարգ դպրոցը (9 դիմորդ)։

Աղյուսակ 24. 2021 թ. բարձրլեռնային գյուղերի 5 և ավելի թվով շրջանավարտ ունեցած և բուհ ընդունվածների՝ 50-ից բարձր տոկոսով առանձնացած դպրոցները

Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների			
			թիվը	տոկոսը	այդ թվում՝ անվճար ընդունվածների	
					թիվը	տոկոսը՝ ընդունվածների թվից
Արագածոտն	Գեղադիրի միջնակարգ դպրոց	6	4	66.7	1	25.5
	Բերքառատի միջնակարգ դպրոց	10	5	50.0		
	Ծաղկաշենի միջնակարգ դպրոց	10	5	50.0		
	Լեռնապարի միջնակարգ դպրոց	6	3	50.0		
Շիրակ	Սիզավետի միջնակարգ դպրոց	5	3	60.0	1	33.3
	Մուսայելյանի միջնակարգ դպրոց	7	4	57.1	1	25.0
Գեղարքունիք	Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց	20	10	50.0		
Սյունիք	Սառնակունքի միջնակարգ դպրոց	8	4	50.0		


Աղյուսակ 24-ում ներկայացված դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Արագածոտնի մարզի Գեղադիրի միջնակարգ դպրոցում (66.7%, 6 շրջանավարտից՝ 4-ը)։ Ընդունվածների թվով առաջատարը եղել է Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցը (20-ից 10-ը)։ Առաջին հայտով անվճար ընդունված մեկական դիմորդ են ունեցել Արագածոտնի մարզի Գեղադիրի և Շիրակի մարզի Սիզավետի ու Մուսայելյանի միջնակարգ դպրոցները։

5.5 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

2021 թ. ՀՀ բուհերում հայտագրված 13128 դիմորդներից 5600-ը (42.7%) եղել են արական սեռի ներկայացուցիչներ, 7528-ը (57.3%)՝ իգական սեռի: Մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերով ընդունված 9700 դիմորդներից 3616-ը (37.3%) եղել են արական սեռի, 6084-ը (62.7%)՝ իգական:

Դիագրամ 3-ում ներկայացված է 2017-2021 թթ. ՀՀ բուհերում հայտագրված դիմորդների սեռային կազմի տոկոսային հարաբերակցությունը:

Դիագրամ 3. 2015-2021 թթ. բուհերում հայտագրված դիմորդների սեռային կազմի տոկոսային հարաբերակցությունը



Դիագրամից երևում է, ու դիտարկված ժամանակահատվածում արական սեռի դիմորդների տոկոսն ամենացածրը եղել է 2020 թվականին (38.9%):

5.6 ԱՄԵՆԱՊԱՀԱՆՁՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղյուսակ 25-ում ներկայացված են 2021 թ. դիմորդների շրջանում ՀՀ պետական բուհերի 10 ամենապահանջված մասնագիտությունները:

Աղյուսակ 25-ում երևում է, որ 2021 թվականին ամենապահանջված մասնագիտությունների տասնյակն ընտրել է 13128 դիմորդներից 2961-ը (22.6%): Այդ մասնագիտություններից դիմումների թվով առաջատարը եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը, որն ընտրել է 628 դիմորդ: ԵՊԲՀ-ի «Բուժական գործ», ԵՊՀ-ի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ու «Իրավագիտություն» մասնագիտությունները հայտագրածները կազմել են բոլոր բուհերում հայտագրվածների 10%-ը:

Հետևյալ աղյուսակում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են 2021 թ. դիմորդների շրջանում ամենապահանջված մասնագիտությունների հնգյակները:

Աղյուսակ 26. 2021 թ. ամենապահանջված մասնագիտությունների հնցյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Բուհը	Մասնագիտությունը	Հարստացման ծրագրերի քանակը	Մասնագիտությունների քանակը	Մասնագիտությունների քանակը
Երևան				
ԵՊԲՀ	Բուժական գործ	259	188	18
ԵՊՀ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	144	92	9
ԵՊՀ	Իրավագիտություն	142	80	1
ՃՀՀԱՀ	Դիզայն	120	108	7
ՃՀՀԱՀ	Ճարտարապետություն	111	105	9
Երևանի դիստրիկտների ընդհանուր թիվը		4403	3151	430
Արագածոտն				
ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	21	19	1
ԵՊԲՀ	Բուժական գործ	21	14	1
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	14	11	
ԵՊՀ	Իրավագիտություն	12	5	
ՃՀՀԱՀ	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	11	6	
Մարզի դիստրիկտների ընդհանուր թիվը		564	393	31
Արարատ				
ԵՊԲՀ	Բուժական գործ	35	27	3
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	28	26	1
ՀՊՄՀ	Հոգեբանություն	24	19	
ԲՊՀ	Սերվիս	24	23	1
ՀՊՄՀ	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	23	19	
Մարզի դիստրիկտների ընդհանուր թիվը		954	743	105
Արմավիր				
ԵՊԲՀ	Բուժական գործ	37	30	8
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	32	28	1
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	31	24	2
ՀՊՄՀ	Հոգեբանություն	27	26	
ԵՊԼՀ	Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ	26	24	1
Մարզի դիստրիկտների ընդհանուր թիվը		909	658	76
Գեղարքունիք				
ԵՊԲՀ	Բուժական գործ	46	38	3
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	23	20	1
ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	22	15	
ԵՊՀ	Իրավագիտություն	20	9	1
ԵՊՀ	Միջազգային հարաբերություններ	19	9	
Մարզի դիստրիկտների ընդհանուր թիվը		782	599	75

Լոռի				
ՎՊՀ (Վանաձոր)	Անգլերեն լեզու և գրականություն	59	39	3
ՎՊՀ (Վանաձոր)	Կառավարում (ըստ ոլորտի)	47	35	2
ԵՊԲՀ	Բուժական գործ	41	36	6
ՎՊՀ (Վանաձոր)	Հոգեբանություն	39	30	3
ՀԱՊՀ (Վանաձոր)	Մրագրային ճարտարագիտություն	38	24	9
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը		1047	790	141
Կոտայք				
ԵՊՀ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	45	36	7
ԵՊԲՀ	Բուժական գործ	45	34	9
ԵՊԼՀ	Սերվիս	33	28	
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	33	28	2
ԵՊԼՀ	Միջնշակության հաղորդակցություն, անգլերեն լեզու	30	29	2
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը		1267	1007	171
Շիրակ				
ԵՊԲՀ	Բուժական գործ	55	40	5
ՀՊՏՀ (Գյումրի)	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	42	35	3
ՇՊՀ (Գյումրի)	Թարգմանչական գործ անգլերեն և հայերեն լեզուներ	41	29	4
ՇՊՀ (Գյումրի)	Հոգեբանություն	40	35	3
ՀՊՏՀ (Գյումրի)	Կառավարում (ըստ ոլորտի)	38	30	2
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը		1159	832	156
Սյունիք				
ԵՊԲՀ	Բուժական գործ	43	36	8
ԵՊԼՀ	Սերվիս	23	22	
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	19	17	3
ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	18	16	
ԵՊՀ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	16	13	
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը		722	601	108
Վայոց ձոր				
ՀՊՏՀ (Եղեգնաձոր)	Կառավարում (ըստ ոլորտի)	15	7	1
ՃՇՀԱՀ	Դիզայն	13	11	
ԵՊԼՀ	Սերվիս	8	7	
ՀՊՏՀ (Եղեգնաձոր)	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	7	4	1
ԵՊԲՀ	Բուժական գործ	6	5	1
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը		234	167	32
Տավուշ				
ԵՊՀ (Բջնան)	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	38	31	6
ԵՊՀ (Բջնան)	Անգլերեն լեզու և գրականություն	32	30	4
ԵՊՀ (Բջնան)	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	28	19	6
ԵՊՀ (Բջնան)	Զբոսաշրջություն	26	17	3
ԵՊՀ (Բջնան)	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	21	18	5
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը		614	471	81

Աղյուսակ 26-ում տեսնում ենք, որ Երևանում և մարզերի մեծ մասում ամենապահանջվածը 2021 թվականին եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը: Վերջինիս հետ ամենապահանջված մասնագիտությունների եռյակում հիմնականում մրցակցել են «Կառավարում», «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում և հարկում» և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

➤ **Միասնական քննություններ:** 2021 թ. միասնական քննություն է հայտագրել 12043 դիմորդ: Նախորդ տարվա համեմատությամբ հայտագրվածների թիվը նվազել է 764-ով: 2020 թ. կորոնավիրուսային իրավիճակով պայմանավորված՝ մեկ քննության արդյունքով բուհ դիմելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը շատերի, հատկապես նախորդ տարիների շրջանավարտների համար շարժառիթ էր հանդիսացել հանպատրաստից օգտվելու այդ հնարավորությունից: Հետևաբար, այդ հանգամանքը կարող է լինել 2021 թ. դիմորդների թվի նվազման հիմնական պատճառներից մեկը:

Միասնական քննություններն անցկացվել են երկու փուլով. առաջին փուլում հայտագրվել է 11450 դիմորդ, երկրորդ փուլում՝ 593: Երկրորդ փուլում հայտագրվածներից 154-ը հայտագրված են եղել նաև առաջին փուլում:

Դիմորդներից 11512-ը հայտագրվել են ՀՀ-ում, 531-ը՝ Արցախում: ՀՀ-ում հայտագրվածներից 11127-ը եղել են Հայաստանի, 105-ը՝ Արցախի, 280-ը՝ Ռուսաստանի, Վրաստանի և այլ երկրների քաղաքացիներ:

Հայտագրված դիմորդներից 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտներ են եղել 11437-ը:

Միասնական քննություններից բացակայությունները չեն գերազանցել մասնակիցների թվի 6.8%-ը: Ութ դիմորդ քննության

անցկացման կարգի խախտման պատճառով հեռացվել է քննություն-նից: Հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է 2 դիմորդ:

Միասնական քննությունների ընդհանուր միջին միավորները բաշխվել են 10.4-ից (մաթեմատիկա) մինչև 14.7 (ֆրանսերեն) սահմաններում:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների քննություններից նախորդ տարվա համեմատությամբ 0.1-3.2 միավորով նվազել են մաթեմատիկայի, կենսաբանության, քիմիայի և օտար լեզուների միջին միավորները: Հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, աշխարհագրության և ֆիզիկայի միջին միավորներն ավելացել են 0.9-2.6-ով:

Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների թիվը 2021 թվականին մեծամասամբ եղել է մասնակիցների թվի 10-24 տոկոսի սահմաններում: 10 տոկոսից պակաս են եղել անգլերենի և ֆրանսերենի համապատասխան ցուցանիշները:

Միասնական քննություններից 18-20 միավոր հավաքած դիմորդների թիվը եղել է 4.8-ից (մաթեմատիկա) մինչև 37 (հայոց պատմություն) տոկոսի սահմաններում: Այդ առումով ամենամեծաթիվ բարձր միավորներն արձանագրվել են անգլերենից (թվով 1261՝ 28.8 տոկոսը):

Միասնական քննությունների վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներն արձանագրվել են Երևանում (գերմաներենից), Արարատի (աշխարհագրությունից), Գեղարքունիքի (ռուսաց լեզվից), Լոռու (համաշխարհային պատմությունից), Կոտայքի (ֆիզիկայից, քիմիայից), Շիրակի (մաթեմատիկայից, հայոց լեզվից և հայ գրականությունից, հայոց պատմությունից), Սյունիքի (անգլերենից, կենսաբանությունից, քիմիայից) և Տավուշի (ֆրանսերենից) մարզերում:

Բնակավայրերի տիպերից միասնական քննությունների վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներով աչքի

են ընկել հատկապես միջին և փոքր քաղաքները (մաթեմատիկայից, անգլերենից, հայոց լեզվից և հայ գրականությունից, հայոց պատմությունից, կենսաբանությունից, քիմիայից, աշխարհագրությունից):

Հանրակրթական ուսումնական հաստատություններից 2021 թվականին վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներ ունեցել են առավելապես ավագ դպրոցների (կենսաբանությունից, քիմիայից, աշխարհագրությունից, գերմաներենից) և վարժարանների (մաթեմատիկայից, անգլերենից, հայոց լեզվից և հայ գրականությունից, հայոց պատմությունից, ֆիզիկայից) շրջանավարտները:

➤ **Բուհերի ընդունելության մրցույթը:** 2021 թ. ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի համար նախատեսված է եղել անվճար հիմունքներով ուսուցման 1838 տեղ, վճարովի հիմունքներով՝ 22300:

Բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար հայտագրվել է 13128 (առանց ներբուհական քննությունների՝ 11042) դիմորդ: Հայտագրված դիմորդներից 12655-ը (96.4%) դիմել են պետական, 473-ը (3.6%)՝ ոչ պետական բուհեր:

dimord. am կայքում հայտագրված դիմորդներից դիմում-հայտում երկու քննություն է նշել 10799-ը: Նրանցից 8388-ը հայտագրել է առնվազն մեկ միասնական քննություն: Այդ դիմորդներից 7882-ը հայտագրել է միասնական երկու քննություն: Դիմում-հայտում միայն մեկ քննություն է հայտագրել 2328 դիմորդ, որոնցից 2284-ը՝ միասնական, 44-ը՝ ներբուհական:

Բուհերի ընդունելության մրցույթը կազմակերպվել է երկու փուլով: Միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններ հայտագրած 13128 դիմորդներից ընդունվել է 9700-ը (73.9%): Նրանցից 8776-ն (90.5%-ը) ընդունվել է մրցույթի առաջին փուլում, 924-ը (9.5%)՝ երկրորդում: Միայն միասնական և կենտրոնացված քննություններ է հայտագրել 11042 դիմորդ (հայտագրված-

ների 84.1%): Նրանցից ընդունվել է 9029-ը (ընդունվածների 93.1%-ը), որից մրցույթի առաջին փուլում՝ 8112-ը (9029 ընդունվածների 89.8%-ը), երկրորդ փուլում՝ 917-ը (10.2%):

Միասնական և կենտրոնացված քննությունների արդյունքներով ընդունված 9029 դիմորդներից ուսուցման անվճար հիմունքներով ընդունվել է 1435-ը (1395-ը՝ առաջին փուլում, 40-ը՝ երկրորդում), վճարովի հիմունքներով՝ 7502-ը (6629-ը՝ առաջին փուլում, 873-ը՝ երկրորդում), արտոնություններով՝ 92-ը (75-ը՝ առաջին փուլում, 17-ը՝ երկրորդում):

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող հիմնական առարկաներից բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու գծով մանկավարժի որակավորում շնորհող բուհերում առաջին հայտով հայտագրված դիմորդները կազմել են բոլոր հայտագրվածների 3.5 տոկոսը (447 դիմորդ):

2021 թվականին 10 և ավելի շրջանավարտներ ունեցած ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից բուհ ընդունվածների բարձր տոկոս ապահովվածների լավագույն տասնյակում տեղ են գտել 80-97.6% արձանագրածները, որոնցից առաջատարը եղել է Արտաշատի ավագ դպրոցը (97.6%): Բուհ ընդունվածների ամենամեծ թիվն այդ ցանկում ապահովել է ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը, որի 272 շրջանավարտներից ընդունվել են 223-ը (82%):

Սահմանամերձ գյուղերում 2021 թ. 5 և ավելի շրջանավարտ ունեցած և բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առաջատար դպրոցը եղել է Շիրակի մարզի Ջրափիի միջնակարգ դպրոցը (90%), իսկ բարձր լեռնային գյուղերում՝ Արագածոտնի մարզի Գեղադիրի միջնակարգ դպրոցը (66.7%):

2021 թվականին դիմորդների նախընտրած մասնագիտություններից ամենապահանջվածների տասնյակը գլխավորել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը: Երկրորդը և երրորդը եղել են ԵՊՀ-ի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և

«Իրավագիտություն» մասնագիտությունները: Նշված երեք մասնագիտությունները հայտագրած դիմորդները կազմել են բոլոր բուհերում հայտագրվածների 10%-ը:

2021 թ. Երևանում և մարզերում ամենապահանջված մասնագիտությունը եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը, որի հետ առաջին երեք տեղերը զբաղեցրել են հիմնականում տնտեսագիտական և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. 2021 թ. միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ
2. ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ
3. 2020 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների վիճակագրական վերլուծություն
4. 2021/2022 ուսումնական տարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և վճարովի, առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ցանկ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Դիմորդների ընտրած մասնագիտության և տվյալ մասնագիտության համար սահմանված քննական առարկայի (առարկաների) առցանց հայտագրումը սկսվել է 2021 թ. ապրիլի 15-ից և ավարտվել մայիսի 10-ին՝ մինչև ժամը 18:00-ն (համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու

անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերի) կարգի»¹⁰: Դիմում-հայտերի տվյալների վերջնական մուտքագրումից հետո ԳԹԿ-ն պատրաստել է դիմորդների ցուցակները՝ ըստ քննական առարկաների և կենտրոնների, որոնց հիման վրա դիմորդներին տրվել են միասնական քննությունների անցաթղթեր: Դրանք ԳԹԿ-ն մինչև մայիսի 30-ն ուղարկել է դպրոցներ, էլեկտրոնային եղանակով ուղարկվել է նաև դիմորդներին:

ՀՀ երկրադաքացիների և օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, առաջին փուլում ընդունելության դիմում-հայտ չներկայացրած ՀՀ քաղաքացիների, տվյալ տարվա գարնանային գորակոչից գորացրված կամ մինչև հուլիսի 31-ը գորացրվող դիմորդների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվել են հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը՝ մինչև ժամը 17:00-ը:

Միասնական քննությունները կազմակերպվել և անցկացվել են քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև 2021 թ. մայիսի 15-ը հաստատել է ԳԹԿ-ի տնօրենը: Քննությունների անցկացման գործընթացին մասնակցել են քննական կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցիչները, քննության ընթացքի կազմակերպիչները, համակարգչային օպերատորը, քննական կենտրոնի հերթապահը, որոնք իրենց աշխատանքը քննությունների ընթացքում իրականացրել են ԳԹԿ-ի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն: Էլեկտրոնային եղանակով ուղարկվել է նաև դիմորդներին:

ՀՀ երկրադաքացիների և օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, առաջին փուլում ընդունելության դիմում-հայտ չներկայացրած ՀՀ քաղաքացի-

¹⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151376>

ների, տվյալ տարվա գարնանային գորակոչից գորացրված կամ մինչև հուլիսի 31-ը գորացրվող դիմորդների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվել են հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը՝ մինչև ժամը 17:00-ը:

Միասնական քննությունները կազմակերպվել և անցկացվել են քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև 2021 թ. մայիսի 15-ը հաստատել է ԳԹԿ-ի տնօրենը: Քննությունների անցկացման գործընթացին մասնակցել են քննական կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցիչները, քննության ընթացքի կազմակերպիչները, համակարգչային օպերատորը, քննական կենտրոնի հերթապահը, որոնք իրենց աշխատանքը քննությունների ընթացքում իրականացրել են ԳԹԿ-ի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. 2021 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ժամ)	ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ	
		Հիմնական փուլ	Լրացուցիչ փուլ
Կենսաբանություն Աշխարհագրություն Համաշխարհային պատմություն *	3	08.06.2021 թ.	07.07.2021 թ.
Օտար լեզուներ	2.5	11.06.2021 թ.	04.07.2021 թ.
Հայոց լեզու և հայ գրականություն	3	15.06.2021 թ.	03.07.2021 թ.
Մաթեմատիկա	3	18.06.2021 թ.	06.07.2021 թ.
Հայոց պատմություն Ֆիզիկա	3	22.06.2021 թ.	08.07.2021 թ.
Քիմիա Ռուսաց լեզու	3 2.5	25.06.2021 թ.	05.07.2021 թ.

* «Համաշխարհային պատմություն» քննություն լրացուցիչ փուլում չի կազմակերպվել:

**ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՂԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՅԹԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ¹¹**

Համաձայն Գնահատման և թեստավորման կենտրոնի գործունեության պլանի՝ ԳԹԿ-ն 2021 թ. ապրիլի 1-ից սկսած առնվազն հինգ անգամ ՁԼՄ-ներով պարբերաբար հրապարակել է հայտարարություն, որում նշվել են միասնական քննությունների և բուհերի ընդունելության դիմում-հայտերի առցանց գրանցումն սկսելու և ավարտելու ժամկետները, նախորդ տարիների շրջանավարտներին ԳԹԿ անձնական համար տրամադրող և գրանցող հանրակրթական ուսումնական հաստատությունները: ԳԹԿ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվել և պարբերաբար թարմացվել են միասնական քննություններին և բուհերի ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկությունները:

ԳԹԿ համակարգչային և վերլուծական բաժինը հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգչային օպերատորների համար կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ:

Միասնական քննությունների կազմակերպման գործընթացը (ուղեցույցների մշակում և տրամադրում, միասնական քննությունների և բուհերի ընդունելության հայտագրում, թեստերի տպագրություն) լուսաբանվել է ՁԼՄ-ներով: Քննությունների անցկացման ողջ գործընթացը բաց է եղել լրատվամիջոցների համար: Այդ թեմայով պարբերաբար կազմակերպվել են հարցազրույցներ և ասուլիսներ:

**ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Միասնական քննությունների թեստերը կազմված են լինում պատասխանի ընտրությամբ և կարճ պատասխանով առաջադրանքներից, առարկաների մի մասի դեպքում՝ պնդումների փնջե-

¹¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151376>

րից: Պատասխանի ընտրությամբ առաջադրանքներում պատասխանի չորս հնարավոր տարբերակներից ճիշտ է միայն մեկը: Կարճ պատասխանով առաջադրանքների երկու տիպերից մեկի դեպքում պատասխանը մեկ թիվ է կամ մի քանի թվեր, որոնց հաջորդականությունը պահպանելը պարտադիր է: Մյուս տիպի դեպքում թվային հաջորդականության պահպանումը պարտադիր չէ: Պնդումների փունջը կազմվում է վեց պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի հնարավոր պատասխաններն են՝ «Ճիշտ է», «Միսալ է», «Չգիտեմ», և դրանցից պետք է ընտրել միայն մեկը:

Բոլոր թեստերի առավելագույն միավորը 80 է: Գնահատման 80 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվում է՝

$$U=0.25 * U_{80}$$

բանաձևով, որտեղ U -ն միավորն է 20 միավորանոց սանդղակում, U_{80} -ը՝ 80 միավորանոց սանդղակում:

20 միավորանոց սանդղակում դրական են համարվում 7.5 և ավելի միավորները:

Բոլոր թեստերում ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար ըստ գնահատման 20 միավորանոց սանդղակի տրվում է 0.25 միավոր (ըստ 80 միավորանոց սանդղակի՝ 1 միավոր): Պնդումների փնջերի յուրաքանչյուր պնդման ճիշտ պատասխանի համար գնահատման 20 միավորանոց սանդղակում տրվում է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում պնդումների տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվում է 0.25 միավոր: «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվում և չի հանվում: Ամբողջ փնջին միավոր չի տրվում նաև պնդումների փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի դեպքում: Այլ առաջադրանքներից հավաքած միավորների վրա տվյալ փնջի միավորները չեն ազդում:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԵՐԸ
ԵՎ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ 2007-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Տարեթիվ	Հարց կերպի և նայ գրադարանություն		Մարզերում		Մեծ քաղաքներում		Միջին քաղաքներում		Ստանդարտացված		Միջին քաղաքներում		Ստանդարտացված		Միջին քաղաքներում		Ստանդարտացված						
	Միջին միավորը	Ստանդարտացված	Միջին միավորը	Ստանդարտացված	Միջին միավորը	Ստանդարտացված	Միջին միավորը	Ստանդարտացված	Միջին միավորը	Ստանդարտացված	Միջին միավորը	Ստանդարտացված	Միջին միավորը	Ստանդարտացված	Միջին միավորը	Ստանդարտացված	Միջին միավորը	Ստանդարտացված					
2021	4115	12.3	5222	10.4	4586	14.5	274	12.2	85	13.8	74	14.7	1369	12.5	1394	12.5	13	13.2	189	14	2	13.5	
2020	1712	10.7	5220	10.9	1773	14.7	169	12.3	57	15.5	52	15.7	190	11.6	1078	13.1	341	16.2	282	12.4	5	14.5	
2019	5701	11.4	4837	12	4821	13.8	456	11.1	126	13.9	88	15.1	1492	11.5	1324	13	1100	12.2	244	13.5	4	13.3	
2018	2715	12.2	2553	11.5	2183	14	264	9.6	81	14.9	51	14.9	983	11	685	13.5	584	12.4	148	13.1	2	13.25	
2017	5307	12.9	4586	11.3	4158	14.4	544	10.2	119	15.6	126	15.6	1683	11.5	1265	13.4	1098	12.7	282	12.1	6	14.3	
2016	6336	13.7	5400	11.6	4833	14.1	652	9.8	192	15.3	173	15.9	1947	11.4	1440	13.3	1183	12.9	356	13.5	10	16.2	
2015	6991	13.7	5567	11.8	5243	14.2	781	10	230	14.9	194	15.3	1957	10.9	1527	12.6	1194	12.6	332	13.8	13	12.4	
2014	7602	13.2	6062	11.6	5441	13.9	910	10.6	284	14	230	15.8	2208	11.4	1466	10.9	1143	12.4	317	13.4	15	16.5	
2013	8931	13.1	6912	11.8	6361	15.4	1212	11	362	15.6	293	16.2	2489	11.5	1788	14.1	1368	12.6	346	14.4	19	18.8	
2012	11671	13.9	8831	11.6	7982	13.2	1242	10.3	525	14.4	438	14.3	3328	12.1	1960	11.4	1537	10.8	387	12.3	24	17.9	
2011	1326	11.4	1077	6.1	776	9.5	202	10.9	78	9.5	38	11.2	474	5.3	360	10.3	251	9.1	107	10.6	5	15.2	
2010	11152	11.4	9218	9.9	7712	13.3	989	11.2	528	13.9	432	14.6	4066	10.3	1774	10.9	1336	12	325	11.5	18	14.8	
2009	12378	11.4	9955	10.8	8066	13.9	1218	12.3	531	14.5	435	16.5	4677	10.1	1799	11.7	1314	12	394	13	18	16.9	
2008	13814	13	9859	14.9	7848	14.9	1529	16	575	14.7	514	16.6									23	18.9	
2007	14862	15.1																					

Ալինա ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների
բաժնի գլխավոր մասնագետ

**2020-2021 ուսումնական տարվա 12-րդ
դասարանում սովորողների պետական
ավարտական քննությունների արդյունքների
վիճակագրական վերլուծություն**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների 12-րդ դասարաններում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից պետական ավարտական քննություններն անցկացվում են դեկտեմբերի 21-26-ը և/կամ հունիսի 9-23-ը: Սովորողը դեկտեմբեր ամսին պետական ավարտական քննություն(ներ) է հանձնում միայն այն առարկա(ներ)ից, որը(որոնք) չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որը(որոնք) չի հանձնելու միասնական քննությունների համակարգով:

Սովորողն ինքն է ընտրում, թե որ քննություն(ներ)ը հանձնի դեկտեմբերին, որը(որոնք)՝ հունիսին:

Երկրում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված՝ 2020 թվականին 12-րդ դասարանում ավարտական քննություններ չեն անցկացվել: Ավարտական գնահատականները նշանակվել են սովորողի՝ տվյալ առարկայի տարեկան գնահատականի հիման վրա:

12-րդ դասարանի դեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև դեկտեմբերի 1-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հեռավար ուսուցման դեպքում կարելի է դիմել էլեկտրոնային փոստով: Հաստատության տնօրենը դեկտեմբերի 1-ից մինչև 8-ը ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետև՝ ԳԹԿ): Հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակն ըստ առարկաների հաստատության տնօրենը նույն ձևով լրացնում և ԳԹԿ է փոխանցում ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը:

Քննական առարկաների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից: Առաջադրանքների նյութն ընտրվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված և հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող դասագրքերից և ձեռնարկներից, ինչպես նաև շտեմարաններից:

Քննությունների կազմակերպումը, անցկացումը, ինչպես նաև գրավոր աշխատանքների ստուգումն իրականացնում են ուսումնական հաստատությունները:

2020-2021 ուսումնական տարվա պետական ավարտական գրավոր քննություններն անցկացվել են ստորև ներկայացված ժամանակացույցով.

Քննական առարկան	Քննության օրը	
	1-ին փուլ	2-րդ փուլ
Հայոց լեզու և հայ գրականություն	22.12.2020 թ.	09.06.2021 թ.
Մաթեմատիկա	24.12.2020 թ.	23.06.2021 թ.
Հայոց պատմություն	26.12.2020 թ.	16.06.2021 թ.

Սանդղակավորումը

Թեստերի առաջադրանքների կատարումը գնահատվել է առավելագույնը 50 միավորով: Գնահատման 50 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի, որտեղ դրական (8 և ավելի) միավորները համապատասխանում են 14 և ավելի առաջադրանքների ճիշտ կատարմանը:

Նախնական միավորը (0-50)	Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-50)	Միավորը 20 միավորանոց համակարգում
49-50	20	19-20-21	10
46-47-48	19	16-17-18	9
43-44-45	18	14-15	8
40-41-42	17	12-13	7
37-38-39	16	10-11	6
34-35-36	15	8-9	5
31-32-33	14	6-7	4
28-29-30	13	4-5	3
25-26-27	12	2-3	2
22-23-24	11	0-1	1

**1. 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՏՎՅԱԼՆԵՐ**

**1.1. Սովորողների մասնակցությունը պետական
ավարտական քննություններին**

Պետական ավարտական քննությունների վերլուծությունը կատարվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 95,4 տոկոսի կողմից մուտքագրված սովորողների գնահատականների արդյունքների հիման վրա: Հայտագրված սովորողների գնահատականները չմուտքագրած կամ թերի մուտքագրած ուսումնական հաստատությունները կազմել են ընդհանուր ուսումնական հաստատությունների մոտավորապես 4,6 տոկոսը: Այդ հաստատությունների շրջանավարտների արդյունքները չեն վերլուծվել:

Ստորև ներկայացված է երեք առարկաների քննություններին սովորողների մասնակցության աղյուսակը: Հարկ է նշել, որ 1-ին փուլում հայտագրված, սակայն քննությանը չմասնակցած, ինչպես նաև անբավարար գնահատական ստացած սովորողները մասնակցել են 2-րդ փուլի քննություններին:


Աղյուսակ 3

Քննական առարկան	1-ին փուլ (դեկտեմբեր)		2-րդ փուլ (հունիս)		Չմուտքագրված շրջանավարտների թիվը	Անբավարար գնահատական ստացած շրջանավարտների թիվը
	Մասնակցած շրջանավարտների					
	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը		
Հայոց լեզու և հայ գրականություն	3935	22 %	13214	73,8 %	747	36
Հայոց պատմություն	8476	43,5 %	10594	54,4 %	406	21
Մաթեմատիկա	6225	36,4 %	10410	60,9 %	472	45


1.2. Պետական ավարտական քննությունների միավորների բաշխման հիստոգրամները

Ստորև ներկայացված են պետական ավարտական քննությունների 1-ին և 2-րդ փուլերի միավորների բաշխման հիստոգրամները: Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը (Mean), ստանդարտ շեղումը (St.Dev) և մասնակիցների թիվը (N):


Հայոց լեզու և հայ գրականություն (1-ին փուլ)




Հայոց լեզու և հայ գրականություն (2-րդ փուլ)




Հայոց պատմություն (1-ին փուլ)




Հայոց պատմություն (2-րդ փուլ)



Մաթեմատիկա (1-ին փուլ)



Մաթեմատիկա (2-րդ փուլ)



Միավորների բաշխման հիստոգրամներում տեսնում ենք, որ միավորների բաշխման կորերը շեղված են դեպի բարձր միավորները, ինչն ավելի մանրամասն ներկայացված է վերլուծության հաջորդ բաժիններում:

1.3. Պետական ավարտական քննությունների երկու փուլերի (դեկտեմբեր, հունիս) արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են յուրաքանչյուր առարկայից պետական ավարտական քննությունների երկու փուլերի մասնակիցների թվերը, միջին միավորները, ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները:

Աղյուսակ 4

Առարկան	Փուլը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	1-ին	3935	14.39	0.058	3.63
	2-րդ	13214	13.54	0.031	3.53
Հայոց պատմություն	1-ին	8476	14.41	0.036	3.27
	2-րդ	10594	13.35	0.033	3.36
Մաթեմատիկա	1-ին	6225	13.61	0.045	3.53
	2-րդ	10410	13.24	0.034	3.46

Աղյուսակ 4-ում տեսնում ենք, որ հատկապես «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից մասնակիցների մեծ մասը նախընտրել է ավարտական քննությունը հանձնել 2-րդ փուլում: Երեք առարկաներից էլ 1-ին փուլի մասնակիցների միջին միավորները բարձր են 2-րդ փուլի մասնակիցների միջին միավորներից: Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են:

Պետական ավարտական քննությունների երկու փուլերի մասնակիցների արդյունքները միասին ներկայացված են աղյուսակ 5-ում:


Աղյուսակ 5

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	17149	13.73	3.57
Հայոց պատմություն	19070	13.82	3.36
Մաթեմատիկա	16635	13.38	3.49

1.4. Պետական ավարտական քննությունների մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում պատկերված են պետական ավարտական քննությունների երկու փուլերի մասնակիցների արդյունքներն ըստ առաջադիմության՝ անբավարար, ցածր, միջին և բարձր միավորների խմբերի: Այդ խմբերը կազմվել են համապատասխանաբար 1-7, 8-13, 14-17 և 18-20 միավորներ հավաքած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:


Դիագրամ 1



2. 2013-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև բերված դիագրամում ներկայացված է 2013-2021 թվականներին պետական ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատությունը՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից:

Դիագրամ 2



3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

3.1. Պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների համեմատությունը

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են վիճակագրական տվյալներ 2021 թվականի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների վերաբերյալ:

Այս բաժնի մեկնաբանությունը և քննությունների արդյունքների համեմատությունը պահանջում են որոշակի զգուշություն և սահմանափակումներ, քանի որ դրանք տարբեր քննություններից և տարբեր թեստերից են, թեև երկու դեպքում էլ միավորները միջնակարգ կրթության ատեստատում գրանցելու համար համապատասխանեցվել են 20 միավորանոց սանդղակին:

Աղյուսակ 6

Առարկան	Քննությունը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	Ավարտական	17149	13.73	0.027	3.57
	Միասնականի ավարտական մաս	3781	14.10	0.052	3.33
Հայոց պատմություն	Ավարտական	19070	13.82	0.024	3.36
	Միասնականի ավարտական մաս	1377	16.25	0.101	3.84
Մաթեմատիկա	Ավարտական	16635	13.38	0.027	3.49
	Միասնականի ավարտական մաս	5013	14.30	0.046	3.32


Աղյուսակ 6-ում տեսնում ենք, որ միասնական քննություն հանձնող սովորողների ավարտական մասի միջին միավորները բարձր են եղել պետական ավարտական քննություն հանձնող սովորողների միջին միավորներից:

3.2. Պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Դիագրամ 3-ում ներկայացված են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից 2021 թվականի պետական ավարտական քննություններից

և միասնական քննությունների ավարտական մասից մասնակիցների ստացած միավորների տոկոսային թվերն ըստ առաջադիմության չորս խմբերի:

Դիագրամ 3



Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի միավորների ընդհանուր բաշխվածության տարբերությունը զգալի է հատկապես «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից:

4. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Աղյուսակ 7-ում ներկայացված են 12-րդ դասարանի պետական ավարտական և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքներն ըստ վարչատարածքային միավորների: Մգացված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են:

Աղյուսակ 7

Վարչատարածքային միավորը	Քննությունը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Նվազագույն միավոր	Առավելագույն միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն (ավարտական քննության միջին միավորը՝ 13,73; միասնական քննության ավարտական մասի միջին միավորը՝ 14,10)						
Երևան	Ավարտական	4871	13,98	3,7	1	20
	Միասնականի ավարտ. մաս	972	14,15	3,45	3	20
Շիրակ	Ավարտական	1442	14,06	3,47	6	20
	Միասնականի ավարտ. մաս	361	15,15	3,06	6	20
Լոռի	Ավարտական	1510	13,77	3,48	1	20
	Միասնականի ավարտ. մաս	295	14,62	3,14	5	20
Արագածոտն	Ավարտական	906	13,85	3,53	8	20
	Միասնականի ավարտ. մաս	187	13,9	2,95	7	20

Շարունակությունը՝ էջ 70

Սկիզբը՝ էջ 69


Սյունիք	Ավարտական	1023	13,95	3,34	8	20
	Միասնականի ավարտ. մաս	247	14,14	3,22	6	20
Արարատ	Ավարտական	1586	12,9	3,58	3	20
	Միասնականի ավարտ. մաս	345	14,66	3,08	4	20
Գեղարքունիք	Ավարտական	1522	13,71	3,45	8	20
	Միասնականի ավարտ. մաս	281	14,69	3,02	7	20
Արմավիր	Ավարտական	1546	13,20	3,55	8	20
	Միասնականի ավարտ. մաս	321	14,71	2,94	5	20
Տավուշ	Ավարտական	849	12,95	3,46	3	20
	Միասնականի ավարտ. մաս	258	13,46	3,37	4	20
Վայոց ձոր	Ավարտական	352	14,33	3,54	8	20
	Միասնականի ավարտ. մաս	84	14,35	3,22	8	20
Կոտայք	Ավարտական	1542	14,1	3,43	4	20
	Միասնականի ավարտ. մաս	430	15,01	3,03	5	20

Հայոց պատմություն (ավարտական քննության միջին միավորը՝ 13,82, միասնական քննության ավարտական մասի միջին միավորը՝ 16,25)						
Երևան	Ավարտական	5398	13,82	3,44	1	20
	Միասնականի ավարտ. մաս	489	16,61	3,67	4	20
Շիրակ	Ավարտական	1668	14,37	3,25	8	20
	Միասնականի ավարտ. մաս	125	16,82	3,38	7	20
Լոռի	Ավարտական	1594	14,2	3,35	8	20
	Միասնականի ավարտ. մաս	145	16,31	3,59	4	20
Արագածոտն	Ավարտական	1003	13,9	3,31	8	20
	Միասնականի ավարտ. մաս	61	15,6	3,76	6	20
Սյունիք	Ավարտական	1132	13,97	3,23	8	20
	Միասնականի ավարտ. մաս	73	16,61	3,70	6	20
Արարատ	Ավարտական	1753	12,84	3,38	8	20
	Միասնականի ավարտ. մաս	92	16,74	3,35	7	20
Գեղարքունիք	Ավարտական	1635	13,94	3,23	8	20
	Միասնականի ավարտ. մաս	88	16,16	4,01	6	20
Արմավիր	Ավարտական	1744	13,42	3,49	4	20
	Միասնականի ավարտ. մաս	83	16,44	3,62	6	20
Տավուշ	Ավարտական	1018	13,23	3,14	8	20
	Միասնականի ավարտ. մաս	51	15,48	4,24	7	20
Վայոց ձոր	Ավարտական	392	14,51	3,17	8	20
	Միասնականի ավարտ. մաս	21	17,52	2,82	12	20
Կոտայք	Ավարտական	1733	14,27	3,21	1	20
	Միասնականի ավարտ. մաս	149	16,94	3,64	4	20

Մաթեմատիկա (ավարտական քննության միջին միավորը՝ 13.38, միասնական քննության ավարտական մասի միջին միավորը՝ 14.30)						
Երևան	Ավարտական	4422	13,69	3,71	1	20
	Միասնականի ավարտ. մաս	1804	14,71	3,30	3	20
Շիրակ	Ավարտական	1476	13,9	3,39	5	20
	Միասնականի ավարտ. մաս	413	14,97	3,02	6	20
Լոռի	Ավարտական	1464	13,38	3,19	8	20
	Միասնականի ավարտ. մաս	399	14,46	3,06	2	20
Արագածոտն	Ավարտական	878	13,18	3,27	6	20
	Միասնականի ավարտ. մաս	238	13,84	3,09	6	20
Սյունիք	Ավարտական	1002	13,36	3,29	7	20
	Միասնականի ավարտ. մաս	313	14,37	3,33	4	20
Արարատ	Ավարտական	1582	12,31	3,46	8	20
	Միասնականի ավարտ. մաս	359	14,58	3,01	4	20
Գեղարքունիք	Ավարտական	1507	13,71	3,24	8	20
	Միասնականի ավարտ. մաս	296	13,92	3,15	5	20
Արմավիր	Ավարտական	1556	13,01	3,52	1	20
	Միասնականի ավարտ. մաս	355	14,03	3,33	2	20
Տավուշ	Ավարտական	874	12,88	3,33	2	20
	Միասնականի ավարտ. մաս	226	13,69	3,82	5	20
Վայոց ձոր	Ավարտական	350	13,87	3,49	8	20
	Միասնականի ավարտ. մաս	91	13,78	3,57	5	20
Կոտայք	Ավարտական	1524	13,42	3,42	7	20
	Միասնականի ավարտ. մաս	519	14,98	2,99	4	20

Պետական ավարտական քննությունների մասնակիցների միջին միավորների տարբերություններն ըստ վարչատարածքային միավորների ավելի ակնառու են դիագրամ 4-ում:

Դիագրամ 4



Վարչատարածքային միավորների վերլուծության արդյունքում պարզվել է, որ երեք առարկաներից էլ ամենաբարձր միջին միավորները գրանցել են Վայոց ձորի, Կոտայքի և Շիրակի մարզերի սովորողները, ամենացածր միջին միավորները՝ Տավուշի, Արարատի և Արմավիրի մարզերի սովորողները:

5. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ


Աղյուսակ 8-ում ներկայացված է ըստ սեռերի նշված առարկաներից մասնակիցների թիվը, միջին միավորը և ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 8

Առարկան	Տղաներ			Աղջիկներ		
	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	9091	12.87	3.55	8058	14.71	3.33
Հայոց պատմություն	9425	12.96	3.37	9645	14.66	3.14
Մաթեմատիկա	7612	12.47	3.44	9023	14.15	3.34

Աղյուսակում ներկայացված տվյալները վկայում են, որ գրեթե բոլոր առարկաներից աղջիկները ցուցաբերել են ավելի բարձր առաջադիմություն, քան տղաները: Դա ավելի պարզ է երևում դիագրամ 5-ում, որտեղ ներկայացված են տղաների և աղջիկների միջին միավորների տարբերություններն ըստ առարկաների:


Դիագրամ 5




Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկները տղաներից 1.7-1.8 միավորով բարձր առաջադիմություն են ցուցաբերել:

Ստորև ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:


Հայոց լեզու և հայ գրականություն



Հայոց պատմություն



Մաթեմատիկա



Հիստոգրամներում տեսնում ենք, որ պետական ավարտական քննություններին գերակշռում են տղաների 8-13 գնահատականները, աղջիկների՝ 14-20 գնահատականները:

6. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ


Աղյուսակ 9-ում ներկայացված են երեք առարկաներից պետական ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ ըստ ուսումնական հաստատությունների տիպերի: Մգացված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են:

Աղյուսակ 9

Ուսումնական հաստատության տիպը	Մասնակիցների ընդհանուր թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Նվազագույն միավոր	Առավելագույն միավորը	Անբավարար գնահատական ստացած մասնակիցների թիվը
Հայոց լեզու և հայ գրականություն (միջին միավորը՝ 13.73)						
Ավագ դպրոց	6853	14,11	3,662	1	20	31
Միջնակարգ դպրոց	8371	13,19	3,413	3	20	3
Հենակետային վարժարան	900	13,57	3,374	6	20	2
Հատուկ դպրոց	11	10,73	1,191	9	13	0
Վարժարան	447	16,13	3,019	8	20	0
Կրթահամալիր	164	17,1	3,088	8	20	0
Միջն. մասնագիտ. ուս. հաստատ.	62	14,05	2,933	8	20	0
Ոչ պետական ուս. հաստ.	341	15,13	3,444	8	20	0

Հայոց պատմություն (միջին միավորը՝ 13.82)						
Ավագ դպրոց	7725	13,87	3,487	1	20	20
Միջնակարգ դպրոց	9145	13,52	3,242	4	20	1
Հենակետային վարժարան	1090	13,92	2,841	8	20	0
Հատուկ դպրոց	11	11	1,483	8	13	0
Վարժարան	521	16,73	2,601	8	20	0
Կրթահամալիր	166	16,53	3,144	8	20	0
Միջն. մասնագիտ. ուս. հաստատ.	62	13,69	3,092	8	20	0
Ոչ պետական ուս. հաստ.	350	14,83	3,509	8	20	0
Մաթեմատիկա (միջին միավորը՝ 13.38)						
Ավագ դպրոց	6649	13,58	3,644	1	20	43
Միջնակարգ դպրոց	8360	12,91	3,268	5	20	2
Հենակետային վարժարան	685	13,86	3,185	8	20	0
Հատուկ դպրոց	11	9,73	1,489	8	12	0
Վարժարան	371	16,47	2,902	8	20	0
Կրթահամալիր	159	16,09	2,786	9	20	0
Միջն. մասնագիտ. ուս. հաստատ.	61	13,7	2,929	8	20	0
Ոչ պետական ուս. հաստ.	339	15,43	3,569	8	20	0

Միջին միավորներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ավելի մանրամասն ներկայացված է դիագրամ 6-ում:




Վերլուծությունից պարզվել է, որ երեք առարկաներից էլ ամենաբարձր արդյունքները ցուցաբերել են կրթահամալիրների և վարժարանների աշակերտները:

7. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ

7.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի

Դիագրամ 7-ում ներկայացված են պետական ավարտական քննությունների մասնակիցների տոկոսային թվերն ըստ հոսքերի:




Ընդհանուր հոսքի մասնակիցների տոկոսային թիվը մեծ է, որովհետև միջնակարգ դպրոցում ուսուցումը հիմնականում իրականացվում է միայն ընդհանուր հոսքի ծրագրով: Մյուս տիպերի հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտները նախապատվությունը տալիս են հումանիտար հոսքին, այնուհետև բնագիտական և տնտեսագիտական հոսքերին, ֆիզմաթ հոսքն ընտրում են փոքր թվով աշակերտներ:

7.2. Միջին միավորներն ըստ հոսքերի

Դիագրամ 8-ում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների միջին միավորներն ըստ հոսքերի:

Դիագրամ 8



Դիագրամում տեսնում ենք, որ երեք առարկաներից էլ ամենաբարձր արդյունքներն ապահովել են ֆիզմաթ և տնտեսագիտական հոսքերի, ամենացածր արդյունքները՝ արհեստագործական հոսքի սովորողները:

8. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 10-ում ներկայացված են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից պետական ավարտական քննությունների մասնակիցների թիվը, տոկոսը, միջին միավորը և ստանդարտ շեղումն ըստ բնակավայրերի տիպերի: Մգացված են այն միջին միավորները, որոնք մեծ կամ հավասար են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից:

Բնակավայրի տիպը	Հայոց լեզու և հայ գրականություն			Հայոց պատմություն			Մաթեմատիկա		
	Մասնակիցների		Միջին միավորը (ստ. շեղ.)	Մասնակիցների		Միջին միավոր (ստ. շեղ.)	Մասնակիցների		Միջին միավորը (ստ. շեղ.)
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը	
<u>Խոշոր քաղաքներ</u>	6153	35,9	14,07 (3,6)	6840	35,9	14,04 (3,4)	5700	34,3	13,83 (3,6)
<u>Միջին քաղաքներ</u>	1712	10,0	14,43 (3,5)	1992	10,4	14,07 (3,4)	1708	10,3	13,73 (3,6)
<u>Փոքր քաղաքներ</u>	1684	9,8	14,46 (3,6)	1945	10,2	14,29 (3,4)	1627	9,8	13,85 (3,5)
<u>Գյուղեր</u>	5859	34,2	13,19 (3,4)	6388	33,5	13,46 (3,3)	5832	35,1	12,87 (3,3)
<u>Սահմանամերձ և հեռավոր գյուղեր</u>	901	5,3	12,54 (3,3)	1024	5,4	13,04 (3,1)	927	5,6	12,35 (3,3)
<u>Բարձրլեռնային գյուղեր</u>	800	4,7	13,44 (3,3)	840	4,4	14,06 (3,1)	800	4,8	13,4 (3,2)
<u>Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր</u>	40	0,2	13,1 (2,8)	41	0,2	12,95 (2,7)	41	0,2	11,88 (2,7)
Ընդհանուր	17149	100	13,73 (3,6)	19070	100,0	13,82 (3,4)	16635	100,0	13,38 (3,5)

Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ քաղաքային բնակավայրերի սովորողները երեք առարկաներից էլ ցուցաբերել են ընդհանուր միջին միավորից բարձր արդյունքներ, գյուղական բնակավայրերի սովորողների՝ ցածր արդյունքներ՝ բացառությամբ բարձրլեռնային գյուղերի սովորողների:

Ալինա ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների
բաժնի գլխավոր մասնագետ

**2020-2021 ուսումնական տարվա 9-րդ
դասարանում սովորողների ավարտական
քննությունների արդյունքների վիճակագրական
վերլուծություն**

1. Ընդհանուր տեղեկություններ

9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր և ավարտական քննություններից 8-20 միավոր գնահատված աշակերտը ստանում է հիմնական կրթության վկայական:

Երկրում կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի պատճառով 2020 թվականին 9-րդ դասարանում ավարտական քննություններ չեն անցկացվել: Ավարտական գնահատականները նշանակվել են սովորողի՝ տվյալ առարկայի տարեկան գնահատականի հիման վրա:

2021 թվականին Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացվել են և՛ կենտրոնացված ավարտական քննություն (հայոց լեզու), և՛ ավարտական քննություններ՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի:

Քննությունը	Քննության տեսակը	Քննության օրը
Հայոց պատմություն	Բանավոր	21.06.2021 թ.
Մաթեմատիկա	Գրավոր	24.06.2021 թ.
Հայ գրականություն	Բանավոր	28.06.2021 թ.
Հայոց լեզու	Կենտրոնացված, գրավոր	30.06.2021 թ.
Բնագիտական առարկաներ («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», սովորողի ընտրությամբ)	Գրավոր	03.07.2021 թ.
Օտար լեզու («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ, սովորողի ընտրությամբ)	Բանավոր	05.07.2021 թ.
Ռուսաց լեզու (ռուսական դասարան)	Բանավոր	Քննաշրջանի ընթացքում
Ֆիզկուլտուրա		Հունիսի 21-ից մինչև քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում

Գրավոր քննությունների տևողությունը եղել է 120 րոպե: Քննական թեստերի առաջադրանքները կազմվել են Գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետև՝ ԳԹԿ) կողմից, առաջադրանքներն ընտրվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված և հանրակրթական ուսումնական հաստատությունում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից: «Հայոց լեզու» առարկայի կենտրոնացված ավարտական քննությունն անցկացվել է երկու անգամ՝ 2019 և 2021 թվականներին: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են «Հայոց լեզու» առարկայի վերջին տարիների ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական տվյալներ:

	Մասնակիցների թիվը ¹	Դրական միավորի շեմը չհաղթահարած աշակերտների		18-20 միավոր ստացած աշակերտների		Միջին միավորը
		թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	
2021 թ.	27106	56	0.2 %	4196	15.5 %	13.66
2019 թ.	31119	1665	5.4 %	700	2.2 %	12.17
2018 թ.	29186	331	1.1 %	4097	14.1 %	12.69
2017 թ.	29084	352	1.2 %	4200	14.4 %	12.81

2021 թվականի կենտրոնացված և ավարտական քննություններն անցկացվել են երկու փուլով: Առաջին փուլին մասնակցել են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարանի աշակերտները, որոնց դիմում-հայտերը և ցուցակ-հայտերը հաստատության տնօրենը լրացրել և ԳԹԿ է փոխանցել փետրվարի 1-ից մինչև մարտի 10 ընկած ժամանակահատվածում: Երկրորդ փուլին մասնակցել են նախորդ քննությանը հիվանդության պատճառով չներկայացած կամ դրական միավորների շեմը չհաղթահարած աշակերտները:

Ավարտական քննությունների ավարտից հետո սովորողների ամփոփիչ գնահատականները հանրակրթական ուսումնական հաստատությունների օպերատորների կողմից առցանց համակարգով մուտքագրվել են ԳԹԿ տվյալների բազա:

Ավարտական քննությունների ամփոփիչ գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարով (առավելագույնը՝ 35 միավոր): Գնահատման 35 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի,

¹ Ներկայացված է հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ԳԹԿ տվյալների բազա մուտքագրված մասնակիցների թիվը:

որտեղ 20 միավորանոց համակարգում դրական միավորի շեմ է համարվում 8-ը:

Աղյուսակ 13


Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-35)	Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-35)
1	0	11	15-17
2	1	12	18-20
3	2	13	21-23
4	3	14	24-26
5	4	15	27-28
6	5-6	16	29-30
7	7-8	17	31-32
8	9-10	18	33
9	11-12	19	34
10	13-14	20	35

2. 2021 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները


2.1. Միավորների բաշխման հիստոգրամները

Միավորների բաշխման հիստոգրամը սյունների հաջորդականություն է, որոնցից յուրաքանչյուրը կառուցվում է համապատասխան միավորի (կամ միավորների խմբի) հիման վրա: Մյան բարձրությունը համապատասխանում է միավորի հաճախությանը (տվյալ միավորը հավաքած աշակերտների թվին):


Հայոց լեզու (գրավոր)




Հայ գրականություն (բանավոր)




Մաթեմատիկա (գրավոր)




Հայոց պատմություն (բանավոր)




Ռուսաց լեզու (բանավոր)




Անգլերեն (բանավոր)




Ֆրանսերեն (բանավոր)




Գերմաներեն (բանավոր)




Ֆիզիկա (գրավոր)




Աշխարհագրություն (գրավոր)



Քիմիա (գրավոր)



Կենսաբանություն (գրավոր)



Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը² (Mean), ստանդարտ շեղումը³ (St.Dev) և մասնակիցների թիվը (N):

Բաշխման հիստոգրամներից երևում է, որ ավարտական քննությունների միավորների բաշխումը համաչափ չէ, որոշ առարկաներից 8 միավոր ստացածների թիվը զգալիորեն բարձր է այլ միավորներ ստացածների թվից: Ակնհայտ է, որ ցածր միավորներն արհեստականորեն բարձրացվել են դպրոցների կողմից: Երկու տեսակի քննությունների դեպքում էլ միավորների բաշխման կորերը շեղված են դեպի բարձր միավորները:

2.2. Վիճակագրական տվյալներ ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ

Աղյուսակ 4-ում յուրաքանչյուր առարկայի համար ներկայացված են 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ մասնակիցների թիվը, միջին միավորը, ստանդարտ սխալը և ստանդարտ շեղումը:

² Միջին միավորը բնորոշում է քննություն հանձնողների գիտելիքների միջին մակարդակը:

³ Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է:

Առարկան	Մասնակիցների թիվը ⁴	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ստանդարտ սխալը
Հայոց լեզու (գ.)	27106	13.66	3.3	0.020
Հայ գրականություն (բ.)	28858	13.61	4.1	0.024
Հայոց պատմություն (բ.)	29034	13.14	4.1	0.024
Մաթեմատիկա (գ.)	29276	12.05	3.4	0.020
Աշխարհագրություն (գ.)	11274	13.1	3.0	0.028
Կենսաբանություն (գ.)	11648	13.39	3.3	0.030
Քիմիա (գ.)	1543	13.53	3.9	0.10
Ֆիզիկա (գ.)	5061	14.2	3.4	0.048
Ռուսաց լեզու (բ.)	18013	13.73	4.2	0.032
Անգլերեն (բ.)	9840	15.4	4.0	0.040
Գերմաներեն (բ.)	790	13.78	4.4	0.156
Ֆրանսերեն (բ.)	482	14.67	4.1	0.407

Որքան փոքր է ստանդարտ շեղումը, այնքան միջին միավորը հուսալի է: Այսինքն՝ որքան միավորները համախմբված են միջին միավորի շուրջը, այնքան լավ է այդ միջին միավորը բնորոշում տվյալ բազմությունը:


Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» առարկայից (15.4), իսկ ամենացածրը՝ «Մաթեմատիկա» առարկայից (12.05):

⁴ Ներկայացված է հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ԳԹԿ տվյալների բազա մուտքագրված մասնակիցների թիվը:

2.3. Մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում պատկերված են 2021 թվականի 9-րդ դասարանի ավարտական քննություններից աշակերտների արդյունքներն ըստ առաջադիմության անբավարար, ցածր, միջին և բարձր միավորների խմբերի: Այդ խմբերը կազմվել են համապատասխանաբար՝ 1-7, 8-13, 14-17 և 18-20 միավորներ ստացած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:

Դիագրամ 8




Ինչպես երևում է դիագրամում, 18-20 միավոր հավաքած աշակերտների ամենամեծ խումբը կազմվել են «Անգլերեն» առարկայից (42.4 տոկոս), իսկ ամենափոքր խմբերը՝ «Աշխարհագրություն» և «Մաթեմատիկա» առարկաներից (համապատասխանաբար՝ 9.2 և 9.3 տոկոս) ավարտական քննություններ հանձնած աշակերտները: Ավարտական քննություններից անբավարար գնահատականներ ստացել է աշակերտների 0 - 4 տոկոսը:

3. 2013-2021 թվականների 9-րդ դասարանի ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատություն

Դիագրամ 2-ում ներկայացված են 2013-2021 թվականներին «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա» առարկաներից, օտար լեզուներից, ինչպես նաև բնագիտական առարկաներից ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատությունները:

Դիագրամ 9




Դիագրամում տեսնում ենք, որ 2013-2015 թվականներին մասնակիցների թիվը նվազել է: 2014-2015 թվականներին մասնակիցների թվի կտրուկ նվազումը, այնուհետև 2015-2016 թվականներին կտրուկ աճը պայմանավորված է հանրակրթական հիմնական

ծրագրերի փոփոխությամբ՝ 11-ամյա կրթությունից 12-ամյայի անցումով: Հանրակրթական հիմնական ծրագրերի փոփոխությունը մանրամասն ներկայացված է 2014-2015 ուսումնական տարվա 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծության մեջ⁵: 2016-2019 թվականներին նկատվել է մասնակիցների թվի աճ:

4. Ավարտական քննություններին 9-րդ դասարանի աշակերտների ընտրությունը օտար լեզուներից և բնագիտական առարկաներից

Ստորև բերված դիագրամներում ներկայացված է աշակերտների ընտրությունը բնագիտական առարկաներից և օտար լեզուներից՝ տոկոսային թվերով:

Դիագրամ 10




Բնագիտական առարկաների ընտրության դեպքում, ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս շրջանավարտները նախապատվությունը տվել են «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներին, այնուհետև «Ֆիզիկա» առարկային, իսկ «Քի-

⁵ 2014-2015 ուսումնական տարվա 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն, էջ 7:

միա» առարկան ընտրել է մասնակիցների ընդամենը 5.2 տոկոսը: Օտար լեզուների քննություններին մասնակցածների 61.8 տոկոսը նախընտրել է «Ռուսաց լեզու» առարկան:

Մասնակիցների միջին միավորները բնագիտական առարկաներից և օտար լեզուներից ներկայացված են դիագրամ 4-ում:

Դիագրամ 11



Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ բնագիտական առարկաների միջին միավորները (13,1-13,5) նշանակալիորեն չեն տարբերվում: Օտար լեզուներից անգլերենի, ինչպես նաև ֆրանսերենի միջին միավորները (համապատասխանաբար՝ 15,4 և 14,7) նշանակալիորեն բարձր են մյուս օտար լեզուների միջին միավորներից: Հետաքրքիր է նկատել, որ թեպետ ռուսաց լեզուն ընտրել է մասնակիցների մեծամասնությունը՝ 61,8 տոկոս, սակայն այդ առարկայից գրանցվել է ամենացածր միջին միավորը:

5. 2021 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 5-ում ներկայացված են բոլոր առարկաներից մասնակիցների ավարտական քննությունների միջին միավորները (ստանդարտ շեղումները) ըստ վարչատարածքային միավորների: Մուգ երանգով նշված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են կամ հավասար:

Աղյուսակ 15

Վարչատարածքային միավորը	Միջին միավորը (ստանդարտ շեղումը)					
	Հայոց լեզու (միջին միավորը՝ 13.66)	Հայ գրականություն (միջին միավորը՝ 13.61)	Հայոց պատմություն (միջին միավորը՝ 13.14)	Մաթեմատիկա (միջին միավորը՝ 12.05)	Բնագիտական առարկաներ (միջին միավորը՝ 13.42)	Օտար լեզուներ (միջին միավորը՝ 14.31)
Արագածոտն	13,4 (3,1)	13,6 (4,0)	13,1 (4,0)	11,7 (3,1)	13,2 (3,0)	13,6 (4,1)
Արարատ	12,6 (3,2)	12,8 (4,2)	12,3 (4,1)	11,2 (3,1)	12,3 (3,5)	13,1 (4,4)
Արմավիր	12,7 (3,3)	12,9 (4,0)	12,5 (3,9)	11,6 (3,3)	12,9 (3,2)	13,3 (4,1)
Գեղարքունիք	14,1 (3,3)	14,2 (4,1)	13,9 (4,0)	12,4 (3,5)	13,7 (3,5)	14,2 (4,2)
Երևան	14,4 (3,2)	14,0 (4,1)	13,6 (4,0)	12,7 (3,4)	14,0 (3,2)	15,4 (3,9)
Լոռի	13,6 (3,2)	13,4 (4,2)	12,8 (4,1)	11,6 (3,1)	13,2 (3,1)	13,9 (4,3)
Կոտայք	13,4 (3,1)	13,2 (4,2)	12,7 (4,1)	11,6 (3,2)	13,3 (3,0)	13,9 (4,2)
Շիրակ	13,8 (3,3)	14,1 (4,0)	13,7 (4,0)	12,5 (3,5)	13,8 (3,3)	14,4 (4,1)
Մյունիք	14,2 (3,4)	13,7 (4,2)	13,2 (4,2)	12,2 (3,6)	13,4 (3,3)	14,4 (4,2)
Վայոց ձոր	12,6 (3,3)	13,0 (4,1)	12,4 (4,0)	11,2 (3,1)	13,0 (2,9)	13,7 (4,1)
Տավուշ	12,7 (3,3)	13,3 (4,1)	12,7 (4,1)	11,3 (3,3)	12,9 (3,0)	13,7 (4,3)

Բոլոր առարկաներից լավագույն արդյունքներով աչքի են ընկել Երևանը և Շիրակի մարզը:

Արդյունքներն ըստ վարչատարածքային միավորների ավելի մանրամասն ներկայացված են հավելված 1-ում:


6. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ սեռերի

2021 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների մասնակիցների 55 տոկոսը եղել են տղաներ, 45 տոկոսը՝ աղջիկներ: Աղյուսակ 6-ում բոլոր առարկաներից ներկայացված են մասնակիցների թվերը, միջին միավորները և ստանդարտ շեղումները ըստ սեռերի:

Աղյուսակ 16


Առարկան	Աղջիկներ			Տղաներ		
	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու (գ.)	12197	14.5	3.2	14909	13.0	3.2
Հայ գրականություն (բ.)	13072	15.1	3.8	15786	12.4	4.0
Հայոց պատմություն (բ.)	13127	14.3	3.9	15907	12.2	4.0
Մաթեմատիկա (գ.)	13229	12.6	3.4	16047	11.6	3.3
Աշխարհագրություն (գ.)	4490	13.8	2.9	6784	12.6	3.0
Կենսաբանություն (գ.)	6233	14.1	3.1	5415	12.5	3.2
Քիմիա (գ.)	744	14.8	3.6	799	12.3	3.9
Ֆիզիկա (գ.)	1841	14.9	3.3	3220	13.8	3.5
Անգլերեն (բ.)	5446	16.2	3.6	4394	14.4	4.2
Ռուսաց լեզու (բ.)	7036	15.0	4.0	10977	12.9	4.2
Ֆրանսերեն (բ.)	241	16.1	3.7	241	13.3	4.0
Գերմաներեն (բ.)	413	15.1	4.0	377	12.4	4.4

Դիագրամ 5-ում տեսնում ենք, որ ընտրության հնարավորության դեպքում տղաները բնագիտական առարկաներից նախապատվությունը տվել են «Աշխարհագրություն» առարկային, աղջիկները՝ «Կենսաբանություն» առարկային, օտար լեզուներից տղաների 68.7 տոկոսը, աղջիկների 53.6 տոկոսը նախընտրել են «Ռուսաց լեզու» առարկան:



Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ բոլոր առարկաներից աղջիկները ցուցաբերել են ավելի բարձր առաջադիմություն, քան տղաները: Դիագրամ 6-ում ներկայացված են տղաների և աղջիկների միջին միավորների համեմատություններն ըստ առարկաների:







Դիագրամ 6



Ի տարբերություն տղաների՝ աղջիկներն ավելի բարձր առաջադիմություն են ցուցաբերել հատկապես «Հայ գրականություն», «Ֆրանսերեն» և «Գերմաներեն» առարկաներից: Այս առարկաներից միավորների տարբերությունը եղել է 2.8-3.5: Տղաների և աղջիկների միջին միավորների տարբերությունները համեմատաբար փոքր են եղել «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» առարկաներից:

Ստորև բերված հիստոգրամներում ներկայացված են տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:

Հիստոգրամ 2



Ինչպես տեսնում ենք, ներկայացված հիստոգրամներում բացի «Ֆիզիկա» առարկայից, մյուս առարկաներից տղաների միավորները կենտրոնացած են ցածր միավորների շուրջ, հատկապես 8 միավորի:

7. Քննությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների համեմատություն ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 7-ում և 8-ում ըստ բնակավայրերի տիպերի ներկայացված են քննությունների մասնակիցների թվերը, միջին միավորները և ստանդարտ շեղումները:

Աղյուսակ 17

Բնակավայրի տիպը	Հայոց լեզու		Հայ գրականություն		Հայոց պատմություն	
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը (ստ. շեղ.)	Մասնակիցների թիվը	Միջին միավորը (ստ. շեղ.)	Մասնակիցների թիվը	Միջին միավորը (ստ. շեղ.)
Խոշոր քաղաքներ	10692	14,4 (3,2)	11309	14,0 (4,1)	11459	13,6 (4,0)
Միջին քաղաքներ	3979	14,0 (3,4)	4106	13,9 (4,2)	4108	13,4 (4,2)
Փոքր քաղաքներ	2517	14,0 (3,3)	2489	14,1 (4,1)	2557	13,4 (4,2)
Գյուղեր	7712	12,7 (3,1)	8616	12,9 (4,1)	8569	12,4 (4,0)
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	1216	12,5 (3,1)	1269	13,0 (4,1)	1271	12,6 (4,0)
Բարձրլեռնային գյուղեր	933	13,1 (3,1)	1012	13,3 (4,1)	1012	13,1 (4,0)
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	57	11,0 (2,5)	57	13,8 (3,7)	58	13,1 (3,7)


Բնակավայրի տիպը	Մաթեմատիկա		Օտար լեզուներ		Բնագիտական առարկաներ	
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը (ստ. շեղ.)	Մասնակիցների թիվը	Միջին միավոր (ստ. շեղ.)	Մասնակիցների թիվը	Միջին միավորը (ստ. շեղ.)
Խոշոր քաղաքներ	11557	12,6 (3,40)	11413	15,29 (4,0)	11578	14,0 (3,2)
Միջին քաղաքներ	4117	12,4 (3,5)	4112	14,71 (4,1)	4122	14,0 (3,2)
Փոքր քաղաքներ	2558	12,5 (3,4)	2584	14,54 (4,2)	2554	13,9 (3,2)
Գյուղեր	8703	11,2 (3,1)	8657	13,07 (4,2)	8881	12,6 (3,2)
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	1272	11,1 (3,0)	1269	13,17 (4,2)	1272	12,4 (2,8)
Բարձրլեռնային գյուղեր	1012	11,4 (3,2)	1033	13,25 (4,1)	1062	12,4 (3,4)
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	57	12,1 (2,4)	57	12,96 (3,2)	57	13,3 (2,4)

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ քաղաքային բնակավայրերում աշակերտների միջին միավորները նշանակալիորեն չեն տարբերվում միմյանցից, սակայն նշանակալիորեն բարձր են գյուղական բնակավայրերի աշակերտների միջին միավորներից

Արդյունքներն ըստ բնակավայրերի տիպերի ավելի մանրամասն ներկայացված են հավելված 2-ում:

8. Ավարտական քննությունների արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Դիագրամ 7-ում ներկայացված են բոլոր առարկաներից ավարտական քննությունների մասնակիցների միջին միավորներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի:



Արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ավելի մանրամասն ներկայացված են հավելված 3-ում:

Հավելված 1

Վարչատարածքային միավորը	Մասնակիցների ընդհանուր թիվը	Առավելագույն միավորը	Նվազագույն միավորը	Միջին միավորը	Մտանդարտ շեղումը	Անբավարար գնահատական ստացած մասնակիցների		8-13 միավոր հավաքած մասնակիցների		14-17 միավոր հավաքած մասնակիցների		18-20 միավոր հավաքած մասնակիցների	
						թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու (գ.)													
Արագածոտն	1161	20	5	13,4	3,1	1	0,1	597	51,4	432	37,2	131	11,3
Արարատ	2623	20	4	12,6	3,2	34	1,3	1627	62,0	726	27,7	236	9,0
Արմավիր	2289	20	5	12,7	3,3	3	0,1	1427	62,3	607	26,5	252	11,0
Գեղարքունիք	2130	20	7	14,1	3,3	1	0,0	931	43,7	793	37,2	405	19,0
Երևան	8674	20	1	14,4	3,2	4	0,0	3476	40,1	3499	40,3	1695	19,5
Լոռի	2202	20	6	13,6	3,2	2	0,1	1105	50,2	789	35,8	306	13,9
Կոտայք	3139	20	1	13,4	3,1	6	0,2	1653	52,7	1081	34,4	399	12,7
Շիրակ	2093	20	8	13,8	3,3	0	0,0	994	47,5	737	35,2	362	17,3
Սյունիք	1207	20	8	14,2	3,4	0	0,0	501	41,5	448	37,1	258	21,4
Վայոց ձոր	424	20	8	12,6	3,3	0	0,0	269	63,4	119	28,1	36	8,5
Տավուշ	1164	20	4	12,7	3,3	5	0,4	698	60,0	345	29,6	116	10,0

Հայ գրականություն (բ.)													
Արագածոտն	1331	20	5	13,6	4,0	4	0,3	645	48,5	373	28,0	309	23,2
Արարատ	2830	20	4	12,8	4,2	39	1,4	1514	53,5	725	25,6	552	19,5
Արմավիր	2537	20	6	12,9	4,0	1	0,0	1363	53,7	680	26,8	493	19,4
Գեղարքունիք	2281	20	4	14,2	4,1	19	0,8	917	40,2	641	28,1	704	30,9
Երևան	9252	20	1	14,0	4,1	5	0,1	3911	42,3	2808	30,4	2528	27,3
Լոռի	2285	20	2	13,4	4,2	3	0,1	1138	49,8	598	26,2	546	23,9
Կոտայք	3189	20	1	13,2	4,2	5	0,2	1644	51,6	828	26,0	712	22,3
Շիրակ	2230	20	5	14,1	4,0	7	0,3	969	43,5	628	28,2	626	28,1
Սյունիք	1291	20	4	13,7	4,2	8	0,6	597	46,2	351	27,2	335	25,9
Վայոց ձոր	443	20	7	13,0	4,1	1	0,2	245	55,3	94	21,2	103	23,3
Տավուշ	1189	20	8	13,3	4,1	0	0,0	623	52,4	287	24,1	279	23,5

Ռուսաց լեզու (բ.)													
Արագածոտն	900	20	6	13,1	3,9	2	0,2	469	52,1	265	29,4	164	18,2
Արարատ	1904	20	4	12,8	4,4	65	3,4	986	51,8	446	23,4	407	21,4
Արմավիր	1539	20	5	12,6	4,1	1	0,1	877	57,0	375	24,4	286	18,6
Գեղարքունիք	1664	20	8	14,0	4,1	0	0,0	736	44,2	423	25,4	505	30,3
Երևան	4777	20	1	14,7	4,1	1	0,0	1729	36,2	1368	28,6	1679	35,1
Լոռի	1556	20	8	13,4	4,3	0	0,0	784	50,4	369	23,7	403	25,9
Կոտայք	2059	20	1	13,5	4,3	7	0,3	987	47,9	539	26,2	526	25,5
Շիրակ	1641	20	4	14,1	4,1	8	0,5	686	41,8	469	28,6	478	29,1
Սյունիք	859	20	8	13,7	4,1	0	0,0	394	45,9	255	29,7	210	24,4
Վայոց ձոր	251	20	7	13,1	4,1	1	0,4	132	52,6	63	25,1	55	21,9
Տավուշ	863	20	7	13,1	4,3	2	0,2	449	52,0	208	24,1	204	23,6

Հայոց պատմություն (բ.)													
Արագածոտն	1442	20	4	13,1	4,0	5	0,3	772	53,5	380	26,4	285	19,8
Արարատ	2826	20	4	12,3	4,1	31	1,1	1700	60,2	628	22,2	467	16,5
Արմավիր	2538	20	7	12,5	3,9	1	0,0	1484	58,5	627	24,7	426	16,8
Գեղարքունիք	2280	20	2	13,9	4,0	2	0,1	966	42,4	677	29,7	635	27,9
Երևան	9325	20	8	13,6	4,0	0	0,0	4364	46,8	2808	30,1	2153	23,1
Լոռի	2285	20	2	12,8	4,1	4	0,2	1254	54,9	585	25,6	442	19,3
Կոտայք	3101	20	1	12,7	4,1	4	0,1	1764	56,9	766	24,7	567	18,3
Շիրակ	2316	20	5	13,7	4,0	6	0,3	1086	46,9	671	29,0	553	23,9
Սյունիք	1293	20	4	13,2	4,2	25	1,9	650	50,3	314	24,3	304	23,5
Վայոց ձոր	423	20	4	12,4	4,0	1	0,2	251	59,3	99	23,4	72	17,0
Տավուշ	1205	20	8	12,7	4,1	0	0,0	706	58,6	266	22,1	233	19,3

Անգլերեն (բ.)													
Արագածոտն	407	20	5	14,7	4,1	2	0,5	146	35,9	118	29,0	141	34,6
Արարատ	851	20	4	14,0	4,4	36	4,2	318	37,4	237	27,8	260	30,6
Արմավիր	846	20	8	14,6	3,9	0	0,0	315	37,2	242	28,6	289	34,2
Գեղարքունիք	478	20	5	14,8	4,3	14	2,9	148	31,0	128	26,8	188	39,3
Երևան	4315	20	4	16,1	3,7	3	0,1	987	22,9	1204	27,9	2121	49,2
Լոռի	628	20	4	15,5	3,8	1	0,2	175	27,9	193	30,7	259	41,2
Կոտայք	1036	20	8	14,8	4,1	0	0,0	364	35,1	308	29,7	364	35,1
Շիրակ	483	20	2	15,3	4,0	2	0,4	150	31,1	126	26,1	205	42,4
Սյունիք	386	20	4	15,6	4,1	4	1,0	107	27,7	104	26,9	171	44,3
Վայոց ձոր	139	20	5	15,1	4,0	1	0,7	43	30,9	39	28,1	56	40,3
Տավուշ	271	20	8	15,3	4,0	0	0,0	78	28,8	79	29,2	114	42,1

Աշխարհագրություն (գ.)													
Արագածոտն	618	19	8	13,0	2,8	0	0,0	358	57,9	217	35,1	43	7,0
Արարատ	1066	20	4	12,3	3,1	50	4,7	651	61,1	304	28,5	61	5,7
Արմավիր	803	20	4	12,7	3,2	6	0,7	475	59,2	263	32,8	59	7,3
Գեղարքունիք	884	20	4	13,4	3,3	4	0,5	472	53,4	274	31,0	134	15,2
Երևան	3867	20	8	13,5	3,0	0	0,0	1907	49,3	1532	39,6	428	11,1
Լոռի	820	20	5	12,9	2,8	1	0,1	484	59,0	289	35,2	46	5,6
Կոտայք	1334	20	8	12,8	2,7	0	0,0	795	59,6	462	34,6	77	5,8
Շիրակ	677	20	7	13,4	3,3	1	0,1	359	53,0	212	31,3	105	15,5
Սյունիք	529	20	6	12,5	2,9	1	0,2	350	66,2	139	26,3	39	7,4
Վայոց ձոր	182	19	8	12,8	2,9	0	0,0	116	63,7	49	26,9	17	9,3
Տավուշ	494	20	8	13,0	2,8	0	0,0	299	60,5	163	33,0	32	6,5
Պերմաներեն (բ.)													
Արագածոտն	26	20	8	12,0	4,0	0	0,0	17	65,4	5	19,2	4	15,4
Արարատ	105	20	4	11,0	4,4	20	19,0	58	55,2	10	9,5	17	16,2
Արմավիր	72	20	8	12,4	3,8	0	0,0	41	56,9	23	31,9	8	11,1
Գեղարքունիք	161	20	8	14,5	3,9	0	0,0	66	41,0	41	25,5	54	33,5
Երևան	32	20	15	19,3	1,1	0	0,0	0	0,0	1	3,1	31	96,9
Լոռի	110	20	5	13,6	4,3	1	0,9	49	44,5	30	27,3	30	27,3
Կոտայք	60	20	8	12,6	4,5	0	0,0	36	60,0	10	16,7	14	23,3
Շիրակ	123	20	8	14,7	3,8	0	0,0	47	38,2	33	26,8	43	35,0
Սյունիք	36	20	8	15,9	4,6	0	0,0	9	25,0	9	25,0	18	50,0
Վայոց ձոր	29	19	8	13,5	4,0	0	0,0	12	41,4	11	37,9	6	20,7
Տավուշ	36	20	8	15,6	3,6	0	0,0	9	25,0	13	36,1	14	38,9
Կենսաբանություն (գ.)													
Արագածոտն	535	20	7	13,2	3,1	1	0,2	285	53,3	195	36,4	54	10,1
Արարատ	1422	20	4	12,5	3,4	50	3,5	820	57,7	441	31,0	111	7,8
Արմավիր	1164	20	7	12,6	3,1	1	0,1	701	60,2	372	32,0	90	7,7
Գեղարքունիք	1022	20	4	13,7	3,4	11	1,1	464	45,4	376	36,8	171	16,7
Երևան	3078	20	8	14,1	3,2	0	0,0	1296	42,1	1277	41,5	505	16,4
Լոռի	906	20	1	13,0	3,1	3	0,3	508	56,1	310	34,2	85	9,4
Կոտայք	1302	20	1	13,4	3,1	1	0,1	671	51,5	483	37,1	147	11,3
Շիրակ	1013	20	6	13,9	3,2	1	0,1	475	46,9	368	36,3	169	16,7
Սյունիք	444	20	5	13,7	3,3	3	0,7	215	48,4	158	35,6	68	15,3
Վայոց ձոր	202	20	8	13,1	2,9	0	0,0	116	57,4	73	36,1	13	6,4
Տավուշ	560	20	8	12,6	3,0	0	0,0	360	64,3	158	28,2	42	7,5
Ֆրանսերեն (բ.)													
Արագածոտն	66	20	8	13,2	4,4	0	0,0	36	54,5	14	21,2	16	24,2
Արարատ	39	20	8	15,5	3,8	0	0,0	11	28,2	11	28,2	17	43,6
Արմավիր	34	20	10	15,5	2,9	0	0,0	8	23,5	16	47,1	10	29,4
Երևան	141	20	8	15,7	3,9	0	0,0	39	27,7	37	26,2	65	46,1
Կոտայք	62	20	8	14,5	4,2	0	0,0	27	43,5	11	17,7	24	38,7
Շիրակ	76	20	8	14,1	3,6	0	0,0	34	44,7	24	31,6	18	23,7
Սյունիք	11	20	17	19,2	1,1	0	0,0	0	0,0	1	9,1	10	90,9
Վայոց ձոր	12	18	8	11,9	3,8	0	0,0	7	58,3	4	33,3	1	8,3
Տավուշ	35	20	8	12,8	4,6	0	0,0	18	51,4	10	28,6	7	20,0

Մաքնմատիկա (գ.)													
Արագածոտն	1405	20	6	11,7	3,1	1	0,1	1027	73,1	281	20,0	96	6,8
Արարատ	2884	20	8	11,2	3,1	0	0,0	2193	76,0	551	19,1	140	4,9
Արմավիր	2541	20	8	11,6	3,3	0	0,0	1834	72,2	485	19,1	222	8,7
Գեղարքունիք	2281	20	8	12,4	3,5	0	0,0	1454	63,7	545	23,9	282	12,4
Երևան	9434	20	1	12,7	3,4	1	0,0	5678	60,2	2702	28,6	1053	11,2
Լոռի	2293	20	1	11,6	3,1	12	0,5	1649	71,9	510	22,2	122	5,3
Կոտայք	3198	20	1	11,6	3,2	4	0,1	2328	72,8	639	20,0	227	7,1
Շիրակ	2300	20	8	12,5	3,5	0	0,0	1458	63,4	542	23,6	300	13,0
Սյունիք	1291	20	6	12,2	3,6	1	0,1	848	65,7	275	21,3	167	12,9
Վայոց ձոր	444	20	5	11,2	3,1	1	0,2	340	76,6	79	17,8	24	5,4
Տավուշ	1205	20	3	11,3	3,3	5	0,4	901	74,8	206	17,1	93	7,7
Քիմիա (գ.)													
Արագածոտն	65	20	8	13,2	3,3	0	0,0	36	55,4	22	33,8	7	10,8
Արարատ	221	20	4	11,1	4,5	44	19,9	109	49,3	38	17,2	30	13,6
Արմավիր	172	19	8	13,7	3,5	0	0,0	74	43,0	68	39,5	30	17,4
Գեղարքունիք	141	20	4	14,6	4,5	14	9,9	29	20,6	50	35,5	48	34,0
Երևան	458	20	8	13,6	3,5	0	0,0	225	49,1	158	34,5	75	16,4
Լոռի	117	20	8	15,1	3,2	0	0,0	36	30,8	49	41,9	32	27,4
Կոտայք	132	20	8	13,5	3,7	0	0,0	57	43,2	52	39,4	23	17,4
Շիրակ	80	20	8	13,8	3,7	0	0,0	42	52,5	19	23,8	19	23,8
Սյունիք	110	20	5	14,6	4,3	3	2,7	39	35,5	30	27,3	38	34,5
Վայոց ձոր	15	18	8	13,2	2,8	0	0,0	10	66,7	3	20,0	2	13,3
Տավուշ	32	20	8	14,9	2,9	0	0,0	9	28,1	17	53,1	6	18,8
Ֆիզիկա (գ.)													
Արագածոտն	173	19	8	14,1	3,0	0	0,0	74	42,8	74	42,8	25	14,5
Արարատ	370	20	4	12,0	4,2	55	14,9	168	45,4	107	28,9	40	10,8
Արմավիր	403	20	8	13,7	3,2	0	0,0	193	47,9	146	36,2	64	15,9
Գեղարքունիք	284	20	4	13,7	4,1	15	5,3	115	40,5	92	32,4	62	21,8
Երևան	2031	20	8	14,9	3,2	0	0,0	685	33,7	830	40,9	516	25,4
Լոռի	439	20	4	14,0	3,1	1	0,2	187	42,6	189	43,1	62	14,1
Կոտայք	434	20	1	14,0	3,2	1	0,2	183	42,2	170	39,2	80	18,4
Շիրակ	550	20	8	14,3	3,3	0	0,0	225	40,9	195	35,5	130	23,6
Սյունիք	217	20	5	14,2	3,4	3	1,4	93	42,9	76	35,0	45	20,7
Վայոց ձոր	43	19	8	13,0	3,5	0	0,0	23	53,5	15	34,9	5	11,6
Տավուշ	117	20	8	13,9	3,4	0	0,0	51	43,6	44	37,6	22	18,8

Հավելված 2

Էնտալոպիայի տիպը	Մասնակիցների ընդհանուր թիվը	Առավելագույն միավորը	Նվազագույն միավորը	Միջին միավորը	Մասնաբաժան շեղումը	Անբավարար գնահատական ստացած մասնակիցների		8-13 միավոր հավարած մասնակիցների		14-17 միավոր հավարած մասնակիցների		18-20 միավոր հավարած մասնակիցների	
						թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու (գ.)													
Խոշոր քաղաքներ	10692	20	1	14,4	3,2	6	0,1	4221	39,5	4343	40,6	2122	19,8
Միջին քաղաքներ	3979	20	8	14,0	3,4	0	0,0	1787	44,9	1423	35,8	769	19,3
Փոքր քաղաքներ	2517	20	4	14,0	3,3	8	0,3	1126	44,7	930	36,9	453	18,0
Գյուղեր	7712	20	1	12,7	3,1	41	0,5	4784	62,0	2227	28,9	660	8,6
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	1216	20	7	12,5	3,1	1	0,1	788	64,8	327	26,9	100	8,2
Բարձրլեռնային գյուղեր	933	20	8	13,1	3,1	0	0,0	523	56,1	319	34,2	91	9,8
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	57	18	8	11,0	2,5	0	0,0	49	86,0	7	12,3	1	1,8

Հայ գրականություն (բ.)													
Խոշոր քաղաքներ	11309	20	1	14,0	4,1	5	0,0	4796	42,4	3405	30,1	3103	27,4
Միջին քաղաքներ	4106	20	8	13,9	4,2	0	0,0	1814	44,2	1137	27,7	1155	28,1
Փոքր քաղաքներ	2489	20	5	14,1	4,1	7	0,3	1085	43,6	686	27,6	711	28,6
Գյուղեր	8616	20	1	12,9	4,1	58	0,7	4690	54,4	2153	25,0	1715	19,9
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	1269	20	8	13,0	4,1	0	0,0	693	54,6	312	24,6	264	20,8
Բարձրլեռնային գյուղեր	1012	20	4	13,3	4,1	22	2,2	464	45,8	299	29,5	227	22,4
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	57	20	8	13,8	3,7	0	0,0	24	42,1	21	36,8	12	21,1
Ռուսաց լեզու (բ.)													
Խոշոր քաղաքներ	6245	20	1	14,6	4,1	1	0,0	2310	37,0	1785	28,6	2149	34,4
Միջին քաղաքներ	2545	20	8	14,2	4,2	0	0,0	1062	41,7	724	28,4	759	29,8
Փոքր քաղաքներ	1707	20	8	14,1	4,3	0	0,0	752	44,1	413	24,2	542	31,8
Գյուղեր	5806	20	1	12,7	4,2	84	1,4	3165	54,5	1429	24,6	1128	19,4
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	892	20	8	12,8	4,1	0	0,0	507	56,8	213	23,9	172	19,3
Բարձրլեռնային գյուղեր	775	20	6	13,0	4,1	2	0,3	410	52,9	202	26,1	161	20,8
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	43	20	8	13,3	3,1	0	0,0	23	53,5	14	32,6	6	14,0
Հայոց պատմություն (բ.)													
Խոշոր քաղաքներ	11459	20	8	13,6	4,0	0	0,0	5394	47,1	3407	29,7	2658	23,2
Միջին քաղաքներ	4108	20	4	13,4	4,2	26	0,6	1979	48,2	1133	27,6	970	23,6
Փոքր քաղաքներ	2557	20	8	13,4	4,2	0	0,0	1254	49,0	686	26,8	617	24,1
Գյուղեր	8569	20	1	12,4	4,0	47	0,5	5078	59,3	1996	23,3	1448	16,9
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	1271	20	8	12,6	4,0	0	0,0	767	60,3	290	22,8	214	16,8
Բարձրլեռնային գյուղեր	1012	20	4	13,1	4,0	6	0,6	497	49,1	290	28,7	219	21,6
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	58	20	8	13,1	3,7	0	0,0	28	48,3	19	32,8	11	19,0
Անգլերեն (բ.)													
Խոշոր քաղաքներ	4927	20	2	16,1	3,7	4	0,1	1146	23,3	1379	28,0	2398	48,7
Միջին քաղաքներ	1486	20	8	15,5	3,9	0	0,0	416	28,0	426	28,7	644	43,3
Փոքր քաղաքներ	753	20	8	15,7	3,8	0	0,0	203	27,0	207	27,5	343	45,6
Գյուղեր	2105	20	4	14,0	4,2	42	2,0	839	39,9	615	29,2	609	28,9
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	335	20	6	14,0	4,2	1	0,3	147	43,9	88	26,3	99	29,6
Բարձրլեռնային գյուղեր	220	20	5	14,0	4,5	16	7,3	69	31,4	60	27,3	75	34,1
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	14	17	8	11,8	3,2	0	0,0	11	78,6	3	21,4	0	0,0
Աշխարհագրություն (գ.)													
Խոշոր քաղաքներ	4474	20	7	13,6	3,0	1	0,0	2181	48,7	1772	39,6	520	11,6
Միջին քաղաքներ	1413	20	4	13,5	3,2	6	0,4	705	49,9	520	36,8	182	12,9
Փոքր քաղաքներ	1040	20	8	13,2	2,9	0	0,0	579	55,7	360	34,6	101	9,7
Գյուղեր	3419	20	4	12,4	2,9	51	1,5	2188	64,0	989	28,9	191	5,6
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	519	20	6	12,5	2,8	1	0,2	340	65,5	154	29,7	24	4,6
Բարձրլեռնային գյուղեր	390	20	4	12,2	3,0	4	1,0	259	66,4	105	26,9	22	5,6
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	19	19	8	12,7	2,5	0	0,0	14	73,7	4	21,1	1	5,3

Գերմաներեն (բ.)													
Խոշոր քաղաքներ	57	20	8	17,5	3,3	0	0,0	9	15,8	6	10,5	42	73,7
Միջին քաղաքներ	32	20	8	16,0	3,8	0	0,0	8	25,0	8	25,0	16	50,0
Փոքր քաղաքներ	96	20	5	14,9	3,9	1	1,0	29	30,2	34	35,4	32	33,3
Գյուղեր	543	20	4	13,0	4,4	20	3,7	274	50,5	116	21,4	133	24,5
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	24	20	8	15,1	4,7	0	0,0	8	33,3	6	25,0	10	41,7
Բարձրլեռնային գյուղեր	38	20	8	14,1	3,0	0	0,0	16	42,1	16	42,1	6	15,8
Կենսաբանություն (գ.)													
Խոշոր քաղաքներ	3998	20	6	14,0	3,2	1	0,0	1759	44,0	1609	40,2	629	15,7
Միջին քաղաքներ	1833	20	8	13,9	3,2	0	0,0	827	45,1	725	39,6	281	15,3
Փոքր քաղաքներ	1017	20	8	13,9	3,3	0	0,0	455	44,7	404	39,7	158	15,5
Գյուղեր	3813	20	1	12,6	3,2	59	1,5	2259	59,2	1182	31,0	313	8,2
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	481	20	8	12,3	2,7	0	0,0	332	69,0	122	25,4	27	5,6
Բարձրլեռնային գյուղեր	476	20	4	12,7	3,3	11	2,3	264	55,5	156	32,8	45	9,5
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	30	19	10	13,7	2,4	0	0,0	15	50,0	13	43,3	2	6,7
Ֆրանսերեն (բ.)													
Խոշոր քաղաքներ	184	20	8	15,5	3,9	0	0,0	55	29,9	50	27,2	79	42,9
Միջին քաղաքներ	49	20	10	17,9	2,6	0	0,0	6	12,2	5	10,2	38	77,6
Փոքր քաղաքներ	28	19	8	10,7	3,5	0	0,0	22	78,6	5	17,9	1	3,6
Գյուղեր	203	20	8	13,8	3,9	0	0,0	91	44,8	65	32,0	47	23,2
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	18	20	8	13,8	4,6	0	0,0	8	44,4	5	27,8	5	27,8
Մաթեմատիկա (գ.)													
Խոշոր քաղաքներ	11557	20	1	12,6	3,4	4	0,0	7017	60,7	3268	28,3	1268	11,0
Միջին քաղաքներ	4117	20	4	12,4	3,5	1	0,0	2619	63,6	1008	24,5	489	11,9
Փոքր քաղաքներ	2558	20	8	12,5	3,4	0	0,0	1609	62,9	627	24,5	322	12,6
Գյուղեր	8703	20	1	11,2	3,1	15	0,2	6679	76,7	1496	17,2	513	5,9
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	1272	20	3	11,1	3,0	5	0,4	1000	78,6	198	15,6	69	5,4
Բարձրլեռնային գյուղեր	1012	20	8	11,4	3,2	0	0,0	749	74,0	199	19,7	64	6,3
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	57	18	8	12,1	2,4	0	0,0	37	64,9	19	33,3	1	1,8
Քիմիա (գ.)													
Խոշոր քաղաքներ	588	20	8	13,9	3,5	0	0,0	269	45,7	208	35,4	111	18,9
Միջին քաղաքներ	270	20	8	15,1	3,5	0	0,0	76	28,1	107	39,6	87	32,2
Փոքր քաղաքներ	165	20	8	15,0	3,3	0	0,0	53	32,1	63	38,2	49	29,7
Գյուղեր	373	20	4	11,7	4,1	47	12,6	196	52,5	88	23,6	42	11,3
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	74	20	8	12,1	3,4	0	0,0	47	63,5	22	29,7	5	6,8
Բարձրլեռնային գյուղեր	65	19	4	12,2	5,3	14	21,5	21	32,3	14	21,5	16	24,6
Ֆիզիկա (գ.)													
Խոշոր քաղաքներ	2518	20	8	14,8	3,2	0	0,0	869	34,5	1039	41,3	610	24,2
Միջին քաղաքներ	606	20	8	14,5	3,3	0	0,0	225	37,1	238	39,3	143	23,6
Փոքր քաղաքներ	332	20	8	15,5	3,3	0	0,0	93	28,0	120	36,1	119	35,8
Գյուղեր	1276	20	1	13,1	3,6	60	4,7	616	48,3	444	34,8	156	12,2
Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	198	20	8	12,6	2,9	0	0,0	125	63,1	60	30,3	13	6,6
Բարձրլեռնային գյուղեր	131	20	4	11,8	3,9	15	11,5	69	52,7	37	28,2	10	7,6

Հավելված 3

Ուսումնական հաստատությունների տիպը	Մասնակիցների ընդհանուր թիվը	Ատոմկազմյան միավորը	Նվազագույն միավորը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Անբավարար գնահատական ստացած մասնակիցների		8-13 միավոր հավարած մասնակիցների		14-17 միավոր հավարած մասնակիցների		18-20 միավոր հավարած մասնակիցների	
						թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու (գ.)													
Ավագ	71	19	5	11,9	3,2	4	5,6	46	64,8	19	26,8	2	2,8
Հիմնական	15475	20	1	14,2	3,3	10	0,1	6460	41,7	6015	38,9	2990	19,3
Միջնակարգ	10879	20	1	12,8	3,2	42	0,4	6550	60,2	3259	30,0	1028	9,4
Վարժարան	427	20	8	15,9	2,7	0	0,0	87	20,4	203	47,5	137	32,1
Կրթահամալիր	251	20	8	13,6	3,3	0	0,0	135	53,8	78	31,1	38	15,1

Հայ գրականություն (բ.)													
Ավագ	244	20	8	15,2	4,1	0	0,0	80	32,8	69	28,3	95	38,9
Հիմնական	15292	20	1	14,0	4,1	11	0,1	6578	43,0	4428	29,0	4275	28,0
Միջնակարգ	12015	20	1	12,9	4,1	79	0,7	6448	53,7	3072	25,6	2416	20,1
Հենակետային	32	19	12	16,6	2,5	0	0,0	5	15,6	12	37,5	15	46,9
Վարժարան	427	20	1	15,2	3,6	2	0,5	111	26,0	172	40,3	142	33,3
Կրթահամալիր	251	20	8	14,4	4,0	0	0,0	96	38,2	81	32,3	74	29,5
Մասնագիտացված	144	20	8	12,7	4,4	0	0,0	80	55,6	36	25,0	28	19,4
ՄՊԸ	443	20	8	14,8	3,7	0	0,0	158	35,7	143	32,3	142	32,1

Ռուսաց լեզու (բ.)													
Ավագ	128	20	8	15,4	4,2	0	0,0	38	29,7	30	23,4	60	46,9
Հիմնական	9205	20	1	14,4	4,1	3	0,0	3651	39,7	2586	28,1	2965	32,2
Միջնակարգ	8192	20	1	12,8	4,2	84	1,0	4440	54,2	2014	24,6	1654	20,2
Հենակետային	23	19	10	16,5	2,6	0	0,0	3	13,0	9	39,1	11	47,8
Վարժարան	168	20	8	17,1	2,6	0	0,0	19	11,3	54	32,1	95	56,5
Կրթահամալիր	109	20	8	15,6	3,8	0	0,0	26	23,9	41	37,6	42	38,5
Մասնագիտացված	76	20	8	14,1	4,6	0	0,0	32	42,1	18	23,7	26	34,2
ՄՊԸ	106	20	8	17,2	2,8	0	0,0	14	13,2	28	26,4	64	60,4

Հայոց պատմություն (բ.)													
Ավագ	244	20	8	15,4	3,9	0	0,0	70	28,7	78	32,0	96	39,3
Հիմնական	15513	20	1	13,5	4,1	28	0,2	7326	47,2	4519	29,1	3640	23,5
Միջնակարգ	11966	20	1	12,5	4,0	51	0,4	7030	58,7	2814	23,5	2071	17,3
Հենակետային	32	20	8	16,0	3,2	0	0,0	6	18,8	12	37,5	14	43,8
Վարժարան	427	20	8	15,0	3,7	0	0,0	136	31,9	156	36,5	135	31,6
Կրթահամալիր	255	20	8	13,1	3,9	0	0,0	138	54,1	73	28,6	44	17,3
Մասնագիտացված	144	20	8	12,4	4,0	0	0,0	79	54,9	47	32,6	18	12,5
ՄՊԸ	443	20	8	13,8	4,1	0	0,0	202	45,6	122	27,5	119	26,9

Անգլերեն (բ.)													
Ավագ	66	20	8	16,8	3,9	0	0,0	12	18,2	13	19,7	41	62,1
Հիմնական	6134	20	2	15,8	3,8	5	0,1	1555	25,4	1726	28,1	2848	46,4
Միջնակարգ	3033	20	4	14,2	4,2	58	1,9	1177	38,8	872	28,8	926	30,5
Վարժարան	259	20	8	17,6	3,1	0	0,0	32	12,4	59	22,8	168	64,9
Կրթահամալիր	146	20	8	16,6	3,1	0	0,0	24	16,4	42	28,8	80	54,8
Մասնագիտացված	30	20	8	14,9	4,7	0	0,0	12	40,0	5	16,7	13	43,3
ՄՊԸ	166	20	8	16,9	2,8	0	0,0	19	11,4	60	36,1	87	52,4

Աշխարհագրություն (գ.)													
Ավագ	111	20	8	13,4	3,2	0	0,0	63	56,8	32	28,8	16	14,4
Հիմնական	6048	20	4	13,7	3,0	7	0,1	2882	47,7	2429	40,2	730	12,1
Միջնակարգ	4697	20	4	12,4	2,9	56	1,2	3053	65,0	1342	28,6	246	5,2
Վարժարան	44	18	8	12,0	2,3	0	0,0	36	81,8	6	13,6	2	4,5
Կրթամամուլի	85	19	8	12,4	3,4	0	0,0	61	71,8	14	16,5	10	11,8
Մասնագիտացված	64	19	8	12,4	3,4	0	0,0	42	65,6	17	26,6	5	7,8
ՄՊԸ	210	20	8	13,1	3,5	0	0,0	119	56,7	61	29,0	30	14,3
Վերաներևն (բ.)													
Հիմնական	192	20	5	15,3	3,9	1	0,5	58	30,2	55	28,6	78	40,6
Միջնակարգ	588	20	4	13,2	4,4	20	3,4	286	48,6	131	22,3	151	25,7
Կենսաբանություն (գ.)													
Ավագ	101	20	8	15,8	3,2	0	0,0	21	20,8	44	43,6	36	35,6
Հիմնական	5941	20	6	14,0	3,2	1	0,0	2601	43,8	2399	40,4	940	15,8
Միջնակարգ	5263	20	1	12,7	3,2	70	1,3	3124	59,4	1637	31,1	432	8,2
Հենակետային	14	19	15	16,7	1,5	0	0,0	0	0,0	9	64,3	5	35,7
Վարժարան	118	19	8	13,7	2,4	0	0,0	55	46,6	55	46,6	8	6,8
Կրթամամուլի	62	20	8	13,6	2,8	0	0,0	32	51,6	22	35,5	8	12,9
Մասնագիտացված	60	20	8	13,1	3,1	0	0,0	34	56,7	20	33,3	6	10,0
ՄՊԸ	89	20	8	13,6	4,0	0	0,0	44	49,4	25	28,1	20	22,5
Ֆրանսերեն (բ.)													
Ավագ	32	20	11	17,6	2,6	0	0,0	3	9,4	7	21,9	22	68,8
Հիմնական	167	20	8	15,2	4,4	0	0,0	57	34,1	31	18,6	79	47,3
Միջնակարգ	269	20	8	13,9	3,8	0	0,0	119	44,2	88	32,7	62	23,0
Մաթեմատիկա (գ.)													
Ավագ	280	20	8	14,1	3,6	0	0,0	127	45,4	96	34,3	57	20,4
Հիմնական	15591	20	1	12,6	3,4	7	0,0	9601	61,6	4217	27,0	1766	11,3
Միջնակարգ	12080	20	1	11,2	3,1	18	0,1	9254	76,6	2097	17,4	711	5,9
Հենակետային	32	20	11	15,8	2,1	0	0,0	4	12,5	19	59,4	9	28,1
Վարժարան	427	20	8	14,1	3,6	0	0,0	182	42,6	146	34,2	99	23,2
Կրթամամուլի	255	20	8	13,1	3,1	0	0,0	143	56,1	92	36,1	20	7,8
Մասնագիտացված	144	20	8	10,5	2,8	0	0,0	122	84,7	18	12,5	4	2,8
ՄՊԸ	457	20	8	12,7	3,6	0	0,0	267	58,4	130	28,4	60	13,1
Քիմիա (գ.)													
Հիմնական	820	20	8	14,8	3,5	0	0,0	273	33,3	319	38,9	228	27,8
Միջնակարգ	595	20	4	11,8	4,0	61	10,3	327	55,0	139	23,4	68	11,4
Վարժարան	21	20	11	15,4	2,6	0	0,0	5	23,8	9	42,9	7	33,3
Կրթամամուլի	54	20	8	12,3	2,6	0	0,0	37	68,5	15	27,8	2	3,7
ՄՊԸ	34	19	8	14,2	3,1	0	0,0	13	38,2	18	52,9	3	8,8
Ֆիզիկա (գ.)													
Ավագ	60	20	8	15,1	3,0	0	0,0	15	25,0	28	46,7	17	28,3
Հիմնական	2785	20	8	14,9	3,2	0	0,0	925	33,2	1106	39,7	754	27,1
Միջնակարգ	1772	20	1	12,9	3,5	75	4,2	904	51,0	587	33,1	206	11,6
Հենակետային	11	19	12	16,0	2,0	0	0,0	1	9,1	8	72,7	2	18,2
Վարժարան	243	20	8	15,0	2,6	0	0,0	71	29,2	125	51,4	47	19,3
Կրթամամուլի	55	18	8	13,5	2,3	0	0,0	25	45,5	27	49,1	3	5,5
Մասնագիտացված	11	20	8	13,6	4,1	0	0,0	7	63,6	1	9,1	3	27,3
ՄՊԸ	124	20	8	13,9	3,3	0	0,0	49	39,5	56	45,2	19	15,3

Գոհար ՉԱԼՈՒՄՅԱՆ


ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
առաջատար մասնագետ

<<Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ուսուցիչների ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագրի>> առարկայական գիտելիքների ստուգման արդյունքները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021թ. հունվարի 26-ի N 21-Ն հրամանով հաստատվել է «Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ուսուցիչների ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագիրը»: Այս ծրագրի իրականացման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության <<Հանրակրթության մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.12-րդ և 26-րդ հոդվածի 32-րդ կետերը [2]:

2021 թվականի սեպտեմբերի 18-26-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է վերոնշյալ ծրագրով ուսուցիչների առարկայական գիտելիքների ստուգում <<Հայոց լեզու>>, <<Հայոց պատմություն>>, <<Մաթեմատիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Ֆիզիկա>> և <<Աշխարհագրություն>> առարկաներից:

Կամավոր ատեստավորման համար հայտագրվել էին 7-12-րդ դասարաններում դասավանդող 1373 ուսուցիչ, քննություններին մասնակցել է 996 ուսուցիչ (հայտագրվածների 73%-ը), բացակայել է 377 ուսուցիչ (հայտագրվածների 27%-ը):



Գիտելիքների ստուգման արդյունքները

Առարկայական գիտելիքների ստուգման թեստերից մինչև 59% արդյունք ցուցաբերած 346 ուսուցիչ չի հաղթահարել թեստերի առաջադրանքների կատարման միավորների նվազագույն շեմը (ատեստավորվածների 35%-ը):

Ուսուցիչների կամավոր ատեստավորման արդյունքների ամփոփման ժամանակ ԿԳՄՍ փոխնախարարը հայտարարել է¹, որ ատեստավորման այս փուլը փորձնական է, և այն որևէ հետևանք չի կարող ունենալ նվազագույն շեմը չհաղթահարած ուսուցիչների համար:

60%-69% արդյունք ցուցաբերած 169 ուսուցիչ (ատեստավորվածների 17%-ը) համարվում է նվազագույն շեմը հաղթահարած:

70%-79% արդյունք ցուցաբերած 160 ուսուցիչ (ատեստավորվածների 16%-ը) աշխատավարձն ավելանալու է 30%-ով:

¹ Ամփոփվել են կամավոր ատեստավորման տվյալներն ու բողոքարկման արդյունքները, <https://escs.am/am/news/10522>


80%-89% արդյունք ցուցաբերած 153 ուսուցչի (ատեստավորվածների 15%-ը) աշխատավարձն ավելանալու է 40%-ով:

90%-100% արդյունք ցուցաբերած 168 ուսուցչի (ատեստավորվածների 17%) աշխատավարձն ավելանալու է 50%-ով:

Ուսուցիչներն այս հավելավճարները կստանան հինգ տարի:

Ուսուցիչների արդյունքները ըստ թեստերի առաջադրանքների ճիշտ պատասխանների տոկոսային խմբերի

Դիագրամ 2



Թեստերի կառուցվածքը

Բոլոր առարկաներից եղել է թեստերի 4-ական տարբերակ: <<Հայոց լեզու>>, <<Հայոց պատմություն>> և <<Աշխարհագրություն>> առարկաների թեստերը բաղկացած են եղել 80 առաջադրանքից, իսկ <<Մաթեմատիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>> և <<Ֆիզիկա>> առարկաների թեստերը՝ 70 առաջադրանքից:

<<Քիմիա>> առարկայի գրավոր աշխատանքի կատարման համար մասնակիցներին տրվել է 4 ժամ, <<Հայոց լեզու>> առարկայի համար՝ 3 ժամ 30 րոպե, մյուս առարկաների համար՝ 3 ժամ:

Ստորև ներկայացված են աստեստավորման թեստերի որակական բնութագրիչները՝ բարդության գործակիցը², տարբերակման գործակիցը³ և թեստի հուսալիության գործակիցը⁴:

Բարդությունը

Աստեստավորման առարկան	Բարդության գործակից				
	Թեստ 1	Թեստ 2	Թեստ 3	Թեստ 4	Հակիրճ բացատրություն
Հայոց լեզու	0.6	0.7	0.6	0.6	միջին բարդության
Հայոց պատմություն	0.6	0.3	0.6	0.5	միջին բարդության
Մաթեմատիկա	0.88	0.85	0.86	0.88	հեշտ
Քիմիա	0.7	0.4	0.5	0.5	միջին բարդության
Կենսաբանություն	0.6	0.6	0.6	0.5	միջին բարդության
Աշխարհագրություն	0.6	0.7	0.6	0.6	միջին բարդության
Ֆիզիկա	0.65	0.71	0.71	0.61	միջին բարդության

² Բարդություն (դասական): Առաջադրանքը համարվում է շատ հեշտ, երբ բարդության գործակիցը (P) գտնվում է 0,9-1,0 սահմաններում: 0,75≤P≤0,89 սահմաններում առաջադրանքը հեշտ է, 0,30≤P≤0,74 սահմաններում՝ միջին բարդության, 0,20≤P≤0,29 սահմաններում՝ բարդ, P≤0,19 դեպքում՝ շատ բարդ:

³ Տարբերակում: Առաջադրանքն ունի շատ լավ տարբերակում (D), երբ D≥0,4, 0,30≤D≤0,39 դեպքում՝ լավ, 0,20≤D≤0,29 դեպքում՝ միջին և D≤0,19 դեպքում՝ վատ, D<0 դեպքում՝ բացասական:

⁴ Հուսալիության գործակիցը 0-ից 1 հատվածին պատկանող թիվ է: Որքան այդ գործակիցը մոտ է 1 թվին՝ թեստն այդքան հուսալի է:

Տարբերակումը

Ատեստավորման առարկան	Հուսալիության գործակից				Հակիրճ բացատրություն
	Թեստ 1	Թեստ 2	Թեստ 3	Թեստ 4	
Հայոց լեզու	0.94	0.94	0.95	0.94	շատ լավ է
Հայոց պատմություն	0.96	0.96	0.969	0.97	շատ լավ է
Մաթեմատիկա	0.94	0.95	0.96	0.94	շատ լավ է
Քիմիա	0.93	0.92	0.93	0.90	շատ լավ է
Կենսաբանություն	0.92	0.92	0.90	0.92	շատ լավ է
Աշխարհագրություն	0.84	0.64	0.79	0.81	լավ է
Ֆիզիկա	0.95	0.94	0.95	0.96	շատ լավ է


Հուսալիությունը

Ատեստավորման առարկան	Տարբերակման գործակից				Հակիրճ բացատրություն
	Թեստ 1	Թեստ 2	Թեստ 3	Թեստ 4	
Հայոց լեզու	0.45	0.4	0.46	0.44	Շատ լավ տարբերակում
Հայոց պատմություն	0.5	0.73	0.56	0.58	շատ լավ տարբերակում
Մաթեմատիկա	0.29	0.34	0.37	0.3	միջին և լավ տարբերակում
Քիմիա	0.49	0.39	0.44	0.35	լավ և շատ լավ տարբերակում
Կենսաբանություն	0.37	0.38	0.36	0.41	լավ և շատ լավ տարբերակում
Աշխարհագրություն	0.3	0.2	0.2	0.2	լավ և միջին տարբերակում
Ֆիզիկա	0.51	0.41	0.48	0.56	Շատ լավ տարբերակում

Ամենաշատը թեստերի նվազագույն շեմը չեն հաղթահարել <<Քիմիա>> առարկայի (65%), իսկ ամենաքիչը՝ <<Մաթեմատիկա>> առարկայի (6%) ուսուցիչները (տե՛ս դիագրամ 3):


Մինչև 59% արդյունք ցուցաբերած ուսուցիչների թիվը ըստ ուսումնական առարկաների

Դիագրամ 3




60%-69% արդյունք ցուցաբերած ուսուցիչների թիվը ըստ ուսումնական առարկաների

Դիագրամ 4



70% և ավելի բարձր արդյունք ցուցաբերած ուսուցիչների թիվը ըստ ուսումնական առարկաների

Դիագրամ 5



Ուսուցիչների առարկայական գիտելիքների ստուգման արդյունքներով ուսուցիչների խմբերը (ուսուցիչների թիվը, տոկոսը) ըստ առարկաների ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ատեստավորման առարկան	90%-100%		80%-89%		70%-79%		60%-69%		59% և ավելի ցածր		Ընդամենը
	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	
Հայոց լեզու	7	2	64	21	54	18	61	20	117	39	303
Հայոց պատմություն	6	5.5	14	13	19	17.5	13	12	56	52	108
Մաթեմատիկա	143	59	48	20	19	8	16	7	15	6	241
Քիմիա	2	2.3	2	2.3	11	12	16	18	59	65.5	90
Կենսաբանություն	0	0	4	5	19	21	17	19	49	55	89
Աշխարհագրություն	0	0	4	5	20	24	33	39	27	32	84
Ֆիզիկա	10	12.3	17	21	18	22.22	13	16	23	28.4	81
Ընդամենը	168		153		160		169		346		996

Ուսումնասիրվել են 90 և ավելի տոկոս արդյունք ապահոված ուսուցիչների տվյալները: Ինչպես նշվել է, այս ուսուցիչների թիվը 168 է, նրանք դասավանդում են 121 հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Առարկայական գիտելիքների ստուգման ժամանակ 90% և ավելի բարձր արդյունք ցուցաբերած ուսուցիչների բաշխվածությունը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 2

ՀՀ վարչատարածքային միավորներ	Ուսուցիչների թիվը	Ուսուցիչների տոկոսը	Ատեստավորված ուսուցիչների ընդհանուր թիվը
Արագածոտն	5	9	53
Արարատ	8	11	70
Արմավիր	12	15	82
Գեղարքունիք	8	8	97
Երևան	52	21	252
Լոռի	19	21	92
Կոտայք	21	22	96
Շիրակ	23	21	112
Սյունիք	11	16	68
Վայոց ձոր	1	7	14
Տավուշ	8	13	60
ԸՆԴՀԱՄԵՆԸ	168		996

Աղյուսակ 2-ում երևում է, որ ատեստավորմանն առավել շատ մասնակցել են Երևանի և Շիրակի մարզի ուսուցիչները:

Եզրակացություն


Այսպիսով, ամփոփվել են ուսուցիչների կամավոր ատեստավորման փորձնական ծրագրի արդյունքները, որին մասնակցել էին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-12-րդ դասարաններում դասավանդող 996 ուսուցիչներ: 481 ուսուցիչ (48,2%) իրենց ցուցաբերած արդյունքների հիման վրա ստանալու են խրախուսում՝ աշխատավարձի 30-50% բարձացում հինգ տարվա ընթացքում: Այն ուսուցիչները, որոնք չեն հաղթահարել գրավոր առաջադրանքների մինչև 69% ձիշտ պատասխանների շեմը՝ կշարու-

նակեն կրթական գործունեությունը իրենց նախկին աշխատավարձով: Ակնկալվում է, որ ատեստավորմանը մասնակցող ուսուցիչների թիվը հաջորդ փուլերում կաճի:

Օգտագործված աղբյուրներ

1. ՀՀ Հանրակրթության մասին օրենք,
<http://parliament.am/legislation.php?sel=show&ID=3674&lang=arm>
2. Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին հրաման
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149769>
3. Հաստատվել է ուսուցիչների կամավոր ատեստավորման փորձնական ծրագիրը, <https://escs.am/am/news/7932>
4. Հաստատվել են կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների անվանացանկերը,
https://hraparak.am/post/71cba479c67a8d5f5b3d434804492ce9?fbclid=IwAR2RjyuTiT9kDk36TedgCmFVeIjS5unQ1f_uhW-0gRbXSLmY7Vzy_g9c2aE
5. Բաղդասարյան Ա., Թեստաբանություն և թեստի տեսություն, Երևան, 2018թ, էջ 96
6. 2021 թ. Ուսուցիչների ատեստավորման տվյալների էլեկտրոնային բազաներ

ՀՈԴՎԱԾՆԵՐ



<<Ատեստավորումը հրաշալի հնարավորություն է ուսուցիչների համար>>

Հարցազրույց Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի տեղակալ Կարո ՆԱՍԻԲՅԱՆԻ հետ

- Պարո՛ն Նասիբյան, 2021 թվականին իրականացվեց <<Մեփական նախաձեռնությամբ (կամավոր) ուսուցիչների ատեստավորման համակարգի ներդրման փորձնական ծրագիրը>>: Ինչպե՛ս ընթացան այդ համակարգի ներդրման նախապատրաստական աշխատանքները, և որն էր այդ ծրագրի նպատակը:

- Գործընթացը եկեք անվանենք ոչ թե ուսուցչի ատեստավորման, այլ ատեստավորման մի բաղադրիչի, այն է՝ ուսուցչի առարկայական գիտելիքի ստուգում: Այն սկսելուց առաջ ԿԳՄՍ նախարարությունում փոխնախարար Ժաննա Անդրեասյանի մասնակցությամբ մի շարք քննարկումներ են եղել: Որոշվել է, որ, համենայն դեպս սկզբնական շրջանում, ծրագիրը լինի փորձնական, իսկ այս գործընթացը՝ կամավոր: Նպատակը ուսուցիչների աշխատավարձի որոշ չափով բարձրացումն էր:

Եղավ համապատասխան հայտարարություն, ուսուցիչների առարկայական գիտելիքի ստուգման կազմակերպումն ու իրականացումը հանձնարարվեց Գնահատման և թեստավորման կենտրոնին: Նախատեսվեց ատեստավորումն անցկացնել յոթ առարկայից՝ հայոց լեզու, հայոց պատմություն, նաև մաթեմատիկա, քիմիա,

Ֆիզիկա, կենսաբանություն և վերջին պահին ավելացվեց աշխարհագրությունը: Սկզբում մտածում էինք, որ ատեստավորումը կանցկացվի նաև մարզերում, սակայն դիմորդ ուսուցիչների թվով պայմանավորված՝ որոշվեց այն անցկացնել Երևանում՝ չորս կենտրոններում՝ թիվ 46, թիվ 189, թիվ 190 և թիվ 118 ավագ դպրոցներում, շաբաթ և կիրակի օրերին: Ատեստավորման թեստերը կազմել էին մեր մասնագետը, դասախոս-գիտնականը և ուսուցիչը, դրանցում առարկայական չափորոշիչներից, ծրագրերից ու դասագրքերից դուրս հարցեր և առաջադրանքներ չեն եղել: Ուսումնասիրել ենք այլ երկրների ուսուցիչների ատեստավորման փորձը, որն այնքան էլ մեծ չէր: Որոշեցինք թեստերում ներառել ոչ շատ պարզ և ոչ շատ բարդ հարցեր և առաջադրանքներ: Բնագիտական առարկաների թեստերի առաջադրանքները կատարելով ուսուցիչը կարող էր հավաքել առավելագույնը 70 միավոր, իսկ հայոց լեզվի, հայոց պատմության և աշխարհագրության ուսուցիչները՝ 80 միավոր:

- Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է միայն առարկայական գիտելիքի ստուգմամբ պարզել ուսուցիչների մասնագիտական որակները: Այս հարցի վերաբերյալ հնչում են տարբեր կարծիքներ:

- Իհարկե, ատեստավորումը ավելի ընդգրկուն հասկացություն է: Այն, առարկայական գիտելիքի ստուգումից բացի, ներառում է նաև դասավանդման մեթոդները, ուսուցչի փորձը և վերջապես այն, թե ինչ <<արտադրանք>> է տալիս ուսուցիչը, այսինքն՝ ինչպիսի որակներ ունեն նրա աշակերտները: Արտասահմանյան շատ երկրներում կան ատեստավորման մեծ հիմնարկներ, կազմակերպություններ: Մենք այդպիսի կազմակերպություն ստեղծելու, վերապատրաստելու և նրա կողմից լայնածավալ աշխատանք կատարելու (դասալսումներ, գրավոր աշխատանքների ստուգում և այլն) ժամանակը չունեինք, ուստի որոշվեց կանգ առնել մեկ բաղադրիչի՝ ուսուցչի գիտելիքի ստուգման վրա: Իհարկե, հասարակության, մասնավորապես ուսուցիչների կողմից եղան դժգոհություններ՝ որ,

օրինակ, ուսուցիչը կարող է լավ գիտելիք ունենա, բայց չկարողանա մատուցել աշակերտին, չկարողանա իր իմացածը սովորեցնել նրան: Սակայն, եկեք ընդունենք, որ գիտելիքը, թերևս, ամենակարևոր բաղադրիչն է. եթե ուսուցիչը չունի համապատասխան առարկայական գիտելիքներ, նրա մյուս կարողությունները մղվում են երկրորդ պլան:

- Ատեստավորմանը մասնակցեց մոտ 1000 ուսուցիչ: Ձեր կարծիքով, ո՞րն էր ուուցիչների սակավաթիվության պատճառը:

- Դիմում-հայտ ներկայացրին 1373, մասնակցեցին 996 ուսուցիչներ: Մեծ էր բացակաների թիվը: Առավել շատ ուսուցիչներ մասնակցեցին «Հայոց լեզու» առարկայից առարկայական գիտելիքի ստուգմանը: Իմ կարծիքով, այդ գործընթացի քիչ թվով ուսուցիչների մասնակցության պատճառները տարբեր էին: Ուսուցիչների մի մասը, հավանաբար, այնքան էլ վստահ չէր իր գիտելիքի վրա, կան ուսուցիրներ, որոք իրենց գյուղում, քաղաքում, տարածաշրջանում իրավամբ լավ ուսուցչի համարում ունեն և հավանաբար մտածել են՝ սա ատեստավորման առաջին փորձն է, տեսնենք ինչպես է անցկացվում, ինչ ստուգումներ են լինում: Կարճ ասած՝ չեն ցանկացել ռիսկի դիմել: Նրանց մի մասն էլ մասնակցեց ատեստավորմանը և, ինչպես ասում են, «փուչիկը պայթեց», այդ ուսուցիչներից ոմանք չհաղթահարեցին անգամ, այսպես կոչված, դրական միավորների նվազագույն շեմը:

- Ուսուցիչների կողմից եղան դժգոհություններ, բողոքարկումներ...

- Բողոքարկումը ատեստավորման նախատեսված գործընթացներից մեկն է: Կրկնեն, որ սա փորձնական ատեստավորում էր, և ամեն ինչ այնքան էլ հարթ չընթացավ: Մասնավորապես, սխալ էին ներկայացվել «Քիմիա» առարկայի 3-րդ թեստի պատասխանները, սակայն ստուգումը կատարվել է ճիշտ պատասխաններով:

Ջարմանալին այն էր, որ այս երևույթի դեմ բողոքել էին ոչ միայն 3-րդ, այլև 1-ին, 2-րդ և 4-րդ թեստերով ատեստավորված ուսուցիչները: Մեզ համար անակնկալ էր, որ բողոքողների մեջ կային ուսուցիչներ, որոնք անհավաստալի քիչ թվով միավորներ էին ստացել:

- Ատեստավորված ուսուցիչների ավելի քան 1/3-ը չի հաղթահարել առարկայական թեստերի առաջադրանքների կատարման միավորների նվազագույն շեմը: Նշանակո՞ւմ է դա, արդյոք, որ այդ ուսուցիչների մասնագիտական որակները չեն համապատասխանում ներկայիս պահանջներին, և ի՞նչ միջոցներ են նախատեսվում ձեռնարկել նրանց նկատմամբ:

- Այո՛, ցավոք, այդպիսի ուսուցիչների թիվը մեծ է: Պատճառը, կարծում եմ, այդ ուսուցիչների անհիմն բարձր ինքնագնահատականն էր: Սկզբում կարգով նախատեսված էր, որ միավորների նվազագույն դրական շեմը չհաղթահարած ուսուցիչները պետք է մեկ տարվա ընթացքում պատրաստվեն և նորից մասնակցեն ատեստավորմանը և կրկին ձախողման դեպքում ազատվեն աշխատանքից, սակայն հետագայում նախարարությունը փոխեց կարգը՝ հաշվի առնելով այն, որ այս ատեստավորումը փորձնական էր:

Ամփոփելով՝ կրկնեմ, որ ատեստավորումը շատ լավ հնարավորություն է ուսուցիչների համար՝ դրսևորելով իրենց առարկայի իմացությունը՝ բարձրացնելու իրենց աշխատավարձը: Կարգով նախապես սահմանված էր առաջին երկու տարիներին իրականացնել կամավոր ատեստավորում, իսկ 2023 թվականից՝ պարտադիր, սակայն հետո որոշվեց, որ ատեստավորումը լինի միայն կամավոր: Հաջորդ ատեստավորումը կազմակերպվելու է սեպտեմբեր-հոկտեմբերին՝ 5-12-րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչների համար:

Հարցազրույցը վարեց Աշոտ ՂԱԶԱՐՈՍՅԱՆԸ

Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳԹԿ փոխտնօրեն

Թեստավորումը որպես գնահատման ձև*

Գնահատումը մի գործընթաց է, որի արդյունքում գնահատողը որոշակի եզրակացության է հանգում գնահատվողի՝ գնահատման ենթակա հատկությունների վերաբերյալ:

Առավել մանրակրկիտ և խորքային գնահատման համար գնահատողը պետք է բազմակողմանի ուսումնասիրի գնահատվողի գիտելիքների մակարդակը, արձանագրի դրանք, պարզի գնահատվողի հնարավորությունները, որոնք այդ պահին չեն դրսևորվում, սակայն ճիշտ զարգացման դեպքում կդրսևորվեն ապագայում: Մրա հավանաբար ամենաարդյունավետ ձևը անձնական շփումն է, ինչի ընթացքում գնահատողը հարցերին տրվող պատասխանների հիման վրա լիարժեք պատկերացում է կազմում գնահատվողի մասին: Այդպիսին են, օրինակ, բուհերում կիրառվող բանավոր քննությունները: Սակայն *բանավոր քննությունը կիրառելի չէ, եթե գնահատվողների թիվը բավականին մեծ է:*

Գնահատման մյուս տարածված ձևը գրավոր ստուգողական աշխատանքն է: Սա արդեն որոշակի նահանջ է բանավոր քննության նկատմամբ, քանի որ չկա անձնական շփում. գնահատվում է գրվածը, և ճշգրտող հարցեր տալու հնարավորություն չկա: Սակայն այս դեպքում ևս աշակերտը կարող է ազատ շարադրանքի միջոցով ցուցաբերել իր գիտելիքների խորքայնությունը: Այդպիսին էին, օրինակ, տարիներ առաջ Հայաստանում գործող բուհերի ընդունելության *կենտրոնացված* քննությունները:

-
- Հատված Ա. Բաղդասարյանի <<Թեստաբանության հիմունքներ>> գրքից, Երևան, 2018, էջ 33-42:

Գրավոր ստուգողական աշխատանքը հիմնականում պարունակում է 5-8 առաջադրանք: Այստեղ էլ ի հայտ է գալիս մի ուրիշ էական թերություն. դրանցով հնարավոր չէ լիարժեք պատկերացում կազմել աշակերտի գիտելիքների մասին՝ քննվող նյութի ամբողջ ծավալի վերաբերյալ:

Այսպիսով, եթե գնահատման գործընթացը պետք է կիրառվի՝

- մեծ թվով մասնակիցների նկատմամբ,
- մեծ ծավալի նյութի վերաբերյալ,
- կարճ ժամանակում,

ապա թեստավորման մեթոդը դառնում է անփոխարինելի:

Ասվածից չի բխում, որ թեստավորման մեթոդը կիրառելի է գնահատման ցանկացած իրավիճակում, մասնավորապես, այն չի հայտնաբերում գնահատվողի խորքային հնարավորությունները. դրա թիրախը տաղանդները չեն: Դժվար է պատկերացնել, որ թեստավորումով կարելի է գնահատել անձի վոկալ հնարավորությունները կամ մարզական տվյալները:

Բանն այն է, որ թեստավորումը դրան չի էլ հավակնում, այն ունի իր կիրառման ոլորտը, որտեղ անփոխարինելի է, ունի նաև իր սահմանափակումները: Թեստավորումից ավելին պահանջելը նման է նրան, որ հեռախոսից պահանջեն, որ այն նաև սուրճ եփի: Երբեմն դրսևորվող թերահավատությունը թեստավորման մեթոդի նկատմամբ (մասնավորապես, համեմատումը խաչբառի հետ) դրա սխալ կամ ոչ տեղին օգտագործման հետևանք է:

Թեստի գաղափարը

Թեստավորումը գնահատման այն ձևն է, որն իրագործվում է թեստի միջոցով:

Հաջորդ բնական հարցն է առաջանում՝ իսկ ի՞նչ է թեստը:

Թեստաբանությանը նվիրված գրականության մեջ տարբեր հեղինակների կողմից տրվում են *թեստի* տարբեր սահմանումներ: Մ. Բ. Չելիշկովան թեստաբանությունում արտահայտում է այն միտքը, որ նրանց մի մասը փորձում է թվարկել բոլոր հնարավոր սահմանումները՝ առանց քննարկելու դրանց առավելություններն ու թերությունները, մյուսներն էլ կենտրոնանում են իրենց տված սահմանման վրա՝ չնկատելով դրա ոչ լիարժեքությունը*: Կարելի է համաձայնվել նրա հետ, որ դեռևս չկա թեստի հակիրճ, հստակ և միարժեք սահմանում (գուցե և չի էլ կարող լինել), այն կախված է թեստի առջև դրված խնդիրներից՝ գնահատման նպատակներից, և շարունակական համակարգման ու արժևորման կարիք ունի:

Առաջանում է երկու այլընտրանք: Առաջին մոտեցումն այն է, որ պետք է սկսել ուսումնասիրել թեստաբանության հիմունքները, իսկ թեստի հստակ սահմանումը այս կամ այն տեսքով ինքնըստինքյան կձևավորվի գիտելիքի և փորձի անհրաժեշտ պաշար կուտակելուց հետո: Երկրորդը՝ այնուամենայնիվ, փորձել հստակ սահմանել թեստի գաղափարը, որից հետո սկսել թեստաբանության ուսումնասիրությունը: Մենք երկու մոտեցումներում էլ վտանգներ ենք տեսնում և կողմ ենք միջանկյալ, փոխզիջումային տարբերակին:

Իրավիճակը կարելի է համեմատել միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ծրագրում լայնորեն օգտագործվող *խռացիոնալ թվի* գաղափարի հետ: Մի կողմից համարյա բոլոր աշակերտները կարողանում են քառակուսային հավասարումներ լուծել և պատասխանում ստանալ իռացիոնալ թվեր, մյուս կողմից՝ գրեթե ոչ մեկը չգիտի, թե ինչպես է հստակ սահմանվում, օրինակ՝ $\sqrt{3}$ պարզագույն իռացիոնալ թիվը:

Այս երևույթը կրկնվում է նաև *ֆունկցիայի ածանցյալի* գաղափարի հետ կապված: Աշակերտները հաջողությամբ հաշվում են ֆունկցիայի ածանցյալը, աշխատելով դրա հետ՝ կարողանում են լուծել

* Челишкова М. Б. Теория и практика конструирования педагогических тестов. "Логос", Москва. 2002. стр. 431.

բավականին բարդ խնդիրներ ֆունկցիայի գրաֆիկի վարքի վերաբերյալ չիմանալով ածանցյալի հստակ սահմանումը:

Ֆիզիկայում հաջողությամբ կիրառվում են բավականին բարդ *կորագիծ* և *մակերևութային ինտեգրալներով* հավասարումներ, դրանց հիման վրա եզրակացություններ արվում ֆիզիկական տարբեր երևույթների վերաբերյալ, սակայն հավանաբար ոչ բոլոր ֆիզիկոսները գիտեն դիտարկվող ինտեգրալների հստակ մաթեմատիկական սահմանումը:

Բերված օրինակները վկայում են այն մասին, որ նույնիսկ ի սկզբանե ինտուիտիվ հասկանալի գաղափարը երբեմն հնարավոր չէ (ավելի հաճախ նպատակահարմար չէ) սահմանել ուսումնառության սկզբում: Հաճախ ավելի արդյունավետ կարող է լինել հստակ սահմանմանը վերադառնալը այն բանից հետո, երբ կա գաղափարի հետ աշխատելու որոշակի փորձ:

Մյուս կողմից, չիմացածի հետ ինքնանպատակ աշխատելը (երբ նորաթուխ մասնագետը չի էլ ենթադրում, որ ոլորտում կա խորքային իմաստ ու գիտելիք, ինչի մասին նա պատկերացում չունի) անխուսափելիորեն հանգեցնում է դիլետանտիզմի:

Այս պատճառով է, որ շատ հայ տղամարդիկ «լավ» նարդի են խաղում, «հասկանում» են ֆուտբոլից, բիզնեսից և քաղաքականությունից: Իրական կյանքում դա, մասնավորապես, բերում է նրան, որ մարդիկ պարտքեր և վարկեր են կուտակում՝ պատճառաբանելով, որ հանգամանքները բարեհաջող չդրսևորվեցին՝ «զառը չեկավ»:

Ցանկացած մեկը որոշակի կենցաղային պատկերացում ունի այն մասին, թե ինչ է թեստը, առավել ևս՝ թեստային եղանակով ձևակերպված առաջադրանքը՝ *թեստային առաջադրանքը*: Արհամարհելով գիտականությունը (չգիտակցելով դրա կարևորությունը)՝ հաճախ որոշ հեղինակներ, «իրար գլխի հավաքելով» թեստային բնույթի մի շարք առաջադրանքներ, համարում են, որ մշակեցին թեստ, ինչի հիման վրա հետո կատարում են անհիմն և վտանգավոր եզրակացություններ:

Մ. Բ. Չելիշկովան դրանք անվանում է «*պսևդոթեստեր*» (կեղծ թեստեր): Պսևդոթեստերի հիման վրա կատարված վճռորոշ եզրակացությունները խեղում և աղավաղում են իրական պատկերը և, վերջիվերջո, բերում թերահավատության թեստավորման մեթոդի նկատմամբ՝ հաստատելով հայտնի բանաձևը՝

չեմ սովորում → չգիտեմ → չեմ սիրում

Վերադառնալով թեստի գաղափարի սահմանման խնդրին՝ ամենաընդհանուր բառերով կարելի է պայմանավորվել, որ *թեստը որոշակի նպատակների համար, որոշակի կարգով համախմբված, որոշակի հատկություններով օժտված, որոշակի առաջադրանքների ամբողջություն է*:

«Որոշակիների» թիվը դեռ կարելի էր շարունակել՝ թեստի առաջ դնելով նորանոր պայմաններ: Սակայն չենք կարծում, որ այս սահմանումը որևէ արժեքավոր բան կտա թեստաբանությամբ հետաքրքրվող սկսնակին: Այն ընդամենը ուրվագծում է ուսումնասիրման ենթակա հարցերի շրջանակը և հնարավորություն տալիս խուսափելու նկարագրված երկու մոտեցումներից որևէ մեկի օգտին պատասխանատու ընտրություն կատարելու անհրաժեշտությունից:

Մեր կարծիքով, ամենաարդյունավետը փոխզիջումային տարբերակն է երկու մոտեցումների միջև. համարելով, որ ֆորմալ սահմանումը տրված է (վերևում)՝ սկսել թեստաբանության հիմունքների ուսումնասիրությունը: Իսկ ավելի հստակ սահմանումը ինքնըստինքյան կձևավորվի հետագայում՝ որոշակի արհեստավարժություն ձեռք բերելուց հետո (կարող է նույնիսկ վերանալ դրա անհրաժեշտությունը):

Թեստավորման երեք հիմնական փուլերը

Թեստավորումը բազմափուլ, երկարաժամկետ գործընթաց է: Սպառողի համար տեսանելի են թեստավորման ամենախոշոր փուլերը՝

- թեստի մշակումը,
- թեստավորման անցկացումը,
- արդյունքների ամփոփումը:

Այս փուլերից յուրաքանչյուրն, իր հերթին, մանրակրկիտ և ճշգրիտ նախապատրաստման և իրականացման կարիք ունի:

Նշենք միայն այդ փուլերի մի քանի ընդհանուր նախնական գործառույթներ (անհրաժեշտ ամբողջ ծավալի փոքր մասը), որոնք պետք է կատարվեն փուլի աշխատանքների գործնական իրականացման որակն ապահովելու համար:

Մասնավորապես՝

- թեստի մշակման համար պետք է նախագծել թեստի հատկորոշումը և կառուցվածքը, հստակեցնել առաջադրանքների տեսակները և քանակը, դրանց դասավորությունը թեստում, յուրաքանչյուր առաջադրանքին տրվող միավորը,
- թեստավորման կազմակերպման և անցկացման համար պետք է սահմանել թեստավորման *անցկացման կարգը*՝ սահմանել թեստավորման բոլոր փուլերի ժամանակացույցը, թեստի կատարմանը հատկացվող ժամանակը, անցկացման կանոնները,
- արդյունքների ամփոփման համար պետք է կազմել միավորների սանդղակը, մշակել թեստի ստուգման ձեռնարկը, ստուգման կանոնները, մուտքագրել արդյունքները, ինչից հետո կառաջանա տվյալների վերջնական բազան. առանձին հարց է, թե հետո ի՞նչ անել այդ բազայի հետ:

Նկարագրված աշխատանքներից յուրաքանչյուրը կարելի է կատարել ընդունելի մակարդակով և կարելի է պարզապես տապալել: Այս կապակցությամբ խիստ կարևոր է դառնում փուլի իրականացման որակի ապահովումը: Ցավոք, թեստային առանձին առաջադրանքների, ամբողջական թեստի և թեստավորման գործընթացի իրակա-

նացման որակը հաճախ առաջին հայացքից տեսանելի չեն նույնիսկ մասնագետի համար. չի հաջողվում արձանագրել գործի տապալումն ու կանխել անորակ թեստի օգտագործումը, իսկ թերություններն ու սխալները ի հայտ են գալիս թեստավորումն իրականացնելուց հետո: Ուստի խիստ կարևոր է հաճախ անտեսվող և երկրորդական համարվող, սակայն անպայման անհրաժեշտ *փորձարկման* գործընթացը: Այն հնարավորություն է տալիս խուսափելու անհայտ որակի թեստերով մասնակիցների «ճակատագրերի հետ խաղալուց» վճռորոշ միջոցառումների ժամանակ և թերություններն ու սխալները հայտնաբերելու փորձարկման փուլում:

Թեստավորման տեսակները

Թեստավորման գործընթացի բոլոր աշխատանքների ճիշտ նախագծումը, նախապատրաստումն ու իրականացումը առաջին հերթին կախված են թեստավորման նպատակից: Տարբեր միջոցառումների առջև դրվում են որակի ապահովման իրարից էականորեն տարբերվող պայմաններ և պահանջներ: Մասնավորապես, թեստավորման մի միջոցառման համար մշակված որակյալ թեստը մյուսի համար կարող է համարվել անպիտան: Ուստի կարևոր է հասկանալ թեստավորման միջոցառման հիմնական նպատակները և դասակարգել դրանք ըստ դիտարկվող հայտանիշի:

Ուսումնական գործընթացում ժամանակագրական տեսանկյունից առանձնացվում են թեստավորման երեք տեսակներ՝

- թեստավորում *ուսուցման շեմին*,
- թեստավորում *ուսուցման ընթացքում*,
- թեստավորում *ուսուցման ավարտին*:

Ուսուցման շեմին թեստավորումն անցկացվում է նյութը դասավանդելուց առաջ:

Այն հիմնականում ունի *հայտորոշիչ* բնույթ: Այս թեստավորման ընթացքում հետապնդվում է երկու հիմնական նպատակ՝

- պարզել աշակերտների՝ նոր նյութը յուրացնելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների առկա պաշարը,
- պարզել, թե ինչ նախնական գիտելիքներ ունեն աշակերտները նոր նյութի վերաբերյալ:

Առաջինը պետք է՝ համոզվելու համար, որ աշակերտները պատրաստ են նոր նյութը լսելուն և ընկալելուն, իսկ երկրորդը՝ հետագայում նոր նյութի յուրացման աստիճանը և ստացած գիտելիքների մակարդակի աճը գնահատելու համար:

Ուսուցման ընթացքում իրականացվող միջանկյալ թեստավորումները կատարվում են ուսումնական գործընթացի անընդհատությունը և շարունակականությունը ապահովելու համար, հասկանալու և գնահատելու համար աշակերտների ընթացիկ հաջողությունները, աճի միտումներին հետևելու և դասավանդման գործընթացում ճշգրտումներ կատարելու համար:

Այս թեստավորումները կարող են *ձևավորող* բնույթի լինել:

Ուսուցման ավարտին իրականացվող թեստավորումը կրում է *աւփոփիչ* բնույթ և միտված է աշակերտների կողմից տրված ժամանակահատվածում դասավանդված նյութի յուրացման աստիճանն ու ստացած գիտելիքների մակարդակը գնահատելուն: Արդյունքում ուսուցիչը հնարավորություն է ստանում հասկանալու և գնահատելու դասավանդման ընթացքում կիրառվող առարկայական և մանկավարժական մեթոդների և ուսուցման ընդհանուր գործընթացի արդյունավետությունը:

Թեստավորման քայլերը

Թեստավորման ցանկացած միջոցառում հաջող և որակյալ իրականացնելու համար պետք է կատարել մի շարք քայլեր: Մասնավորապես, պետք է՝

- հստակեցնել, *թե՞ինչ խնդիրներ են դրվում թեստավորման առջև* և ինչ արդյունքներ են ակնկալվում. ճշտել թեստավորման տեսակը և նպատակները,
- ձևակերպել, *թե՞ ինչն է գնահատվում*, ճշգրտել թեստավորման առարկայական նյութը. դրա ծավալը, գնահատման ենթակա գիտելիքը, հմտություններն ու ունակությունները,
- որոշել, *թե՞ ովքեր են թեստավորելու*. ձևավորել մասնագետների թիմը, որը պետք է իրականացնի թեստավորման տարբեր փուլերի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում վերապատրաստական աշխատանքներ իրականացնել,
- պարզել, *թե՞ ինչ գործիքով է իրականացվելու թեստավորումը*. նախագծել թեստի հատկորոշումը, կառուցվածքը, առաջադրանքների տեսակները և քանակը, կատարման համար հատկացված ժամանակը,
- սահմանել, *թե՞ ինչպես են գնահատվելու աշակերտների աշխատանքները*. մշակել թեստի գնահատման սանդղակը, ստուգման ձեռնարկը և նախագծել տվյալների բազան,
- մշակել թեստային առաջադրանքների բանկը, թեստի նախնական տարբերակը և թեստավորման օժանդակ նյութերը, դրանք փորձագիտական ընթերցման և խմբագրման ենթարկել, կատարել փոքրածավալ նախափորձարկում և վերացնել տեսանելի թերությունները,

- փորձարկել մշակված թեստային առաջադրանքները և նախնական թեստը, վերլուծել դրանց բնութագրիչները, փոխարինել անհաջող առաջադրանքները. բարելավել թեստը,
- *մշակել* թեստի վերջնական տարբերակը,
- հստակեցնել, թե *ինչպես է իրականացվելու թեստավորումը*, և որակի ինչ չափանիշներ պետք է ապահովել. ձևակերպել թեստավորման անցկացման կանոնները,
- *անցկացնել թեստավորումը*,
- իրականացնել աշխատանքների ստուգումն ու մուտքարումը և ստեղծել տվյալների բազան,
- վերլուծել և մեկնաբանել ստացված արդյունքները,
- *ամփոփել արդյունքները*. անել եզրակացություններ, ներկայացնել և լուսաբանել դրանք:

Թեստի մշակումը

Թեստավորում անցկացնողը եզրակացությունները հրապարակելիս պետք է պատրաստ լինի պատասխանելու հետևյալ հարցին. «Որքա՞ն ճշգրիտ են ձեր թեստավորման արդյունքներն արտահայտում աշակերտների պատրաստվածության իրական աստիճանը՝ գնահատվող նյութից»:


Պատկերացնենք, թե հրաձգության մրցումների ժամանակ մասնակիցը բազմաթիվ անգամներ անհաջող կրակոցներ է արձակում: Մակարող է լինել երկու հիմնական պատճառներով՝

- մասնակիցը վատ հրաձիգ է,
- հրացանն անորակ է:

Եթե հրացանը փորձարկված է, համոզմունք և վստահություն կա, որ լավ հրաձիգի ձեռքում այն դիպուկ է կրակում, ուրեմն հիմք կա բացառելու երկրորդ պատճառը և պնդելու, որ *մասնակիցը վատ հրաձիգ է*:

Այսպիսով, թեստավորողը պետք է վստահ լինի, որ թեստավորման գործիքը՝ թեստը, որակյալ է, փորձարկված, և դրա հիման վրա արված եզրակացությունները արժանահավատ են:

Ուստի թեստը վերջնական կիրառման փուլ հասնելու համար պետք է անցնի մշակման մի քանի քայլեր: Մենք այս գործընթացը համեմատում ենք քանդակը փայտի կտորից պատրաստելու բազմաքայլ գործի հետ.



Նկար 1

- *«ուրվագծում»*. թեստի հատկորոշում՝ կառուցվածքի, առաջադրանքների տեսակների ու քանակի, կատարման ժամանակի ու հատկացվող միավորների սահմանում,
- *«սղոցում»*. առաջադրանքների նախնական մշակում, առաջադրանքների բանկի ստեղծում,
- *«հղկում»*. առարկայական, թեստաբանական փորձագիտություն, լեզվական և համակարգչային ձևավորման խմբագրում,
- *«խարտում»*. նախափորձարկում՝ տեսանելի սխալների հայտնաբերում և շտկում,

- «*շուշաթղթում*». լիարժեք փորձարկում՝ անպիտան առաջադրանքների փոխարինում նորերով, անտեսանելի թերությունների վերացում,
- «*փայլեցում*». վերջնական տարբերակի մշակում:

Թեստավորման անցկացման գործընթացը

Թեստավորման որակյալ գործիքը՝ թեստը մշակելուց հետո այն կարելի է *գործարկել*՝ ստանալ արժանահավատ տվյալներ, որոնք վերլուծելով՝ ամփոփել թեստավորման արդյունքները:

Սա թեստավորման այն փուլն է, որը կարելի է համեմատել բնագիտական գիտափորձի իրականացման հետ. երկու դեպքում էլ նպատակը հետագա վերլուծության ենթակա տվյալների ստացումն է:



Նկար 2

Արժանահավատ տվյալներ ստանալու համար այս փուլում պետք է ապահովել «գիտափորձի» որակյալ անցկացման պայմանները. ճշգրտել մասնակիցների ցուցակը, պատրաստել քննական նյութերի անհրաժեշտ քանակը (թեստ-գրքույկներ, ձևաթղթեր), հագեցնել քննական տարածքը (քննասենյակ, քննական կենտրոն), ձևավորել և վերապատրաստել ներգրավված մասնագետների խումբը, ապահովել թեստավորման ամբողջ գործընթացի թափանցիկությունը և հավասար պայմաններ բոլոր մասնակիցների համար:

Այս փուլում ևս պետք է հաշվի առնել գնահատման նպատակն ու առանձնահատկությունները, ապահովել թեստավորման կանոնների հստակ կատարումը՝ բացառել զրույցները աշակերտների միջև, արտագրության, հուշելու, հեռախոսներից կամ այլ սարքերից օգտվելու դեպքերը: Խիստ կարևոր է, որ աշակերտին հստակ բացատրվի իր անելիքը, պահպանվեն թեստավորման ժամանակահատվածները, քննությունը սկսելու, ավարտելու և աշխատանքները հանձնելու գործառույթների կարգավորվածությունը:

Թեստավորման արդյունքները վերլուծելու համար դրանք պետք է ներկայացնել թվերի տեսքով՝

- աշխատանքները գնահատել միավորների միջոցով,
- մուտքագրել ստացված միավորները,
- ստանալ տվյալների վերջնական բազա:

Թեստավորման մեթոդի առավելություններից մեկն այն է, որ այն հնարավորություն է տալիս աշխատանքների ստուգումը և մուտքագումը իրականացնել համակարգչային սարքերի (սքաներների) միջոցով՝ առանց մասնագետներ ներգրավելու: Չնայած դրան՝ մասնավորապես հետազոտական բնույթի միջոցառումների դեպքում չի բացառվում նաև աշխատանքների ստուգումն ու մուտքագրումը մասնագետների կողմից:

Թեստավորման արդյունքների ամփոփումը


Ստացված տվյալների վերլուծությունը և արդյունքների ամփոփումը թեստավորման այն փուլն է, որի համար է նախագծվում, նախապատրաստվում և իրականացվում թեստավորումը:

Այս փուլում օգտագործվում է *հավանականությունների տեսության*



Նկար 3.

և *մաթեմատիկական վիճակագրության* հզոր գործիքակազմը.



Նկար 4

ներկայացվում է թեստավորման *նկարագրողական վիճակագրությունը*, բացահայտվում և վերլուծվում են թեստավորման արդյունքները ձևավորող պատճառահետևանքային և հարաբերակցային կապերը, արվում են ամփոփիչ եզրակացություններ, դրանք ձևակերպվում են արդեն հանրամատչելի տերմիններով, լուսաբանվում և ներկայացվում են սպառողին և հանրությանը:

Արդյունքների ամփոփման փուլում ոչ միայն արվում են վերջնական եզրակացություններ թեստավորման հիմնական և անմիջական նպատակների վերաբերյալ, այլև հետադարձ կապի միջոցով գնահատվում է իրագործված փուլերի իրականացման որակը (թեստավորման գործիքի, անցկացման կարգի), ինչով հաստատվում են

թեստավորման ամփոփիչ արդյունքները և հիմնավորվում է եզրակացությունների արժանահավատությունը:

Թեստավորման առավելություններն ու կիրառության սահմանները

Թեստավորումը՝ որպես գնահատման ձև, ունի իր առավելություններն ու սահմանափակումները, որոնց մի մասի մասին արդեն խոսել ենք: Դրանց ավելի ամբողջական ցանկը (բայց ոչ վերջնականը) ներկայացված է աղյուսակում 1-ում:

Առավելություններ	Սահմանափակումներ
Գնահատվում են մեծ թվով մասնակիցներ:	Նախատեսված չէ տաղանդը հայտնաբերելու համար:
Գնահատվում է մեծ ծավալի առարկայական նյութ:	Չի հայտնաբերում չորսերկուսն ունակությունները:
Իրականացվում է կարճ ժամանակում:	Վիճակագրության համար պետք են մեծ թվով տվյալներ:
Գնահատման գործիքը գիտականորեն մշակված է:	Չի հայտնաբերում խորքային և հիմնավորված գիտելիքը:
Միավորը հայտնի է թեստավորմանօրը՝ ճիշտ պատասխանների հետ համեմատելու միջոցով:	Կիրառելի չէ որոշ խիստ մասնագիտական կարողություններ գնահատելիս (ասմունք, վոկալ, սպորտ):
Ապահովում է գնահատման թափանցիկությունը:	
Հավասար պայմաններ բոլոր մասնակիցների համար:	
Համակարգչային միջոցներիկիրառում:	
Աշխատանքների ստուգման անկողմնակալություն:	
Չի նախատեսվում անհատական բողոքարկում:	
Արդյունքների վերլուծություն և ամփոփում:	
Հնարավորություն է տալիս եզրակացություններ կատարելու ամբողջ համակարգի մասին:	

Աղյուսակ 1

Որևէ գնահատման միջոցառում նախագծելուց և իրականացնելուց առաջ պետք է ծանրութեթև անել գնահատման այս կամ այն ձևի առավելություններն ու սահմանափակումները, հասկանալ դրա կիրառության նպատակահարմարությունն ու արդյունավետությունը:



Նկար 5

Արդեն նշել ենք, որ *թեստավորման մեթոդը անխուսափելի է կարճ ժամանակում մեծ թվով մասնակիցների ծավալուն առարկայական նյութի վերաբերյալ պատրաստվածության ընդհանուր մակարդակը գնահատելիս:*

Մյուս կողմից, թեստավորման մեթոդը նպատակահարմար չէ կիրառել առարկայական օլիմպիադաներում կամ խորը մասնագիտական կարողություններ և ընդունակություններ գնահատող այլ միջոցառումներում:

Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական
աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ

Գիտելիքի գնահատման համակարգերը տարբեր երկրներում

Գիտելիքի գնահատման համակարգն ուսումնական գործընթացի շատ կարևոր բաղադրիչ է, որով գնահատվում են սովորողո՞ղների ուսումնական ձեռքբերումները: Ցանկացած մանկավարժական համակարգի վերջնական նպատակն ուսուցման գործընթացի արդյունավետությունն է, որի անքակտելի մասն այդ գործընթացի բոլոր փուլերում գիտելիքի յուրացման, ուսուցման գործընթացի արդյունավետության և սովորողների առաջադիմության մակարդակների որոշումն է: Ուսուցման գործընթացը դառնում է առավել արդյունավետ, երբ ուսուցումը նույնացվում է սովորողի ճանաչողական հետաքրքրության զարգացման հետ: Ճանաչողական գործընթացի ակտիվացումն ուղեկցվում է ստեղծագործական գործունեության խթանմամբ և հետազոտական գործունեության նկատմամբ հետաքրքրության բարձրացմամբ: Ճանաչողական գործունեության մեթոդների արդյունավետությունը և գնահատման գործիքի ճշգրտությունը բարձրացնում են սովորելու պահանջարկը և որպես հետևանք՝ սովորողների ակադեմիական առաջադիմությունը:

Ուսումնական ձեռքբերումների գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքի, կարողությունների ու հմտությունների մակարդակի ստուգումն է և դրա հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործումն ու ուսման որակի վերահսկումը:

Գնահատման միջոցով չափվում է սովորողի ուսումնական ձեռքբերումների մակարդակը, ապահովվում է կրթական մի աստիճանից մյուսին անցումը, խրախուսվում է կրթության շարունակականությունը: Այն բացահայտում է ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության աստիճանը և թույլ է տալիս ուղղորդել ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունները՝ ճշգրտելով սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը: Գնահատման ամբողջական պատկերի հիման վրա կատարելագործվում են կրթական չափորոշիչները, առարկայական ծրագրերը, դասագրքերը և ուսուցման մեթոդները, հստակեցվում են հանրակրթության բարեփոխման ուղղությունները: Գնահատման միջոցով բացահայտվում է նաև որոշակի առարկայի յուրացման մակարդակն ըստ ուսումնական հաստատությունների, վարչատարածքային բաժանման, ինչպես նաև ողջ երկրի մասշտաբով:

Պատմական ակնարկ

Գնահատման համակարգի գաղափարը XVI-XVII դարերում սովել և կիրառել են Գերմանիայի ճիզվիտ միաբանները: Սկզբնական շրջանում այն հետապնդում էր մարդասիրական նպատակներ՝ փորձելով աշակերտներին հնարավորինս զերծ պահել մարմնական պատիժներից: Ճիզվիտական դպրոցներն ուսուցման գործընթացում կիրառում էին փորձարարական մեթոդներ՝ նպատակ ունենալով կրոնական պատվիրանների շրջանակներում ձևավորելու բազմակողմանի զարգացած անհատներ: Այդ իսկ պատճառով նրանք փորձում էին իրական մտրակը փոխարինել խորհրդանշականով՝ աշակերտներին բաժանելով լավագույնների, միջակների և վատագույնների: Հետագայում միջակների կատեգորիան, որն ընդգրկում էր ամենամեծաթիվ աշակերտների, բաժանեցին դասերի: Դրա արդյունքում ստեղծվեց գնահատման հինգ բալանոց սանդղակը:

Ռուսական գիմնազիաներում XIX դարի սկզբին կիրառում էին գնահատման 0-5 միավորային սանդղակը: 0 գնահատական նշանակում էին, եթե սովորողն իր պարտականությունները չէր կատարում: Մինչև 1864 թ. սովորողին ենթարկում էին մարմնական պատժի, եթե նա երկու անգամ հաջորդաբար ստանում էր 0 գնահատական:

Խորհրդային շրջանի առաջին տարիներին Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը վերացրեց գիտելիքի գնահատման թվային համակարգը՝ համարելով, որ դա լիովին համապատասխանում է խորհրդային կառավարության հռչակած ժողովրդի ազատագրման կարգախոսին: Գնահատականների փոխարեն ուսուցիչները պարզապես նկարագրում էին անհատական առաջադիմությունը, դպրոցում և դրանից դուրս աշակերտների հանրօգուտ գործունեության ակտիվությունը: Միաժամանակ, ուսուցիչներից շատերը շարունակում էին կիրառել գնահատման թվային համակարգը: 1939 թվականին խորհրդային դպրոցները վերադարձան բառային գնահատականներին («անբավարար», «բավարար», «լավ», «գերազանց»), իսկ 1944 թվականին դրանց ավելացան 1-ից մինչև 5 թվային գնահատականները, որոնք կիրառվեցին մինչև XX դարի 90-ական թվականները:

Գնահատականները տարբեր երկրների դպրոցներում

Աշխարհի տարբեր երկրներում ներկայումս կիրառում են գիտելիքների գնահատման տարբեր համակարգեր (5, 6, 9, 10, 12, 13, 20, 100 միավորային, տառային, տոկոսային, առանց նշումների և այլն): Օրինակ, Ռուսաստանում ընդունված է 5 միավորային համակարգը, որտեղ 5 գնահատական նշանակում են գերազանց արդյունքի, 1՝ շատ վատ արդյունքի դեպքում: Գերմանիայում կիրառում են գնահատման 6 միավորային համակարգը, որտեղ լավագույն արդյունքի համար նշանակում են 1, վատ արդյունքի համար՝ 6: Ավստրիայում նույնպես 1-ը ամենաբարձր գնահատականն է, սակայն ամենացածրը 5-ն է: Բուլղարիայում ևս կիրառում են 6 միավոր-

րային համակարգը, սակայն հակառակ դասավորությամբ՝ 6-ը գերազանցն է, 2-ը՝ անբավարարը: 1-ը գործնականում չի օգտագործվում, հազվադեպ նշանակվում է վատ վարքի համար: Մեծ Բրիտանիան 2017 թվականից սկսել է գնահատման տառային համակարգից անցնել 9 միավորային համակարգի, որտեղ 9-ը գերազանցն է: Հայաստանում ուսումնական ձեռքբերումների մակարդակը գնահատվում է 10 միավորային համակարգով, ըստ որի 9-ը գերազանցն է, իսկ 10 նշանակվում է բացառիկ դեպքերում: Ուկրաինայում ընդունված է 12 միավորային համակարգը, որտեղ 12-ն ամենաբարձր գնահատականն է և նշանակվում է ուսումնական ակնառու ձեռքբերումների և ստեղծագործական աշխատանքի համար: Ընդհանուր առմամբ, խորը և հիմնավոր գիտելիքի համար սովորողը ստանում է 10 կամ 11, իսկ ցածր մակարդակի համար՝ 1, 2 կամ 3: Դանիայում նախկին 13 միավորային համակարգը փոխարինել են 12, 10, 7, 4, 02, 00 և -3 գնահատականներով: Անբավարար են համարվում 00-ն և -3-ը: Ֆրանսիայում կիրառում են 20 միավորային համակարգը: Գերազանց գնահատականներն են 17-ը, 18-ը, 19-ը և 20-ը, ընդ որում, 19 և 20 նշանակում են բացառիկ դեպքերում: Ճապոնիայում ընդունված է գնահատման 100 միավորային համակարգը:

ԱՄՆ-ում կիրառում են տառային համակարգը՝ A, B, C, D, F, որտեղ A-ն գերազանցն է, D-ն և F-ը՝ վատը: Որոշ դպրոցներում անցումային մակարդակը ցույց տալու նպատակով տառերին ավելացնում են նաև «+» և «-» նշանները: ԱՄՆ-ի մի քանի նահանգներում կիրառում են գնահատման տոկոսային համակարգը: Տառային համակարգն ընդունված է նաև Կանադայում, Ինդոնեզիայում, Հարավային Կորեայում, Բրազիլիայի որոշ դպրոցներում:

Տոկոսային համակարգով գնահատում են, օրինակ, Իսրայելում և Հնդկաստանի ավագ դպրոցներում, որտեղ անբավարար են համարվում 40-ից ցածր տոկոսները:

Նորվեգիայի, Ճապոնիայի, Հնդկաստանի տարրական դպրոցներում գնահատականներ չեն նշանակում, որպեսզի բացառեն հա-

մեմատությունը երեխաների միջև: Ուսուցիչները պարզապես նկարագրում են երեխաների կարողությունները, ակտիվությունը, ստեղծագործական ունակությունները:

Գնահատման համակարգերի բնութագրիչները

Գնահատման համակարգերից ավելի մանրամասն անդրադարձանք մեր երկրում կիրառված 5 և 10 միավորային համակարգերին:

■ Գնահատման 5 միավորային համակարգը

Գիտելիքի գնահատման այս համակարգը կիրառում են, օրինակ, Ռուսաստանի, Չեխիայի, Սերբիայի, Խորվաթիայի, Հունգարիայի, Բոսնիա և Հերցեգովինայի դպրոցներում:

Գնահատման 5 միավորային համակարգը համապատասխանում է նոր նյութի յուրացման աստիճանի վերաբերյալ սահմանված հինգ մակարդակներին:

- **Առաջին մակարդակ** - հասկացությունների իմացություն, դրանց նմանությունները և տարբերությունները նկատելուն ուղղված գործողություններ:

- **Երկրորդ մակարդակ** - ուսումնական նյութի վերարտադրություն հիշողության մակարդակում (չգիտակցված վերարտադրություն):

- **Երրորդ մակարդակ** - ուսումնական նյութի վերարտադրություն ըմբռնման մակարդակում (գիտակցված վերարտադրություն):

- **Չորրորդ մակարդակ** - ծանոթ իրավիճակում գիտելիքները կիրառելու կարողություն, հստակ սահմանված կանոններով գործողությունների կատարում, նոր ուսումնական առաջադրանք լուծելու նպատակով ընդհանրացված ալգորիթմի վրա հիմնված գիտելիքի կիրառում:

- **Հինգերորդ մակարդակ** - անծանոթ իրավիճակում նոր առաջադրանքներ կատարելու նպատակով գիտելիքի և հմտությունների կիրառում, անծանոթ իրավիճակում խնդիր լուծելու նպատակով նախկինում ձեռք բերած գիտելիքի ինքնուրույն օգտագործում:

5 միավորային համակարգում 1 գնահատականը նշանակվում է, եթե սովորողը լիովին անտեղյակ է անցած ուսումնական նյութից: 2 գնահատական նշանակվում է ծրագրային նյութից գրեթե անտեղյակ լինելու, ուսուցչի հարցերին անորոշ պատասխաններ տալու, գրավոր աշխատանքներում հաճախ կոպիտ սխալներ թույլ տալու դեպքերում: 3 գնահատական է նշանակվում, եթե սովորողը տիրապետում է հիմնական ուսումնական նյութի գիտելիքին, սակայն գործնականում կիրառելիս դիմում է ուսուցչի օգնությանը, բանավոր պատասխաններում նյութի մատուցման և խոսքի կառուցման մեջ, ինչպես նաև գրավոր աշխատանքներում թույլ է տալիս սխալներ: 4 գնահատական նշանակվում է, եթե սովորողը տիրապետում է պահանջվող ծրագրային նյութին, ծրագրի շրջանակներում տրված հարցերին պատասխանում է առանց դժվարության, պատկերացնում է, թե գործնականում ինչպես պետք է կիրառել ստացած գիտելիքը, բանավոր պատասխաններում օգտագործում է գրական լեզու և կոպիտ սխալներ թույլ չի տալիս, իսկ գրավոր աշխատանքներում թույլ է տալիս միայն աննշան սխալներ: 5 գնահատական նշանակվում է, եթե սովորողն ամբողջությամբ տիրապետում է ծրագրային նյութին, ծրագրի շրջանակներում տրված հարցերին պատասխանում է ճիշտ և վստահ, գործնականում կարողանում է ինքնուրույն կիրառել ստացած գիտելիքը, բանավոր պատասխաններում և գրավոր աշխատանքներում անսխալ խոսում և գրում է գրական լեզվով:

■ **Գնահատման 10 միավորային համակարգը**

Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում, Բելառուսում, Ալբանիայում, Իսլանդիայում և այլ երկրներում դպրոցականների գիտելիքի գնահատման համար կիրառվում է 10 միավորային համակարգը:

Գիտելիքի գնահատման 10 միավորային համակարգը 5 միավորային համակարգից տարբերվում է աշակերտի ուսումնական ձեռքբերումների ավելի խորը և մանրամասն դասակարգմամբ: Բա-

ցի նյութի յուրացման մակարդակից, նման սանդղակը ցույց է տալիս նաև կրթական գործունեության որակական բնութագրերը: Որոշ երկրներում պատասխանի բացակայության կամ պատասխանից հրաժարվելու դեպքում գործածում են նաև 0 գնահատականը: Ըստ այդմ, գնահատման համակարգը փաստացի ստացվում է 11 միավորային: Սակայն, քանի որ 0 գնահատականով չի բնութագրվում ուսումնական նյութի յուրացման աստիճանը, հետևաբար, սանդղակը համարվում է 10 միավորային:

Գնահատման 10 միավորային համակարգում նոր նյութի յուրացման աստիճանի վերաբերյալ նույնպես սահմանված է հինգ մակարդակ:

Առաջին՝ ցածր (ընկալման) մակարդակ

Այս մակարդակում 1 գնահատականը բնութագրվում է որպես «անբավարար», 2-ը՝ «գրեթե բավարար»: Դրանք նշանակվում են ուսումնական նյութից լիովին անտեղյակ լինելու կամ մակերեսային ծանոթության դեպքում: Այսպիսով՝

1 - ուսումնասիրվող օբյեկտի, որոշակի տերմինների և փաստերի ճանաչում. ուսումնական դժվարությունները հաղթահարելու ցանկության և առարկայի նկատմամբ հետաքրքրության դրսևորում:

2 - ուսումնասիրվող օբյեկտի ճանաչում, սահմանումների տարբերակում, սովորելու մոտիվացիա և ջանքերի դրսևորում:

Երկրորդ՝ բավարար (արդյունավետ ընկալման) մակարդակ

Այստեղ 3 գնահատականը բնութագրվում է որպես «բավարար», 4-ը՝ «միանգամայն բավարար», և նշանակվում են տեսական նյութն անգիր անելու և անգիտակցական վերարտադրության դեպքում: Ուրեմն՝

3 - հիշողության մակարդակում ծրագրային ուսումնական նյութի թերի և սխալներով վերարտադրում, ընդհանուր կրթական և մտավոր հմտությունների կիրառման դժվարություններ, դրանք

հաղթահարելու ձգտում, պատասխանատվության իրավիճակային դրսևորում, ինքնաքննադատություն:

4 - ուսումնական նյութի յուրացում վերարտադրողական մակարդակում և թերի վերարտադրություն, լրացուցիչ հարցերի միջոցով շտկվող սխալների առկայություն, ընդհանուր ուսումնական և մտավոր հմտությունների կիրառման դժվարություններ, սովորելու ձգտում, կամային ջանքերի, համարժեք ինքնագնահատականի, ինքնուրույնության, բովանդակային գործողությունների դրսևորում և այլն:

Երրորդ՝ միջին (վերարտադրողական-արտադրողական) մակարդակ

Երրորդ մակարդակում 5 գնահատականը բնութագրվում է որպես «լավ», 6-ը՝ «բավական լավ», և դրանք նշանակվում են տեսական նյութը հասկանալու և տեղեկացված լինելու դեպքում: Հետևաբար՝

5 - տարբեր բարդության ծրագրային ուսումնական նյութի գիտակցված վերարտադրում, աննշան սխալներ, ընդհանուր կրթական և մտավոր կարողությունների ու հմտությունների կիրառման դժվարություններ, սովորելու և արդյունքների հասնելու ձգտում:

6 - ծրագրային ուսումնական նյութի ամբողջական վերարտադրում, աննշան սխալներ, ծանոթ իրավիճակում գիտելիքների կիրառում օրինակի հիման վրա, ընդհանուր կրթական և ինտելեկտուալ հմտությունների և կարողությունների կիրառում ուսուցչի չնչին օգնությամբ, դժվարությունները հաղթահարելու համառություն և ձգտում, ստեղծագործական մոտեցման իրավիճակային դրսևորում:

Չորրորդ՝ բավարար (արդյունավետ) մակարդակ

Այս մակարդակում 7 գնահատականը բնութագրվում է որպես «շատ լավ», 8-ը՝ «գրեթե գերազանց»: Դրանք նշանակվում են տեսական նյութի լիարժեք իմացության դեպքում: Ուստի՝

7 - տարբեր բարդության ծրագրային ուսումնական նյութի տիրապետում, գործողություններ ծանոթ իրավիճակում, եզակի աննշան սխալների առկայություն, ընդհանուր կրթական և մտավոր կարողությունների ու հմտությունների ինքնուրույն կիրառում, գիտելիքների փոխանցման ձգտումների, ինքնաքննադատության, ինքնասանդրադարձ վերլուծության (ռեֆլեկսիայի) դրսևորում և այլն:

8 - ծրագրային ուսումնական նյութի տիրապետում և կիրառում ծանոթ և անծանոթ իրավիճակներում, աշակերտի կողմից ինքնուրույն շտկված աննշան սխալների առկայություն, ստեղծագործական գործունեության որոշակի փորձի առկայություն, բարեխղճության, պատասխանատվության, ինքնագնահատականի, ինքնասանդրադարձ վերլուծության (ռեֆլեկսիայի) դրսևորում և այլն:

Հինգերորդ՝ բարձր (արդյունավետ ստեղծագործական) մակարդակ

Ամենաբարձր՝ 5-րդ մակարդակում 9 գնահատականը բնութագրվում է որպես «գերազանց», 10-ը՝ «բացառիկ»: Դրանք նշանակվում են, եթե սովորողը տիրապետում է ծրագրային ամբողջ նյութին և ցուցաբերում է իր ստացած գիտելիքների կիրառման ոչ ավանդական ստեղծագործական մոտեցում: Նշանակում է՝

9 - անծանոթ իրավիճակում տարբեր բարդության ծրագրային ուսումնական նյութի ազատ կիրառում, ստեղծագործական բնույթի առաջադրանքների կատարում, ինքնուրույնության և բազմազանության (էրուդիցիայի) բարձր մակարդակ:

10 - զանազան կրթական դասընթացներից և առարկաներից ստացված գիտելիքների համադրմամբ տարբեր բարդության ծրագրային ուսումնական նյութի ազատ կիրառում, ձեռք բերված գիտելիքը ոչ ստանդարտ իրավիճակներում առաջացած խնդիրներ լուծելու նպատակով գիտակցված և արագորեն փոխակերպելու ունակություն, նպատակալացության, պատասխանատվության, ուսման նկատմամբ ստեղծագործական մոտեցման, ճանաչողական գործունեության դրսևորում:

■ **Գիտելիքի գնահատման 5 միավորային համակարգի նկատմամբ 10 միավորային համակարգի առավելությունները և թերությունները**

Առավելությունները՝

- ընդլայնված սանդղակով ավելի օբյեկտիվորեն է գնահատվում գիտելիքի մակարդակը,
- սանդղակը թույլ է տալիս վերլուծել սովորողի մտավոր ունակությունները, գնահատել ուսումնական գործընթացում նրա ներգրավվածությունը, բացահայտել նրա թույլ կողմերը,
- համակարգը հոգեբանորեն ավելի հարմարավետ է, որովհետև 4-ից բարձր միավորները դրական են,
- փոքրանում է գերազանց և վատ սովորողների միջև եղած խզվածքը. 7-ից 10 միավոր ստացած բոլոր սովորողները համարվում են լավ սովորողներ:

Թերությունները՝

- համակարգը չի լուծում վատ սովորող աշակերտների հոգեբանական բարդույթը, ուսուցիչների սուբյեկտիվ վերաբերմունքը վերացնելու և նման այլ խնդիրներ,
- ծնողները միշտ չէ, որ հստակ պատկերացում են կազմում, թե ինչ է վկայում այս կամ այն գնահատականը:

Գիտելիքի գնահատման համակարգը Հայաստանում

XIX դարում հայկական ծխական դպրոցներում գնահատականները թվանշաններով 10 միավորային էին, բառերով՝ 5 միավորային: 1920-ական թվականներից սկսած՝ Հայաստանի դպրոցներում կիրառվում էր գնահատման խորհրդային համակարգը, որը համառոտ ներկայացվել է սույն հոդվածի «Պատմական ակնարկ» բաժնում:

2007 թվականից ներդրվել է առաջին դասարանում սովորողների ուսումնառության արդյունքները բնութագրման միջոցով գնահատելու համակարգը: 2008 թ. սեպտեմբերից ՀՀ հանրակրթական

դպրոցներում սկսել են գնահատման գործող 5 միավորային համակարգին զուգահեռ փորձնական կարգով կիրառել 10 միավորային համակարգը, որն ընտրվել էր եվրոպական երկրների գնահատման համակարգերի հետ համադրելիություն ապահովելու նպատակով: 2009 թվականի սեպտեմբերից հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվել է գնահատման 10 միավորային համակարգը: Ըստ այդ համակարգի, առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում, միավորներով գնահատումը կիրառում են՝ սկսած երկրորդ դասարանից: Դրական են համարվում 4-10 միավորները: 1 գնահատականը համարվում է «շատ վատ», 2-ը՝ «վատ», 3-ը՝ «անբավարար», 4-ը՝ «բավարար», 5-ը՝ «միջին», 6-ը՝ «միջինից բարձր», 7-ը՝ «լավ», 8-ը՝ «շատ լավ», 9-ը՝ «գերազանց», 10-ը՝ «բացառիկ»: Գնահատման 5 միավորային համակարգի հետ համեմատելով՝ 10 միավորային համակարգի 1, 2 և 3 գնահատականները համապատասխանում են 2-ին, 4-ը, 5-ը և 6-ը՝ 3-ին, 7-ը և 8-ը՝ 4-ին, 9-ը և 10-ը՝ 5-ին:

Միավոր	Անվանում
1	«շատ վատ»
2	«վատ»
3	«անբավարար»
4	«բավարար»
5	«միջին»
6	«միջինից բարձր»
7	«լավ»
8	«շատ լավ»
9	«գերազանց»
10	«բացառիկ»

Հաշվի առնելով տվյալ առարկայի ուսումնական նյութի առանձնահատկությունները և ստուգման նպատակները՝ գնահատման 10 միավորային սանդղակը որոշակիացվում է առարկայական չափորոշիչներով: 10 միավորային համակարգի հետ միասին կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարք, իսկ հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ կիրառվում են գնահատման այլ սանդղակներ, որոնց համարժեքությունը նույնպես սահմանվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

■ **Հանրակրթության պետական նոր չափորոշում սովորողների ուսումնական արդյունքների գնահատման համակարգին վերաբերող փոփոխությունները¹²**

Հանրակրթության պետական նոր չափորոշում նախատեսվում են գնահատման համակարգի փոփոխություններ.

- 1-4 դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի նախատեսվում: Ընթացիկ գնահատումը կատարվելու է բնութագրման միջոցով: Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն՝ որպես տարեկան ամփոփիչ գնահատական կազմվելու է յուրաքանչյուր աշակերտի ուսումնական առաջադիմության բնութագիրը:

- Միավորային գնահատումը կիրառվելու է՝ սկսած հինգերորդ դասարանի երկրորդ կիսամյակից:

- Միավորային գնահատման համար կիրառվելու է 10 միավորային սանդղակ, որի որևէ նիշ չի հանդիսանալու անբավարար գնահատական և նկարագրելու է աշակերտի ուսումնական ձեռքբերումների մակարդակը:

- Հանրակրթական ուսումնական հաստատությունները կարող են կիրառել գնահատման այլ համակարգ՝ այն համապատասխանեցնելով 10 միավորային սանդղակին:

- 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ իր ընտրած մեկ կամ մի քանի առարկաներից պետք է տարեկան իրականացնի առնվազն մեկ ուսումնական նախագիծ¹³:

¹² Հանրակրթության պետական չափորոշիչ <https://www.arlis.am/>

¹³ Ուսումնական նախագիծը սովորողի կամ սովորողների խմբի կողմից կոնկրետ թեմայի շուրջ ինքնուրույն կատարած պլանավորված դիտարկումների և հավաքագրված տվյալների վրա հիմնված պարզ հետազոտական աշխատանք է, որի արդյունքում սովորողը (խումբը) հիմնավորում է տվյալ թեմայի վերաբերյալ իր գաղափարները՝ դրանք ներկայացնելով պարզ գիտական բառապաշարով: Այն նպաստում է սովորողների ճանաչողական հմտությունների, ինքնուրույնության, տվյալների հավաքագրման հմտությունների, քննադատական և ստեղծագործական մտածողության, տարբեր խնդիրների լուծումներ գտնելու, նախագծի արդյունքները կանխատեսելու կարողությունների զարգացմանը: Տեսական խնդրի դեպքում նախագիծը պետք է ունենա կոնկրետ արդյունք, իսկ գործնական խնդրի դեպքում պետք է լինի կիրառելի:

- Այլընտրանքային ծրագրեր իրականացնելու դեպքում կարող է գործել գնահատման այլ կարգ:

- Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա կիսամյակային, իսկ կիսամյակային և սովորողի ուսումնական նախագծերի գնահատականների հիման վրա՝ տարեկան գնահատականները ձևավորվելու են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

- Հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին իրականացվելու է պետական ամփոփիչ ատեստավորում:

- Պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվելու է տարեկան գնահատականների, ավարտական քննությունների կամ ստուգարքների և բնութագրման արդյունքներով: Պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքները գրանցվելու են ավարտական փաստաթղթում:

- 4-րդ դասարանում իրականացվելու է ամփոփիչ գնահատում բնութագրման միջոցով, 9-րդ դասարանում՝ ավարտական քննություններ, 12-րդ դասարանում՝ պետական ավարտական քննություններ: Քննությունների և գիտելիքների ստուգումների ցանկի հաստատումը և փոփոխությանները իրականացնելու է կրթության կառավարման լիազոր մարմինը:

- Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կրթության կառավարման լիազորված մարմնի որոշմամբ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր:

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի գիտելիքների միավորային ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը կարող է իրականացվել ըստ իրենց անհատական ուսուցման պլանի՝ 10 միավորային սանդղակով:

Ըստ էության, հանրակրթության նոր չափորոշչով նախատեսվում է պահպանել միավորային գնահատումը:

«Անբավարար» գնահատական չի լինելու, հետևաբար, կվերանաստվյալ դասարանի ուսումնական ծրագիրը կրկնելու («երկտարեցիության») իրավական պահանջը: Հանրակրթական ուսումնական հաստատությունները պետք է ավելի մեծ աշխատանք կատարեն ցածր գնահատականներ ունեցող սովորողների հետ՝ կիրառելով կրթություն որակի բարձրացմանը նպաստող գործիքակազմ: Հակառակ դեպքում կստացվի, որ ընդամենը վերացվում է «երկտարեցիություն» երևույթը:

Օգտագործված աղբյուրներ

1. Հանրակրթության պետական կրթակարգ, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829#>
2. Հանրակրթության պետական չափորոշիչ, <https://www.arlis.am/>
3. Исаева Е. В., Система оценивания в школах разных стран, <https://znanio.ru/media/issledovatelskaya-rabota-sistema-otsenivaniya-v-shkolah-raznyh-stran-2528690>
4. Амонашвили Ш. А., Основы гуманной педагогики. Книга 4. Об оценках, ООО «Амрита», 2012 г.

<<Հանրակրթություն. գնահատում և
թեստավորում>>
տեղեկատվական - վերլուծական
հանդեսում հոդվածներ
տպագրելու կարգը

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսը հրապարակում է գնահատման և թեստավորման հիմնախնդիրներին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ:

Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն (ընդունվում են նաև ռուսերեն և անգլերեն), մեկ օրինակով, համակարգչային շարվածքով (Microsoft Word ծրագրով, Sylfaen տառատեսակով և 12 տառաչափով):

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

Օգտագործված գրականության հղումները հոդվածի տեքստում տրվում են քառակուսի փակագծերում, եթե մեջբերում է կատարվում, ապա նշվում է համապատասխան էջը, օրինակ՝ [12, էջ 23]:

Գրականության ցանկը բերվում է հոդվածի վերջում:

Խմբագրություն ներկայացված նյութերը գրախոսվում են:

Խմբագրությունը հրապարակվող հոդվածների բնագրերը հեղինակներին չի վերադարձնում:

Յուրաքանչյուր հեղինակ խմբագրությունից անվճար կարող է ստանալ ամսագրի 2 օրինակ:

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղումներ:

Դպրոցներին անվճար առաքվում է մեկ օրինակ, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցական գրադարանում:

Բովանդակություն

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2021 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների 4

2020-2021 ուսումնական տարվա 12-րդ դասարանում սովորողների պետական ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն 58

2020-2021 ուսումնական տարվա 9-րդ դասարանում սովորողների ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն 81

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Կ. ՆԱՍԻԲՅԱՆ. «Ատեստավորումը հրաշալի հնարավորություն է ուսուցիչների համար»..... 119

ԹԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Թեստավորումը որպես գնահատման ձև 123

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Գիտելիքի գնահատման համակարգերը տարբեր երկրներում...139

Տպագրված է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 1300 օրինակ, 154 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
www.atc.am